

ԽԱԹԱՐՎՈՂ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ...

Ի՞նչ են անում լավ մարդիկ երեխաների հանդեպ



Ի՞նչ են անում վատ մարդիկ երեխաների հանդեպ



Երեխաների թրաֆիքինգը և շահագործումը Հայաստանում.

ուսումնասիրություն թիրախ խմբերի երեխաների
և հանրային իրազեկվածության վերաբերյալ

Ձեկույց

(Չորրորդ, լրամշակված տարբերակ)

Ներկայացված է Մ. Անտոնյանի կողմից

Երեխաների պաշտպանության փորձագետ, ս.գ.թ.

Խոսք երախտիքի

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա ՀԿ-ի խորհրդի անունից խորին շնորհակալություն են հայտնում «People in Need» կազմակերպության հայաստանյան գրասենյակի անձնակազմին, անձամբ Սիլադա Կիլիանովային, Տաթևիկ Բեջանյանին, ինչպես նաև «Հույս և օգնություն», «Հայ օգնության միություն» գործընկեր կազմակերպությունների ղեկավարներին՝ սույն հետազոտության իրագործմանը ըստ ամենայնի աջակցելու, իսկ Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի անձնակազմին՝ հետազոտության ընթացքում բացահայտված երեխաների դժվարին իրավիճակներին «Թեժ գիծ» ծառայության միջոցով արագ արձագանքելու համար: Չեկույցի հեղինակները երախտապարտ են տիկ. Չյունիկ Աղաջանյանին և «Հայաստանում թրաֆիքինգի դեմ պայքարի» միջգերատեսչական հանձնաժողովի բոլոր այն անդամներին, ովքեր իրենց խորհուրդներով և փորձագիտական իմացությամբ աջակցել են հետազոտական աշխատանքներին: Խորին շնորհակալություն հարցմանը մասնակցած բոլոր փորձագետներին և երեխաների հետ աշխատող մասնագետներին: Հատուկ շնորհակալություն Երևանի, Արարատի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու մարզպետարանների երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների ղեկավարներին և աշխատակազմին՝ ֆոկուս խմբերի կազմակերպմանը մեծապես աջակցելու համար, ինչպես նաև Գավառի, Երևանի «Չատիկ», Վանաձորի, Երևանի՝ Մարի Իզմիրյանի անվան մանկատների, Վարդաշենի, Նուբարաշենի հատուկ կրթահամալիրների, Երևանի թիվ 1, թիվ 2, Կապանի խնամքի ու պաշտպանության կենտրոնների, նշված մարզերից հետազոտության մեջ ընդգրկված հանրակրթական դպրոցների տնօրեններին՝ համագործակցության համար:

Գոհունակություն ենք հայտնում ԱՍՀՆ-ի Թրաֆիքինգի դեմ պայքարի ռեսուրս կենտրոնի, ԵԱՀԿ, ԱՄԿ, ՍՄԿ, գրասենյակների անձնակազմին՝ տրամադրած արժեքավոր գրականության, իսկ «People in Need» կազմակերպության Չեխիայի գրասենյակի փորձագետներին՝ մեթոդական բնույթի աջակցության համար:

Երախտապարտ ենք զեկույցի կազմման աշխատանքներում անգնահատելի ներդրում կատարած փորձագետներին՝ Դավիթ Թումասյան (իրավական վերլուծություն), Աննա Աբգարյան, Ռամոնա Կտակյան (փաստաթղթերի բովանդակային վերլուծություն), Մարիա Չապլավսկայա, մ. գ. թ. դոցենտ (տվյալների մաթեմատիկական մշակում), Մարգարիտա Տեր Հովհաննիսյան, Մանանե Պետրոսյան, Վահե Գևորգյան (տեխնիկական աջակցություն) և հետազոտությանը մասնակցած բոլոր հարցազրույցավարներին: Հատուկ ջերմությամբ շնորհակալություն են հայտնում Հասմիկ Առաքելյանին:

Հուսով ենք, որ սույն զեկույցն իր նպաստը կբերի Հայաստանում երեխաների թրաֆիքինգի երևույթի դեմ պայքարի կազմակերպման հույժ կարևոր գործին:

Միրա Անտոնյան, ՀԿ-ի նախագահ

Չեկույցի կազմման մեթոդաբանական սխեմա

(տես հավելվածում)

Բովանդակություն

Հապավումներ.....1

Հիմնական հասկացություններ.....2

Նախաբան.....4

Ձեկույցի համառոտ ամփոփում.....6

Ձեկույցի շրջանակը և մեթոդաբանություն12

Գլուխ I Երեխաների թրաֆիքինգի երևույթի սոցիալական և իրավական համատեքստը Հայաստանում. փաստաթղթերի վերլուծություն.....16

1.1 Հայաստանում երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական-օրենսդրական ռեսուրսների վերլուծությունը16

1.2 Հայաստանում իրագործված ուսումնասիրությունների և որոշ այլ փաստաթղթերի անդրադարձը երեխաների թրաֆիքինգի երևույթին.....26

1.3 Երեխաների թրաֆիքինգի երևույթի լուսաբանումը (էլեկտրոնային և տպագիր մամուլ).....32

Գլուխ II Երեխաների թրաֆիքինգը՝ թիրախ խմբերի իրազեկվածության համատեքստում. քանակական հետազոտության տվյալների վերլուծություն.....43

2.1 Իրազեկվածություն և աղբյուրներ.....43

2.2 Դրսևորումներ և հանդիպած իրավիճակներ52

2.3 Ընկալում և վերաբերմունք.....60

2.4 Խոցելիություն և ճկունություն.....72

2.5 Պայքար և պաշտպանություն.....80

Գլուխ III Երեխաների թրաֆիքինգի երևույթի նկարագիրը և դեմ պայքարի ռեսուրսներն ու բացերը83

3.1 Երեխաների թրաֆիքինգի երևույթի նկարագիրը (որակական հետազոտության տվյալների ամփոփում).....83

3.2 Երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի առկա ռեսուրսները.....91

Եզրակացություններ և առաջարկություններ.....107

Հավելվածներ.....115

Գծապատկերների և աղյուսակների ցանկ

Գծ.1	Առանձին հրապարակումների բաշխումն ըստ լրատվամիջոցների.....	32
Գծ.2	Հայաստանի առնչությունը (թրաֆիքինգի առումով) այլ երկրների հետ.....	32
Գծ.3	Հայաստանի դերը՝ ըստ լրատվամիջոցների.....	33
Գծ.4	Տնային տնտեսություններում հարցվածների և երեխաների իրազեկվածության մակարդակը.....	44
Գծ.5	Հարցվողների անտեղյակության աստիճանը ըստ մարզերի.....	44
Գծ. 6	Իրազեկվածության մակարդակը ըստ հաստատության տիպի.....	46
Գծ. 7	Երեխաների տեղեկացվածության մակարդակը՝ ըստ սեռի.....	46
Գծ.8	Երեխաների տեղեկացվածության մակարդակի կապը հաստատությունում գտնվելու տևողության հետ.....	47
Գծ.9	Երեխաների իրազեկվածության մակարդակի և նրանց ընտանիքների բարեկեցության մակարդակի սուբյեկտիվ գնահատականի միջև առնչությունը.....	48
Գծ. 10	Հարցված չափահասների կրթական միջին մակարդակի և իրազեկվածության մակարդակի միջև կապը.....	48
Գծ.11	Երեխաների իրազեկվածությունը ըստ դասարանների.....	48
Գծ. 12	Երեխաների տեղեկացվածությունը անցանկալի իրավիճակների տեսակներին (երբևէ լսե՞լ եք).....	50
Գծ.13	Երեխաների հարաբերվելը վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ.....	54
Գծ.14	Վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ առնչված լինելը (բաշխումն ըստ հաստատության տիպի).....	54
Գծ.15	Երեխաների բախվելը թրաֆիքինգի դրսևորումների հետ.....	55
Գծ.16	Երեխաների թրաֆիքինգի ենթարկվելու երևույթի կոնկրետ դեպքերի հետ ծանոթ լինելը (բնակչություն).....	56
Գծ.17	Ծանոթ իրավիճակների տեսակները (բնակչություն).....	57
Գծ. 18	Շահագործված երեխայի տարիքը.....	58
Գծ. 19	Թրաֆիքինգի ընկալումն ըստ մեծերի.....	60
Գծ. 20	Թրաֆիքինգ» համարված իրավիճակները ըստ երեխաների.....	61
Գծ.21	Թրաֆիքինգի առումով առավել խոցելի երեխաների խմբերը, ըստ երեխաների.....	68
Գծ. 22	Անհանգստության մակարդակը, բնակչություն.....	72
Գծ. 23	Երեխաների պատրաստակամությունը աշխատելու տարբեր անբարենպաստ պայմաններում.....	73
Գծ. 24	Պայմանների տարբերակները (բնակչություն).....	74
Գծ. 25	Ինչպիսի՞ք քայլերի կդիմի, եթե առնչվի երևույթի հետ. (բնակչության).....	75
Գծ. 26	Ինչպիսի՞ք քայլերի կդիմի, եթե ընկերն առնչվի երևույթի հետ (երեխաների պատասխանները).....	75
Գծ. 27	Փաստաթղթերը վստահելու պատրաստակամությունը (երեխաներ.....	76
Գծ. 28	Երեխաների պատասխան քայլերը հնարավոր շահագործման դեպքում.....	77
Գծ. 29	Թրաֆիքինգի վերաբերյալ գիտելիքն ավելացնել ցանկացողների բաշխումն ըստ մարզերի.....	80
Գծ. 30	Իրազեկվել ցանկացողն բաշխումն ըստ բնակավայրի (բնակչություն).....	81
Աղյուսակ 1.	Հրապարակումների տեղեկատվության աղբյուրները (լրատվամիջոցներ).....	34
Աղյուսակ 2.	Երևույթի որակավորումը ըստ լրատվամիջոցների.....	34
Աղյուսակ 3.	Տեղեկատվության աղբյուրը	49
Աղյուսակ 4.	Երեխաների պատասխանները ըստ իրենց ծանոթ դեպքերի թվի և շահագործման տիպի.....	56
Աղյուսակ 5.	Ծանոթ դեպքերը Ռ ^o մ հետ է տեղի ունեցել (մեծեր).....	57
Աղյուսակ 6.	Ծնողների ունեցած պարտքի դիմաց աշխատելու նպատակով երեխաների ներգրավման միջոցները ըստ երեխաների	69
Աղյուսակ 7.	Անհանգստության մակարդակն ըստ մարզերի (բնակչություն).....	73
Աղյուսակ 8.	Գիտելիքների վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականը (երեխաներ).....	76

Աղյուսակ 9. Պայքարի միջոցները (երեխաներ).....80

Հավելվածների ցանկ

Գեաքերի նկարագրություններ և երեխաների վկայություններ.....115

Գծապատկերներ և աղյուսակներ.....118

Գծ.Հ1. Բնակչության իրազեկվածության մակարդակն ըստ մարզերի..... 118

Գծ. Հ2. Երեխաների իրազեկվածության մակարդակը ըստ մարզերի`.....119

Գծ. Հ3. Մեծահասակների իրազեկվածության մակարդակը ըստ բնակավայրի տիպի 119

Գծ. Հ 4 Վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ ծանոթ երեխաների բաշխումը ըստ սեռի120

Գծ. Հ 5 Հատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ ծանոթ երեխաների բաշխումը ըստ դասարանների.....120

Գծ. Հ 6 Վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ ծանոթ երեխաների բաշխումը ըստ ընտանիքի բարեկեցության մակարդակի..... 121

Գծ. Հ 7. Երեխաների ընտանիքների բարեկեցության մակարդակը ըստ -հաստատության տիպի... 122

Աղ. Հ 1. Ըահագործման տեսակները` ըստ բնակչության պատկերացումների.....122

Աղ. Հ 2. Ըահագործման դրսևորումների բնորոշումն ըստ երեխաների.....123

Աղ. Հ3. Լրացուցիչ ճշտումների ենթակա պայմանները ըստ երեխաների.....124

Աղ. Հ4. Մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով երեխաների ներգրավման միջոցները ըստ երեխաների125

Աղ. Հ5. Գատողությունների աղյուսակ.....126

Աղ. Հ 6. Երեխաների/չրջապատի վերաբերմունքը շահագործման տարբեր իրավիճակների մեջ հայտնված երեխաների հանդեպ (երեխաների տեսանկյունից).....130

- Որոշ առաջարկություններ իրազեկման աշխատանքների կազմակերպման առնչությամբ127
- Թրաֆիկինգի տեսանկյունից երեխաների խոցելության տրամաբանական հենքը (ըստ հետազոտության.....128
- Երեխաների թրաֆիկինգի «Գործոնների քարտեզ»-ը ըստ հետազոտության.....129
- Ֆոկուս խմբերին մասնակիցեր.....130
- Փորձագետներ.....131
- Երեխաների նկարներ.....132
- Հարցաթերթ.....133

Օգտագործված հասպալումներ

ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի միացյալ նահանգներ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության
ԵԻԿ	Երեխաների իրավունքների կոնվենցիա
ԵԻՊԲ	Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԶԼՄ	Զանգվածային լրատվական միջոցներ
ԽՀ	Խնամակալության հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՕՄ	Հայ օգնության միություն
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԱԷ	Միացյալ արաբական էմիրություններ
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԿՆ	Տարածքային կառավարման նախարարություն
ՔՕ	Քրեական Օրենսգիրք

Հիմնական հասկացություններ

Մարդկանց շահագործում (թրաֆիքինգ). Միավորված Ազգերի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան (2000թ.) կից՝ ՄԱԿ-ի «Մարդկանց, հատկապես՝ կանանց և երեխաների շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրության համաձայն, «թրաֆիքինգ»-ը նշանակում է՝ շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ ուժի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, խոցելի վիճակի հետ կապված գերակա դիրքի չարաշահմամբ, կամ մեկ այլ անձի նկատմամբ հսկողություն իրականացնող անձի համաձայնությունը ստանալու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով:

Շահագործումը ներառում է առնվազն հետևյալը. այլ անձանց պոռնկության կամ սեռական այլ շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը հավասարագոր վիճակի հասցնելը կամ կախյալ վիճակի մեջ դնելը, կամ մարդու օրգանները վերցնելը, Հոդված 3 (ա):

Շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը «թրաֆիքինգ» է համարվում, անգամ եթե այն չի ներառում սույն հոդվածի (ա) ենթապարբերությամբ սահմանված որևէ միջոց, Հոդված 3 (գ):

«Երեխա» տերմինը պետք է նշանակի տասնութ տարեկանը չբոլորած ցանկացած անձ, Հոդված 3 (դ)

«Երեխաների թրաֆիկինգ» նշանակում է ցանկացած գործողություն կամ գործարք, որով 18 տարին չլրացած անձը անձի կամ մի խումբ անձանց կողմից հավաքագրվում, տեղափոխվում, հանձնվում, թաքցվում կամ ստացվում է, ինչպես նաև դրվում կամ պահվում է շահագործման վիճակի մեջ վճարի կամ պարգևատրման միջոցների դիմաց:

Սեռական շահագործումը վերաբերվում է և սեռական ծառայությունների կոմերցիոն շահագործմանը (մարմնավաճառություն և պոռնոգրաֆիական արտադրություն), և այլ նման իրավիճակների: “Այլոց մարմնավաճառության շահագործումը” վերաբերվում է այն դեպքերին, երբ կավատը կամ շահագործողը ամբողջությամբ կամ մասամբ իրեն է վերցնում գումարը, որը տալիս է հաճախորդը սեռական հարաբերության համար: Երևույթը բնորոշվում է որպես սեռական շահագործում անկախ այն բանից, թե հասել է արդյոք երեխան սեռական հասունության կամ այն տարիքի, երբ սեռական հարաբերությունները տվյալ երկրում թույլատրելի են, ինչպես նաև 18 տարեկանից փոքր անձի թրաֆիկինգի ենթարկված լինելու վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի չի առնվում, թե տվել է արդյոք 18 տարեկանից փոքր անձը, օրինակ սեռական ռոբոտում աշխատելու իր համաձայնությունը: «Սեռական շահագործման» մյուս միջոցները հստակ սահմանված չեն:

«Երեխայի մարմնավաճառություն» նշանակում է երեխայի օգտագործում սեռական գործունեության համար՝ վճարի կամ պարգևատրման միջոցների դիմաց:

«Երեխայի պոռնոգրաֆիա» նշանակում է իրական կամ նմանակված սեռական գործունեության մեջ ներգրավված երեխայի գովազդում ցանկացած միջոցներով կամ երեխայի սեռական մասերի ներկայացում սեռական նպատակների համար:

Հարկադիր աշխատանք¹ ի կամ ծառայությունները դա սպառնալիքների կամ ուժի գործադրման, ստրկություն կամ համանման գործելակերպով «անազատ կացության» պայմաններում աշխատանքն է: ՄԱԿ-ի կոնվենցիային կից «ստրկության, ստրկավաճառության և համանման գործելակերպի վերացման մասին» կոնվենցիան (1956թ.) արգելում է «ստրկական կարգավիճակի» տարբեր ձևերը, հատկապես «պարտքային կախվածությունը»: Գաղթող երեխաները և նրանց ընտանիքները հաճախ

¹ ՄԱԿ-ի Կոնվենցիան (No, 29), որն ընդունվել է 1930թ.ին

փոխառություն են վերցնում իրենց ճամփորդական ծախսերը վճարելու համար: Շահագործողները վաճառքի գոհ դարձած շատ երեխաների ասում են, որ իրենք պետք է աշխատեն, մինչև պարտքն ամբողջությամբ վճարեն այն մարդուն, որը ծախսեր է կատարել իրենց փոխադրելու համար: Այլ դեպքերում տնից գնացող երեխայի ծնողները ընդունում են գումարը, որպես կանխավճար երեխայի ապագա աշխատանքի համար, և այդ կանխավճարը կապում է երեխային իր իսկ շահագործողի հետ:

Կոմերցիոն որդեգրում, որը ենթադրում է «անօրինական շահ»՝ միջերկրյա որդեգրման կազմակերպման համար: Հասագայի կոնվենցիա թիվ 33(հոդվ. 32.1):

Իրազեկվածություն, իրազեկվածության մակարդակ. հարցվածների՝ երեխաների թրաֆիկինգի մասին լսած լինելը: Առանձնացվել են իրազեկվածության 3 մակարդակներ.

1. «թրաֆիքինգ» բառին իրազեկ լինելը
2. թրաֆիքինգի դրսևորման ձևերին իրազեկ լինելը, առանց «թրաֆիքինգ» տերմինի պարոպաիդի իմացության
3. կոնկրետ դեպքերի հետ ծանոթ լինելը

Նախաբան

Սույն հետազոտությունը «People in Need» կազմակերպության կողմից իրագործվող «Տեղեկատվության արդյունավետության բարձրացում և համապատասխան ցանցերի ստեղծման միջոցով ՀՀ-ում երեխաների թրաֆիքինգի կանխարգելման համախմբված և հզորացված համակարգի ստեղծում» ծրագրի բաղադրիչն է:

Երեխաների թրաֆիքինգը, որպես թրաֆիքինգի դրսևորման յուրահատուկ ձև, Հայաստանի Հանրապետությունում ուշադրության առարկա է դարձել միայն վերջին տարիների ընթացքում: 2002 թ-ից սկսած, երբ ստեղծվել է թրաֆիքինգի հարցերով միջգերատեսչական խորհրդակցական մարմին, Հայաստանում գրանցվել է մեծ առաջընթաց թրաֆիքինգի երևույթի դեմ պայքարի ասպարեզում:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է երեխաների թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ երեխաների և ազգաբնակչության իրազեկվածությունը, դրա ընկալումը և ըստ այդմ, երևույթից պաշտպանվելու միջոցների վերաբերյալ իմացությունը՝ օրենսդրական-իրավական և սոցիալական պրակտիկայի համատեքստում:

Հետազոտությունը իրականացվել է 2009թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Դրա շրջանակներում երեխաների թիրախ խմբերը երկուսն են: Առաջին խումբը ներառում է քաղաքային և գյուղական հանրակրթական դպրոցների երեխաներին, իսկ երկրորդ խումբը՝ սոցիալական ու դաստիարակչական նշանակության 5 տարբեր տիպի հաստատություններում գտնվող 5-18 տարեկան երեխաներին: Հետազոտության երրորդ թիրախ խումբը ընդհանուր բնակչությունն է:

Ծրագրի առաջարկը գրելու հիմնական շարժառիթը Երևանում և Հայաստանի այլ բնակավայրերում (Գյումրի, Վանաձոր և այլն), փողոցի իրավիճակում հայտնված բազմաթիվ երեխաների ճակատագրի հանդեպ թրաֆիքինգի տեսանկյունից մտահոգությունն էր: Ասպարեզում առկա նյութերի² ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում «փողոցի երեխաներ» երևույթի ծավալը և խորությունը անընդհատ փոփոխվել է: Երեխաների՝ «փողոցի իրավիճակներում» հայտնվելու երևույթը մեծ չափերի է հասել 2000-ականներին՝ դրսևորվելով նախ մուրացկանության ձևով (որպես սովի և աղքատության դեմ պայքարի պարզ մեխանիզմ), ապա աստիճանաբար նվազել չափերով, սակայն խորացել ու բարդացել բովանդակությամբ (երեխաների աշխատանք, մանկական մարմնավաճառություն և այլն): Հարկ է նշել, որ ի սկզբանե, Հայաստանում «փողոցի երեխաներ» տերմինը կարիք կար

² «Բժիշկներ առանց սահմանների» ֆրանսիական կազմակերպության 1998-2004թ.թ. Հայաստանում առաքելության հաշվետվությունները, ՀՕՖ-ի երեխաների կենտրոնի 2000-2009թ.թ. տարեկան հաշվետվությունները, «World Vision» կազմակերպության 2005-2008թ.թ.՝ «Փողոցում գտնվող երեխաների իրավիճակի վերլուծություն», պաշտոնական աղբյուրների, մասնավորապես Ոստիկանության, ինչպես նաև լրագրողական տվյալները:

կիրառել իր դասական նշանակության որոշակի վերապահումներով, քանի որ երեխաները հիմնականում տուն, ընտանիք, այլ խոսքով՝ «փողոցի գործունեությունը» ավարտելուց հետո վերադառնալու տեղ ունեին:

Ըստ էության, ծրագրին նախորդած շրջանում (մինչ 2009թ.) Հայաստանի նշված վայրերում դեռ կարելի էր հանդիպել փողոցի իրավիճակում հայտնված երեխաների (թեև փոքրաթիվ): Հետաքրքրական է, որ հետազոտության իրագործման ընթացքում նման երեխաներ չեն հայտնաբերվել, թեև այդպիսի ուղղակի նպատակ այս ուսումնասիրությունը չի հետապնդել: Անշուշտ, մտահոգությունը, որ նրանք կարող են լինել, չի վերացել³: Միևնույն ժամանակ հետազոտության ընթացքում բացահայտվեցին բազմաթիվ իրավիճակներ, որոնք վկայում են երեխաների կենսագրության մեջ տեղ գտած փողոցի կյանքի հետ կապված դրվագների մասին:

Հետազոտության արդյունքները կարող են արժեքավոր նպաստ բերել երեխաների թրաֆիքինգի երևույթի դեմ պայքարի քաղաքականության մշակմանը՝ ռազմավարական և մարտավարական մակարդակներում:

³ Կարելի է ենթադրել, որ երևույթը նորովի դրսևորումներ է ընդունել, որը դեռևս ակնառու չէ: Ոստիկանության տվյալներով, 2009թ. դրությամբ հանրապետությունում հաշվառված են մոտ 30 «Քափառող, մուրացիկ երեխաներ»: ՀՕՖ-ի երեխաների կենտրոնի տվյալներով, վերջին մեկ տարվա ընթացքում Կենտրոն է ուղղորդվել միայն երկու երեխա՝ մուրացկանությամբ զբաղվելու առնչությամբ:

Համառոտ ամփոփում

Երևույթի ընդհանուր պատկերը. Փաստաթղթերից վերլուծությունից և ուսումնասիրության դաշտային տվյալներից պարզ դարձավ, որ Հայաստանում երեխաների թրաֆիկինգի վերաբերյալ չկա հստակ վիճակագրություն, միևնույն ժամանակ հաստատվեց երևույթի առկայությունը (հատկապես ներքին թրաֆիքինգի): Չափերի մասին կարծիքները շատ իրարամերժ էին: Ըստ պաշտոնական տվյալների, դրանք 3-ն են, մինչդեռ պրակտիկայում հանդիպող, սակայն, նույնանականացման չենթարկված դեպքերի վերաբերյալ վկայությունների թիվը անհամեմատ ավելի մեծ է:

Իրազեկվածություն. Հստակ վիճակագրական տվյալների պակասը և երևույթի թաքնված բնույթը արտացոլվել է իրազեկվածության վերաբերյալ տվյալներում. տնային տնտեսություններում հարցվածների 86,7% լսել էր մարդկանց/երեխաների թրաֆիքինգի ենթարկելու երևույթի մասին, մինչդեռ երեխաների միայն 51.5%: Հանրակրթության երեխաների համեմատ, խնամքի կենտրոնի երեխաները ավելի տեղեկացված էին: Մեծերի իրազեկման հիմնական աղբյուրներն են՝ հեռուստատեսություն, ընկերներ/ծանոթներ, մամուլ, ֆիլմեր, այն դեպքում, երբ երեխաների համար դա հեռուստատեսությունն է, ընկերները կամ «բերանից-բերան» տարբերակը, սպա դպրոցը:

Երեխաները ավելի շատ տեղեկացված են թրաֆիքինգի/շահագործման տարբեր դրսևորումների մասին, քան կոնկրետ թրաֆիքինգի տերմինին: Մեծերի դեպքում պատկերը հակառակն է:

Դրսևորման տեսակներ. Ազգաբնակչությունը առավել տեղեկացված է աշխատանքային շահագործման (հարկադրական աշխատանք) և սեռական շահագործման տեսակներին, իսկ երեխաները՝ մուրացկանության:

Ընկալում. Երեխաները, չնայած որ տեղեկացված էին ստիպողական մուրացկանության, հարկադրական աշխատանքի տարբերակներին, սակայն, ի տարբերություն ազգաբնակչության թրաֆիկից համարել են «առևանգումը», թմրանյութերի տեղափոխման, վաճառքի մեջ ներգրավվելը, պոռնոգրաֆիական նպատակներով նկարահանվելը, բայց ոչ մուրացկանությունը: Մասնագետները քաջատեղյակ են շահագործման տարաբնույթ տեսակներին, սակայն, ինչպես իրենք են փաստում, դժվարանում են զանազանել կոնկրետ թրաֆիքինգի դեպքերը: Նույն պատկերն է դիտարկվում նաև լուսաբանման հոդվածներում՝ մոտ 21 տարբեր անվանում է տրված երևույթին:

Առնչություններ (կոնկրետ իրավիճակների հետ ծանոթ լինելը). Երևույթի դրսևորումների հետ բախվել են հարցված մեծերի միայն 1.8%-ը (22 դեպք), իսկ երեխաների՝ 4.9%-ը (39 դեպք)

Երեխաները հանդիպել են թրաֆիկինգի իրավիճակ հիշեցնող կամ դրան նման առնվազն 4 տեսակների հետ՝ հարկադրական աշխատանքի պարտադրանք, ոչ օրինական գործողությունների պարտադրանք և «հարկահավաքություն» սեռական բռնություններ: Մեծերը առավելապես ծանոթ են երեխայի հարկադրական աշխատանքի, հարկադիր մարմնավաճառության, երեխայի գողության և ստիպողական ամուսնության դրսևորումների հետ:

Խոցելիության գործոններ. Ներկայացված դեպքերից դատելով, թրաֆիկինգի տեսանկյունից երեխաների առավել խոցելի տարիքը տատանվում է 14-17 տ-ի միջև: Աղքատությունը, կրթության ցածր մակարդակը, բնակարանային անապահով պայմանները բարձրացնում են երևույթին բախվելու հավանականությունը: Միևնույն ժամանակ, երեխաների վարքը պայմանավորող գործոնների ազդեցությունը ոչ միանշանակ է:

Ներգրավման միջոցների/ուղիների իմացությունը և վերաբերմունքը. Երեխաների մեծ մասը հակված է կարծելու, որ երեխաները շահագործման իրավիճակներում ավելի շատ հայտնվում են ստիպողաբար, խաբեությամբ և դրան նմանվող միջոցներով և չնայած դրան, այդ իմացությունը գրեթե ազդեցություն չունի նման պայմաններում հայտնվածների հանդեպ երեխաների վերաբերմունքի վրա: Ավելի զգալի է կարծրատիպերի ազդեցությունը (խուսափում, մերժում, անհանդուրժողականություն): Ի լրումն, երեխաները գտնում են, որ շրջապատը զոհին կարող է կրկին ներքաշել նմանատիպ իրավիճակների մեջ:

Ռիսկեր, անհանգստություններ պայքար. Բնակչության շրջանում որքան բարձր է երևույթի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը, այնքան մեծ է անհանգստությունը, որ իրենց երեխաներին կարող է սպառնալ բախումը շահագործման տարբեր իրավիճակների հետ: Երևույթի հետ բախվելու պարագայում հարցվածների կեսից ավելին (54.8%) պատրաստ է դիմել ոստիկանության միջամտությանը: Կարելի է ենթադրել, որ հանցագործության լրջությունը և դրանից պաշտպանվելու բարդությունը առնվազն հարցվածների այդ խմբի կողմից գիտակցված է, մինչդեռ մյուս կեսի մոտ՝ ոչ: Գատելով «դիմելու» վերաբերյալ տվյալներից, դեռևս բարձր չէ մասնագիտացված ծառայությունների ու հասարակական կազմակերպությունների մասին իրազեկվածության մակարդակը: Հատկապես փոքր է «Թեժ գիծ» դիմողների չափաբաժինը, ինչը, ըստ էության, մտահոգության առարկա է:

Գիտելիքներ. Հատուկ դպրոցների երեխաների մեծամասնությունը համոզված է, որ «լիովին տիրապետում է», ունի այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են օգնելու որևէ երեխայի, եթե վերջինս հայտնվի նմանատիպ իրավիճակում, մինչդեռ հանրակրթության երեխաների մեծ մասը վստահ չէ: Հետաքրքրական է, որ երեխաների շրջանում ավելի շատ իրենց իրազեկ համարողները ավելի անվստահ են պաշտպանության ուղիների վերաբերյալ իրենց

գիտելիքներին: Անկախ գիտելիքների վերաբերյալ այդ սուբյեկտիվ գնահատականներից, երեխաների կողմից զգուշավորություն ու շրջահայաց վարք դրսևորելու հնարավորությունները լուրջ մտահոգության առարկա են՝ դատելով հետազոտության տվյալներից. երեխաները կամովին կերպով կարող են հայտնվել աշխատանքի անբարենպաստ, այդ թվում վտանգավոր և հարկադրական պայմանների ռիսկերի ներքո:

Հետաքրքրվածությունը խնդրի վերաբերյալ. Հարցված մեծերի երկու երրորդը հետաքրքրված է ստանալու լրացուցիչ տեղեկություններ, ընդ որում նախընտրում են, որ տեղեկությունները վերաբերեն դեպքերի հրապարակմանը, գոհերի վկայություններին, օրենքների լուսաբանմանը, իսկ մեկ երրորդը գերադասում է սեմինարների միջոցով սովորելու պաշտպանության միջոցները: Հետազոտությունը փաստեց, որ որքան տեղեկացվածության մակարդակը բարձր, այնքան ավելին իմանալու ցանկությունը՝ մեծ: Որպես պայքարի միջոց, ինչպես և մեծերը, երեխաները համարում են ուսուցումը, տեղեկացված լինելը, սակայն պակաս կարևոր չեն համարում մակրոմակարդակի խնդիրների կարգավորումը՝ ընտանիքների աղքատության հաղթահարումը, օրենքների խստացումը և հանցագործների պատժամիջոցների խստացումը, կարևոր է համարվել նաև կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպումը:

Երևույթի դեմ պայքարի ռեսուրսները

Օրենսդրական-ընթացակարգային. ՀՀ ազգային օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է միջազգային ակտերին, բայց կան որոշակի բացթողումներ, ինչպիսիք են, ստրկության հասկացության օրենսդրական սահմանման բացակայությունը, անօրինական որդեգրման համար քրեական պատասխանատվության բացակայությունը, քրեական դատավարության մասնակիցների համար (տուժող, վկա և այլն) պաշտպանության միջոցների կիրառման մեխանիզմների բացակայությունը, մասնավորապես քննության և դատավարության գործընթացում երեխային ուղեկցող մանկավարժի կամ խնամակալության մարմնի ներկայացուցչի կողմից իրենց դերի կատարման համար անհրաժեշտ կարողությունների պակասը:

Ընթացակարգային բացեր. ՀՀ-ում առկա է թրաֆիքինգի ենթարկված անձանց օգնելու իրավական բազան, սակայն այդ օգնությունը տրամադրելու համար անհրաժեշտ մեխանիզմները դեռևս պետք է մշակվեն, մասնավորապես,

- Ձոհերի սոցիալական պաշտպանությանն ուղղված ձևերը և չափերը օրենսդրական մակարդակում համապատասխանեցված չեն գոհերի կարիքներին՝ զբաղվածություն, գոհերին սոցիալական աջակցության տրամադրում, ինտեգրում և այլն:
- Ապաստարանների/կացարանների տրամադրման հարցում չկա պետական մոտեցում, աջակցություն: Այս բացը փորձում են լրացնել ՀԿ-երը, բայց դա բավարար չէ:
- Չկան թրաֆիքինգի գոհերի նույնականացման ազգային չափորշիչներ:

- Թրաֆիքինգի գոհերի հանդեպ մասնագետների վերաբերմունքը աղեկվատ չէ, հատկապես երեխաների դեպքում:
- Խիստ անբավարար է վերապատրաստված մասնագետների «ծածկույթը», մոտեցումները, կարողությունները:

Պայքարի արդյունավետության ներկա իրավիճակի վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև պատկան ատյաններին դիմելու մշակույթի պակասը, գոհերի ու նրանց ընտանիքների հոգեբանական խնդիրները: Որպես ընդհանուր գործոն նշվել է հասարակական արժեքների ներկա վիճակը և երևութի վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը:

Իրազեկման-լուսարանման խնդիրները. Դատելով թեմայի վերաբերյալ հրապարակումներից, ոչ միշտ է պահպանվում գոհերի տվյալների գաղտնիությունը, առկա է տերմինաբանական խառնաշփոթ, շեշտադրումների անհամաչափություն, տվյալների մակերեսայնություն, ինչպես նաև որոշ ենթատեքստեր, որոնք կարող են ապակողմնորոշել կամ ապամոբիլիզացնել:

Առաջարկություններ

Ընդհանուր բարոյական մթնոլորտի առողջացումը, արժեքային համակարգում ցանկալի դրական տեղաշարժերը, ասպարեզում դրական օրինակների խտության մեծացումը, երեխաների համար միջավայրը կդարձնի ավելի ապահով:

Երեխաների պաշտպանությունը թրաֆիկինգից հուսալի կարող է լինել այն դեպքում, եթե ջանքերը ուղղվում են երեխայի ճկունության գործոնների ակտիվացմանը՝ նրա սոցիալական հմտությունների զարգացման միջոցով. խնդիր, որը մասնագիտական շնորհք, գիտելիք և հմտություն է պահանջում:

Անհրաժեշտ է վավերացնել խնդրին առնչվող մի շարք լրացուցիչ միջազգային ակտերը նույնպես:

- Պրակտիկ առումով անհրաժեշտ է իրականացնել **պաշտպանության առավել արդյունավետ միջոցներ**
- ՀՀ-ում քրեորեն պատժելի դարձնել անօրինական որդեգրումը
- Անհրաժեշտ է նախատեսել թրաֆիքինգի գոհերի ուղղորդման առանձնահատկությունները՝ կապված նրանց անչափահասության հետ
- Անհրաժեշտ է ”Սոցիալական աջակցության մասին” ՀՀ օրենքում իրականացնել փոփոխություններ և լրացումներ՝ առավել ուշադրություն դարձնելով երեխաների իրավունքներին, ազատություններին և շահերին:
- Ելնելով երեխաների թրաֆիքինգի խնդրի բարդությունից, մոտեցումներից և գործողությունների համաձայնեցման անհրաժեշտությունից՝ ձևավորել երեխաների

թրաֆիքինգի ենթա-աշխատանքային խումբ (թեմատիկ), որի գործունեությունը ուղղված կլինի բոլոր 3 մակարդակների խնդիրների կարգավորման համար համապատասխան ռազմավարական ուղիների մշակմանը և ապա ռեսուրսների մոբիլիզացիային:

Մասնագետների, ծառայությունների ակտիվացում և մոբիլիզացիա

- Երեխայի պաշտպանության ոլորտում աշխատող մասնագետների կարողությունների զարգացման պահանջը ամրագրել ընթացակարգերով (պարտադիր նվազագույն վերապատրաստումներ տարեկան կտրվածքով), ներմուծել մասնագետների աշխատանքի որակի գնահատման չափորոշիչներ՝ հաշվի առնելով երեխաների ոլորտի զգայնությունը:
- Պատրաստել համանյաբային սոցիալական աշխատողներ, կամ վերազինել համայնքային ծառայողներին՝ ամրագրել նրանց աշխատանքային մանդատը, որպես երեխայի՝ ընտանիքի հետ աշխատող անմիջական օղակ:
- Կանոնավորապես վերապատրաստել ուսուցիչներին, դաստիարակներին, խնամողներին այնպես, որ նրանք ի վիճակի լինեն զարգացնելու երեխաների սոցիալական ճկունությունն ու հմտությունները:
- Յուրաքանչյուր դպրոցում ունենալ առնվազն մեկ սոցիալական աշխատող, կամ վերապատրաստել դպրոցի կազմակերպիչներին, որպես երեխայի հետ սոցիալական աշխատող, որը, համագործակցելով անչափահասների ոստիկանի, այլ մասնագետների հետ, վաղ, մասնագիտացված միջամտություն կիրականացնի կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխայի/ընտանիքի կյանքում:
- Յուրաքանչյուր մարզում ստեղծել մեթոդական օգնության և ճգնաժամի միջամտության մեկական ծառայություն, որը կօգնի տեղի մասնագետներին՝ առավել դժվար դեպքերը վարելու:

Խոցելի երիտասարդների/դեռահասների համար հիմնել կամ գործողներից առնվազն մեկը վերահարմարեցնել որպես վերականգնողական կենտրոն, քանի որ եղածները կարողություններ չունեն աշխատելու թրաֆիկինգի տեսանկյունից առավել խոցելի՝ մարմնավաճառությամբ զբաղվող, բռնությունների զոհ դարձած դեռահասների հետ:

Իրազեկում. ներկա փուլում, երբ առկա է հասկացությունների, սահմանումների տարըմբռնում և նույնականացման բարդություններ, ավելի արդյունավետ կլինի, եթե իրազեկման աշխատանքներում, երեխաներին իրազեկվի ընդհանրապես շահագործման դրսևորումների մասին և ոչ հատկապես թրաֆիքինգի:

- Ունենալ պետական ծրագիր, որն անհրաժեշտ է, որպեսզի պարտադրի հեռուստատեսություններին՝ լուսաբանել խնդիրը, այլ խոսքով, սոցիալական գովազդների խնդիրը դարձնել պետական հոգածության առարկա (Ռուսաստանի օրինակով):

- Երեխաներին իրազեկել իրենց մատչելի ձևերով և մեթոդներով, դպրոցներում տեսաֆիլմեր ցույց տալ, թեման ներառել դասագրքերի մեջ, իրազեկումը իրականացնել հոգեբանի կամ սոցիալական աշխատողի միջոցով, գործընթացները դարձնել շարունակական և կառավարելի:
- Հատուկ դասաժամ հատկացնել դպրոցներում. հոգեբանի կամ սոցիալական աշխատողի ուժերով, որոնք նաև անհրաժեշտ խորհրդատվություն կիրականացնեն՝ կոնկրետ ռիսկերի պարագայում:
- Երեխաների իրազեկումը համադրել նրանց ճկունության մեխանիզմների զարգացմանն ուղղված ծավալուն և խորքային աշխատանքների հետ:

Ձեկույցի շրջանակը և մեթոդաբանությունը

Սույն զեկույցը ամփոփում է Հայաստանում երեխաների թրաֆիքինգի իրավական, սոցիալական համատեքստի և երևույթի վերաբերյալ երեխաների ու բնակչության իրազեկվածության մակարդակի ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը:

Ձեկույցը, անդրադառնում է որոշ եզրակացությունների, որոնց հետազոտական խումբը հանգել է՝ Հայաստանում երեխաների թրաֆիքինգի համատեքստին առնչվող մի շարք փաստաթղթերի բովանդակային վերլուծության միջոցով, մասնավորապես, երևույթը կարգավորող իրավական-օրենսդրական բնույթի փաստաթղթերը, տպագիր և էլեկտրոնային մամուլում լույս տեսած, խնդրին առնչվող հոդվածներն ու սույն հետազոտությանը նախորդած ժամանակահատվածում Հայաստանում իրականացված մի շարք այլ հետազոտությունների հաշվետվությունները: Ուսումնասիրվել և հաշվի են առնվել նաև երեխաների հետ աշխատող մասնագետների և ոլորտի փորձագետների տեսակետները:

Ձեկույցը, այսպիսով, բաղկացած է 3 գլուխներից: Առաջին գլուխը նվիրված է երևույթի սոցիալական և իրավական համատեքստի վերլուծությանը: Երկրորդ գլուխը ներկայացնում է քանակական, իսկ երրորդ գլուխը՝ որակական հետազոտության տվյալների ամփոփումը: Ձեկույցն ամփոփվում է եզրակացություններով ու առաջարկություններով: Հավելվածներում տեղ են գտել լրացուցիչ տվյալներ և սոցիալական դեպքերի նկարագրություններ:

Որոշ սահմանափակումներ. հետազոտության նպատակը չէր բացահայտել թրաֆիքինգի դեպքեր և, ըստ էության, դա հետազոտության շրջանակներում լուծելի խնդիր չէր կարող լինել: Հետազոտության զեկույցում նշված դեպքերը՝ երեխաների և մասնագետների ներկայացրած իրավիճակները շահագործման տարբեր տեսակների մասին են վկայում: Այն հետաքրքրական տեղեկատվություն է (անգամ եթե դրանք թրաֆիքինգի դրսևորումներ չեն), հասկանալու երևույթի ընկալումը թիրախ խմբերում, որը հնարավորություն կտա ավելի շոշափելի դարձնելու իրազեկման համար ընտրվող նյութերը և աշխատանքները դարձնել հնարավորինս նպատակաուղղված:

Մյուս կողմից, մեջբերված իրավիճակները արժեքավոր են, քանի որ ուրվագծում են ընդհանուր առմամբ երեխաների շահագործման դրսևորման ձևերի որակական պատկերը, հատկապես որ այդ դրսևորման ձևերի մի մասը «թրաֆիքինգ-հարկադրական աշխատանք» սահմանագլխին են գտնվում:

Հարկ է նշել, որ հետազոտության մտահանգումների մեջ տեղ գտած դատողությունները հիմնված են մեծ մասամբ Հայաստանում հակաթրաֆիքինգային «հանրության»՝ Թրաֆիքինգի դեմ պայքարի աշխատանքային խմբի անդամների և երեխաների հետ աշխատող մասնագետների կարծիքների վրա: Երբեմն այդ կարծիքները տրամաբանորեն հակադիր բևեռներում էին: Փորձ է արվել հնարավորինս հավասարակշռել հակադիր դիրքորոշումները՝ վերլուծելով կարծիքների մեջ ծայրահեղությունների արտացոլման հիմքերը:

Այսպիսով, որակական տվյալների մեջ տեղ են գտել մասնագետների և երեխաների կողմից ներկայացված փաստերը: Առանց իրավունք վերապահելու հաստատելու կամ հերքելու այդ փաստերը՝ զեկույցում դրանք տեղ են գտել առավելապես հույս ունենալով լույս սփռել թրաֆիքինգի տեսանկյունից երեխաների ներկա իրավիճակին և տեղիք տալ համապատասխան խորհրդածությունների:

Ավելորդ չենք համարում նշել նաև, որ թե՛ բուն հետազոտության իրականացման, և թե՛ վերլուծության համար նախատեսված ժամկետները բավականին սուղ էին:

Մեթոդաբանությունը

Հետազոտության նպատակը երեխաների թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ Հայաստանում թիրախ խմբերի երեխաների և բնակչության իրազեկվածության մակարդակի ուսումնասիրությունն է (էկոլոգիական- համակարգային մոդելի համատեքստում):

Խնդիրները.

✚ Պարզել հասարակության, ինչպես նաև երեխաների իրազեկվածության մակարդակը երեխաների թրաֆիքինգի երևույթի՝ ընդհանրապես, և մասնավորապես՝ շահագործման տարբեր դրսևորումների վերաբերյալ:

✚ Նկարագրել թրաֆիքինգի երևույթի առումով բնակչության և կոնկրետ երեխաների թվում խոցելի խմբերը, նրանց խոցելիության/ճկունության գործոններն ու դրանց առանձնահատկությունները:

✚ Վերլուծել երեխաների պաշտպանության օրենսդրական-իրավական դաշտը՝ թրաֆիքինգի համատեքստում:

✚ Վերլուծել երեխաների թրաֆիքինգի երևույթի կանխարգելման, զոհերի հայտնաբերման, ուղղորդման, աջակցության տրամադրման գործող մեխանիզմները, դրանցում առկա բացերը:

✚ Նկարագրել էլեկտրոնային և տպագիր լրատվության մեջ թրաֆիքինգի և, մասնավորապես, երեխաների թրաֆիքինգի երևույթին անդրադարձը, և վերլուծել դրա ազդեցությունը բնակչության/երեխաների իրազեկվածության «որակի» վրա:

✚ Ուսումնասիրել և երկրորդային վերլուծության ենթարկել ոլորտում նախկինում իրականացված հետազոտությունների զեկույցները՝ նկարագրելու համար երևույթի ճանաչողության և դրա դեմ պայքարի գործընթացների համապատասխան զարգացումները:

Հետազոտության համար ելակետ է այն հանգամանքը, որ բռնության և շահագործման տեսակետից երեխաները խոցելի են, ըստ այդմ, նրանք կարիք ունեն օգնության: Երեխաների Իրավունքների Կոնվենցիայում ամրագրված է, որ այդ օգնությունը պետք է հաշվի առնի երեխայի կարծիքը և պատկերացումները:

Մյուս ելակետն այն է, որ երեխաները ոչ թե հասարակության անհանգստության օբյեկտ են, այլ մարդու իրավունքների սուբյեկտ: Այլ խոսքով, օգնելով երեխաներին, հասարակությունը ոչ թե այդպիսով իր բարությունն է դրսևորում, այլ իրականացնում է երեխաների իրավունքների իրացումը երաշխավորելու իր պարտականությունը:

Նկատի առնելով երեխաների թրաֆիքինգի և շահագործման այլ ձևերի դեմ պայքարելու համար գործնական, կոնկրետ տեղեկությունների անհրաժեշտությունը, իրականացվել է կիրառական (action-oriented research) հետազոտություն⁴: Գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ թրաֆիքինգը, որպես սոցիալական երևույթ, հանդես է գալիս մի շարք գործոնների համատեղ ազդեցության ներքո, մասնավորապես, *սոցիալական*՝ հանրային իրազեկվածություն, ընկալում, նորմեր, կարծրատիպեր, վերաբերմունք, սովորույթներ և ավանդույթներ, *տնտեսական*՝ աղքատություն, զբաղվածության ոչ արդյունավետ քաղաքականություն, կոռուպցիոն երևույթներ և *անհատական*՝ սեռ, տարիք, ընտանեկան պայմաններ, կրթություն, աշխարհընկալում և այլն:

Ռիսկի նշված գործոնները, առկա ուսումնասիրությունների մեջ, գլխավորապես դիտարկվում են առանձնացված՝ առանց որևէ կապի: Ելնելով էկոլոգիական-համակարգային մոդելջ, սույն հետազոտության մեջ փորձ է արվել երեխաների թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ երեխաների և բնակչության իրազեկվածության մակարդակի ուսումնասիրությունը իրականացնել ռիսկ և ճկունություն առաջ բերող մի շարք գործոնների փոխազդեցության դիտարկմամբ: Հետազոտության հեղինակների խումբը, մեթոդաբանությունը մշակելիս, ուսումնասիրելով համապատասխան մեթոդաբանական ուղեցույցները և խորհրդակցելով ոլորտում երկարամյա փորձառություն ունեցող մասնագետների հետ, հակված էր այն կարծիքին, որ եթե երևույթի վերաբերյալ երեխաների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրությունը կապվի «թրաֆիքինգ» տերմինը լսած լինելու հետ, ապա կստացվի մի պատկեր, որը կարող է տարբերվել դրա տարբեր դրսևորումներից (առանց «թրաֆիքինգ» բառի հատուկ գործածման) ծանոթ լինելու պատկերից: Նույնը վերաբերում է նաև մեծերին: Այսպիսով, առանձնացվել են թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկվածության երեք մակարդակներ՝

- իրազեկվածությունը ընդհանրապես թրաֆիքինգի երևույթի մասին (օգտագործելով տերմինը),

⁴ Այն տարբերվում է ակադեմիական հետազոտություններից, որի հիմնական նպատակն է հաստատել կամ հերքել որևէ հիպոթեզ: Կիրառական հետազոտությունները հավաքում են ինֆորմացիա, որպեսզի տրվի գործնական լուծումներ արդիական ճանաչված խնդիրներին:

- իրազեկվածությունը երևույթը նկարագրող տարբեր իրավիճակների (դրսևորումների) վերաբերյալ (առանց օգտագործելու տերմինը)
- երևույթի հետ առնչված (կոնկրետ դեպքերի հետ ծանոթ) լինելը

Սույն հետազոտությունն, այսպիսով, կապ է հաստատում այն գործոնների միջև, որոնք կարող են երեխային ռիսկի տակ դնել կամ հակառակը, օգնել նրան՝ լինելու «ճկուն»: Ըստ այդմ, մշակվել են առաջարկություններ, որոնց իրականացումը թույլ կտա, մի կողմից, զարգացնել թրաֆիքինգի հանդեպ երեխաների ճկունությունը/դիմադրողականությունը և, մյուս կողմից, բարձրացնել, ակտիվացնել երևույթի դեմ պայքարի միջոցների՝ ներառյալ բնակչության և երեխաների իրազեկման, արդյունավետությունը:

Հետազոտության համար կիրառվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդներ: Պատվիրատու կազմակերպության նախընտրությամբ, բնակչության իրազեկվածությունը ուսումնասիրվել է բոլոր մարզերում, իսկ երեխաների իրազեկվածությունը՝ 5 մարզերում:

Ընտրանք. Տնային տնտեսությունների ընտրանքի ծավալը կազմել է 1200: Հետազոտությունը իրականացվել է Հայաստանի Հանրապետության բոլոր 10 մարզերում և Երևանում: Բնակավայրերի քանակը՝ 80: Սահմանային սխալը չի գերազանցում 2,8%-ը՝ 0.95 վստահության հավանականության համար:

Երեխաների ընտրանքի ծավալը կազմել է 800: Ըստ աղքատություն, միգրացիա, գործազրկության մակարդակ, սահմանամերձ վայրեր, երեխաների խոցելի խմբերի առկայություն, երեխաներին ուղղված ծառայությունների առկայություն/բացակայություն չափանիշների, ընտրվել են հետևյալ մարզերը՝ Սյունիք, Լոռի, Արարատ, Գեղարքունիք և Երևան:

Գալրոցների ընտրությունը այդ մարզերում կայացել է տարածքային-վարչական չափանիշի հիման վրա (քաղաքային և գյուղական): Հաստատությունների ընտրությունը նույն մարզերում պայմանավորված է նրանց տիպերով (մանկատներ, հատուկ կրթական հաստատություններ, գիշերօթիկ դպրոցներ, խնամքի կենտրոններ, ցերեկային համայնքային կենտրոններ դժվար իրավիճակում գտնվող երեխաների համար, ժամանակավոր ապաստարան):

Քանակական հարցումներից բացի, իրականացվել են ֆոկուս խմբեր, փորձագիտական հարցումներ, ինչպես նաև դեպքերի ուսումնասիրություն: Կիրառվել է նաև «ուղեղների գրոհի» մեթոդը:

Գլուխ I

Երեխաների թրաֆիքինգի երևույթի սոցիալական և իրավական համատեքստը Հայաստանում. փաստաթղթերի վերլուծություն

1.1 Հայաստանում երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական-օրենսդրական ռեսուրսների վերլուծությունը

Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային և ազգային օրենսդրության շրջանակը. Թրաֆիքինգի դեմ պայքարը կարգավորող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերից է ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի 2000թ. կոնվենցիան և դրա երկու կամընտիր Արձանագրությունները՝ Յամաբով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներմուծման դեմ թիվ 1 Արձանագրությունը և Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների, առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին թիվ 2 Արձանագրությունը⁵, ինչպես նաև Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի 2005թ. կոնվենցիան⁶:

Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայի 37-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ Կոնվենցիան լրացնող արձանագրությունը մեկնաբանվում է Կոնվենցիայի հետ համատեղ՝ հաշվի առնելով այդ արձանագրության նպատակները:

Շահագործման ձևերի ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեն ԱՄԿ-ի Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին թիվ 29 և Հարկադիր աշխատանքի վերացման մասին թիվ 105 կոնվենցիաները⁷:

Քանի որ երեխաների աշխատանքը ունի որոշակի առանձնահատկություններ, ԱՄԿ-ն ընդունեց Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացնելու անհապաղ միջոցառումների մասին թիվ 182 կոնվենցիան: Ըստ թիվ 182 կոնվենցիայի, *երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը* ներառում են՝

- ստրկության բոլոր ձևերը՝ թրաֆիքինգը, պարտավորական կապալը, ճորտատիրական կախումը, զինված հակամարտություններում օգտագործելը, հարկադիր աշխատանքը,
- երեխաներին պռնոգրաֆիայի և մարմնավաճառության մեջ ներգրավելը,
- երեխաներին թմրանյութերի առուծախում և թունավոր աշխատանքներում ներգրավելը,
- ցանկացած աշխատանք, որն իր բնույթով և պայմաններով կարող է վնաս հասցնել երեխայի առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

⁵ ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2003թ.-ի ապրիլի 19-ից:

⁶ ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2008թ.-ի ապրիլի 19-ից:

⁷ Այս երկու կոնվենցիաները ՀՀ-ում ուժի մեջ են մտել 2005թ.-ի դեկտեմբերի 17-ից:

Սեռական շահագործում. Երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց:

Մանկական պռնոգրաֆիա. որևէ միջոցով երեխայի ցանկացած ցուցադրում, որը կատարում է իրական կամ մոդելավորված բացահայտ սեռական գործողություններ, կամ երեխաների սեռական օրգանների ցանկացած ցուցադրում, գլխավորապես սեռական նպատակներով:

Ստրկություն. երեխաների դեպքում «ցանկացած ինստիտուտ կամ ավանդույթ, որի ուժով երեխան (մինչև 18 տարեկան անձը) ծնողների կամ նրանցից մեկի կամ խնամակալի կողմից, վարձատրությամբ կամ առանց դրա, փոխանցվում է մեկ այլ անձի՝ այդ երեխայի կամ նրա աշխատանքի շահագործման նպատակով»⁸:

ՀՀ-ում ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակների առկայության մասին պաշտոնապես չի հրապարակվել: Հայաստանը դեռևս չի վավերացրել ՄԱԿ-ի 1926թ. «Ստրկության մասին» և 1956թ. «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին» կոնվենցիաները:

Մարմնի մասեր կամ հյուսվածքներ վերցնելը (օրգաններ կամ մարմնի մասեր կորզելը). Այն կարգավորվում է ՀՀ 2002թ. ապրիլի 16-ի «Մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստման մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն: Օրգանների և հյուսվածքների առուվաճառքի հետ կապված թրաֆիքինգի վերաբերյալ ՀՀ-ում դեպքեր չեն արձանագրվել:

Տերմինաբանական խնդիրներ. ՀՀ Քրեական օրենսգրքում (այսուհետ՝ ՀՀ ՔՕ) «մարդկանց թրաֆիքինգ» կամ «մարդկանց առևտուր» տերմինները, որպես այդպիսին, չեն օգտագործվում: Դրանց փոխարեն օգտագործվում են այն տերմինները և սահմանումները, որոնցով այդ երևույթը բնութագրվում է միջազգային ակտերում:

ՀՀ քրեական օրենսդրությունում, մասնավորապես, օգտագործվել են ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում և այն լրացնող՝ թիվ 2 Արձանագրությունում օգտագործվող տերմինները, ինչպես նաև Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին 2005թ. ԵԽ կոնվենցիայում օգտագործվող տերմինները: Այդ ակտերի միջև առկա է որոշակի տերմինաբանական անճշտություն: Ներկա դրությամբ նախապատրաստված է տերմինաբանական առումով 2005թ. ԵԽ կոնվենցիային համահունչ ՀՀ ՔՕ 132-րդ հոդվածի դիսպոզիցիա, չնայած որ տերմինների մի մասը արդեն շտկվել է 2009թ. նոյեմբերի 18-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով:

Օրենսդրական առաջընթացը թրաֆիկինգի դեմ պայքարի համատեքստում. Որոշ միջազգային կազմակերպությունների կողմից նախկինում իրականացվել է Հայաստանում երեխաների

⁸ ՀՀ Քրեական իրավունք. Հատուկ մաս/ Գ.Ղազինյանի խմբագրությամբ.- Եր...: Երևանի պետական համալսարանի հրատ., 2007, էջ 1208-209.

թրաֆիքինգի օրենսդրական դաշտի ուսումնասիրություն⁹, բայց բացահայտված բացերը կորցրել են իրենց արդիականությունը. երկրում իրականացվել է միջազգային մի շարք ակտերի ստորագրում և վավերացում, ինչպես նաև կատարվել է միջազգային օրենսդրական դաշտի համապատասխանեցում՝ ազգային մակարդակով:

Թրաֆիքինգի կամ, այլ կերպ ասած, մարդկանց շահագործման քրեականացման գործընթացը ՀՀ օրենսդրությունում կրել է ինտենսիվ զարգացման բնույթ: Մինչև ՀՀ ԲԾ ընդունումը¹⁰ Հայաստանի քրեական օրենսդրությունում սահմանված չի եղել որևէ նորմ, որով նախատեսված լինել քրեական պատասխանատվություն մարդկանց թրաֆիքինգի համար: 2003թ. ընդունված ՀՀ ԲԾ-ում ներառված 132-րդ հոդվածի վերնագիրն էր «Մարդկանց առևտուրը»: Հետագայում, 2004, 2006 և 2009 թվականներին Հայաստանի օրենսդրի կողմից ՀՀ ԲԾ 132-րդ հոդվածում չորս անգամ կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2006թ. հունիսի 21-ի ՀՀ օրենքով¹¹,

- նոր խմբագրությամբ է շարադրվել ՀՀ քր.օր-ի 132 հոդվածը՝ այժմ այն վերնագրված է «Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը»,
- ՀՀ քր.օր-ը լրացվել է նոր՝ 132¹ հոդվածով, որով նախատեսվում է քրեական պատասխանատվություն մարդուն պռոնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների մեջ ներգրավելու կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելու կամ պահելու համար:

Այդ փոփոխությունների նպատակն էր ապահովել մի կողմից թրաֆիքինգին վերաբերող հոդվածի դիսպոզիցիաներում օգտագործվող հասկացությունների համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված հասկացությունների բովանդակությանը, իսկ մյուս կողմից՝ հոդվածում նախատեսված հանցագործությունների համար սանկցիաների հնարավոր ներդաշնակությունը այլ պետություններում նմանատիպ արարքների համար նախատեսված պատժի տեսակներին և դրանց չափերին:

ՀՀ ԲԾ 132 հոդվածի¹² 1-ին մասի համաձայն՝ քրեորեն պատժելի է շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը՝ տարբեր եղանակներ կիրառելու միջոցով, որոնք վտանգավոր չեն կյանքի կամ առողջության համար:

ՀՀ ԲԾ 132 հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիան ունի այլ կառուցվածք: 2-րդ մասի համաձայն, քրեորեն պատժելի է շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, փոխադրելը,

⁹ 2005թ. Հայ Օգնության Միության /ՀՕՄ/ կողմից իրականացված “ՀՀ-ում երեխաները մանկատներում և հատուկ տիպի հաստատություններում, որպես թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր” սոցիոլոգիական հետազոտության մեջ արժարժված է իրավական դաշտը:

¹⁰ ՀՀ քրեական օրենսգրքի ընդունվել է 2003թ. ապրիլի 18-ին, իսկ ուժի մեջ է մտել 2003թ.-ի օգոստոսի 1-ից:

¹¹ ՀՕ-103-Ն, 21.06.06, ՀՀՊՏ 36/491/06.07.06

¹² 132-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, 01.06.06 ՀՕ-103-Ն, 01.06.06 ՀՕ-119-Ն օրենքներ:

հանձնելը, թաքցնելը կամ ստանալը, որը կատարվել է տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի նկատմամբ: Այսինքն, բացակայում են հանցագործության կատարման միջոցները:

Բացի այդ, 2009թ.-ի նոյեմբերի 18-ին ընդունված “ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքով”¹³ ՀՀ ՔՕ 132 հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած է համարվել և այդ մասում նախատեսված ծանրացնող հանգամանքները ներառվել են նույն հոդվածի 2-րդ մասում: Բացի այդ, 2-րդ մասը լրացվել է հետևյալ ծանրացնող հանգամանքով՝ տուժողի՝ սահմանված կարգի խախտմամբ՝ պետական սահմանը հատելը կազմակերպելով:

ՀՀ ՔՕ 132 հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ 132 հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ 1) կազմակերպված խմբի կողմից, կամ 2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ, դիտվում են որպես առավել ծանրացնող հանգամանքներ:

ՀՀ ՔՕ 132 հոդվածի 5-րդ մասում տրվել է շահագործման հասկացությունը, որի համաձայն մարդու շահագործում են համարվում այլ անձի պռոնկության ներգրավելը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, մարդու մարմնի մասերը կամ հյուսվածքները վերցնելը:

ՀՀ ՔՕ այս հոդվածը լրացվել է նաև 6-րդ մասով, որի համաձայն. “Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից տուժած անձն ազատվում է այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնք նա հարկադրված է եղել կատարելու՝ ելնելով իր կարգավիճակի հետևանքով ստեղծված իրավիճակից, եթե նա աջակցել է այդ հանցագործությունների բացահայտմանը”:

ՀՀ քրեական օրենսդրության համաձայն, որպեսզի թրաֆիքինգը համարվի ավարտված հանցագործություն, պարտադիր չէ, որ տուժող անձը ենթարկվի շահագործման: ՀՀ ՔՕ 132-րդ հոդվածով քրեական պատասխանատվության համար բավարար է, որ այդ անձի նկատմամբ շահագործման նպատակով կատարվի 132-րդ հոդվածի 1-ին մասում նշված գործողություններից մեկը՝ այդ նույն մասում նշված եղանակներից որևէ մեկի կիրառմամբ (ընդ որում անչափահասների նկատմամբ այդ եղանակները պարտադիր չէ, որ կիրառվեն): Եթե արդեն իրականացվում է տուժողի շահագործում, ապա առկա է մեկ այլ հանցագործություն, որը նախատեսված է ՀՀ ՔՕ 132¹ հոդվածով՝ մարդուն պռոնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելը

¹³ Ուժի մեջ է 2010թ.-ի հունվարի 2-ից:

կամ ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը կամ պահելը: Եվ այն հանցագործը, որը կիրականացնի և շահագործում, և շահագործման նպատակով հավաքագրում, փոխադրում, հանձնում, թաքցնում կամ ստացում՝ որոշ եղանակի կիրառմամբ, նա կենթարկվի պատասխանատվության հանցագործությունների համակցությամբ՝ 132 և 132¹ հոդվածներով: ՀՀ ԲՕ 132 հոդվածին վերաբերող՝ հանցագործությունը ավարտված համարվելու ներկայացված ընդհանուր կանոնից ՀՀ քր.օր-ը նախատեսում է առանձնահատկություն, կապված նույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց նկատմամբ հանցանք կատարելու հետ: Դրանք են՝ տասնութ տարին չլրացած անձինք կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձինք:

Վերը թվարկված երկու կատեգորիաների անձանց նկատմամբ կատարված ոտնձգությունը համարվում է ավարտված, անկախ այդ անձանց նկատմամբ կատարման միջոցներից (եղանակներից):

Որդեգրման իրավական կարգավորումը նույնպես բազմաթիվ փոփոխություններ է կրել: Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիան (Հաագայի կոնվենցիան)¹⁴:

ՀՀ-ում քրեորեն պատժելի չէ անօրինական որդեգրումը¹⁵: Համաձայն որդեգրման փոփոխված կարգի, չի թույլատրվում եղբայրների ու քույրերի որդեգրումը տարբեր անձանց կողմից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ որդեգրումը ելնում է երեխաների շահերից: Որդեգրումը կատարում է դատարանը՝ հատուկ վարույթով՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի և որդեգրել ցանկացող անձի պարտադիր մասնակցությամբ:

Երեխաների թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային ու ազգային օրենսդրության համապատասխանելիությունը.

Պաշտպանությունը շահագործումից/բռնություններից. Երեխաների շահագործումից և բռնությունից պաշտպանված լինելու իրավունքը, բացի կոնվենցիայից, նախատեսված է նաև “Երեխաների իրավունքների մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով: Օրենքով ապահովվել են աշխատող անչափահասների համար համապատասխան երաշխիքներ, ուժեղացվել է երեխաների և դեռահասների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանությունը և այլն, սակայն չկան կիրարկման համապատասխան մեխանիզմներ:

¹⁴ ՀՀ-ում ուժի մեջ է մտել 2007թ.-ի հունիսի 1-ից:

¹⁵ Երեխաները Հայաստանի մանկատներում և հատուկ դպրոցներում. Թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր. Երևան, 2005, էջ.27.

Պաշտպանության երաշխավորումը ծնողների/խնամողների ուսնձգություններից. Համաձայն ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 52-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի՝ երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք (այս նորմը առավել կարևորվում է, քանի որ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ թրաֆիքինգը իրականացվում է ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից), բայց չկան դրանք վերահսկելու մեխանիզմներ:

Երեխաների երկրից-երկիր տեղափոխման անվտանգության երաշխավորումը. Ներկա դրությամբ երեխաների տեղափոխումը մի երկրից մյուսը իրականացվում է ծնողների կամ նրանցից մեկի ուղեկցությամբ կամ նրանց համաձայնության առկայության դեպքում՝ երրորդ անձանց կողմից, սակայն այս մեխանիզմը խնդիրն ամբողջությամբ չի լուծում:

Պատժամիջոցների խստացումը. ՀՀ-ում, ներկա դրությամբ, բռնագրավումը, որպես լրացուցիչ պատիժ, թրաֆիքինգի համար արդեն նախատեսված է: Դա իրականացվել է 2009թ.-ի նոյեմբերի 18-ին ընդունված «ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով և հանդիսանում է դրական քայլ ինչպես ազգային օրենսդրությունը միջազգային օրենսդրությանը համապատասխանեցնելու, այնպես էլ թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարի հարցում:

Բացի այդ, ՀՀ Քր. օր.-ի 190-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու (փողերի լվացման) համար:

Թրաֆիքինգի զոհերի հնարավոր իրավական պաշտպանությունը. ՀՀ Քր. դատ. օր.-ի 12-րդ գլուխը, որը վերնագրված է «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը», պարունակում է այնպիսի նորմեր, որոնք նախատեսում են քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության միջոցները¹⁶:

Չոհերի աջակցության կազմակերպումը. 2008 թվականի նոյեմբերի 20-ին N 1385-Ս որոշմամբ ՀՀ Կառավարությունը հաստատել է Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը¹⁷:

Կարգով նախատեսվում է, որ հայտնաբերված զոհի մասին տեղեկությունը պետք է տրամադրվի ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը իսկ հանցագործության մասին տեղեկությունը՝ ՀՀ ոստիկանությանը:

Կարգում մանրամասնորեն նշվում է, թե ինչպես պետք է ուղղորդվի զոհը, ինչպես պետք է նույնացվի, ստանա օգնություն ու աջակցություն:

Կարգով կոնկրետացվում են այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն, երբ զոհը հայտնաբերման պահին գտնվում է ՀՀ-ում և երկրից դուրս:

¹⁶ սակայն պրակտիկայում մեր կողմից ուսումնասիրված թրաֆիքինգի ոչ մի գործի առնչությամբ վերոնշյալ պաշտպանական միջոցներից որևէ մեկը որևէ տուժողի նկատմամբ չի կիրառվել:

¹⁷ Ուժի մեջ է մտել 2008թ.-ի դեկտեմբերի 3-ից:

Ազգային օրենսդրության համապարփակությունը և համապատասխանությունը միջազգային կոնվենցիաներին. Առաջին հայացքից թվում է, որ միջազգային և ազգային օրենսդրությունը համահունչ են, բայց երբեմն անհրաժեշտություն է առաջանում այդ ակտերը կիրառել համատեղ, մասնավորապես դատական պրակտիկայում: Հարկ է նշել, որ դատական պրակտիկայում արդեն սկսել են կիրառել միջազգային օրենսդրությունը այն մասով, որով նա լրացնում է ազգային օրենսդրության բացը:

Հայաստանն արդեն միացել է Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությանը և նույն կոնվենցիայի՝ զինված հակամարտություններին վերաբերող կամընտիր արձանագրությանը, ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքի վերացման մասին, Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին, Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիաներին: Ըստ այդմ,

1. Միջազգային ակտերին համապատասխան փոփոխվել և լրացվել է ՀՀ ՔՕ 132-րդ հոդվածը, ավելացվել 132¹ հոդվածը:
2. Անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար ՀՀ Քր. դատ. օր.-ը նախատեսում է առանձնահատկություններ: Օրինակ, մինչև 16 տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ, անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը, դատարանում անչափահաս վկայի հարցաքննությունը կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ և այլն:
3. ՀՀ-ում վկայություն կարող է տալ ցանկացած տարիքի անձ (տուժող կամ վկա), բայց ՀՀ ՔՕ 338-րդ (Մուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը) կամ 339-րդ (Ցուցմունք տալուց հրաժարվելը) հոդվածներով քրեական պատասխանատվության ենթակա են միայն վերոգրյալ արարքը կատարելու պահին 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձինք: Բացի այդ, 339-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է բացառություն, որի համաձայն “իր, ամուսնու կամ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարված անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից”:¹⁸
4. ՀՀ-ում քրեորեն պատժելի չէ անօրինական որդեգրումը, բայց պատժելի է որդեգրման նպատակով որդեգրվողի օրինական ներկայացուցչի կամքին հակառակ նրան որդեգրման համաձայնություն տալուն շահադիտական կամ այլ ստոր դրդումներով հակելը կամ հարկադրելը, որը նախատեսված է ՀՀ ՔՕ 169-րդ հոդվածով:

¹⁸ Նմանատիպ իրավական նորմ առկա է նաև ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածում, որի համաձայն “ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ”:

5. Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրության 3-րդ հոդվածում նշված բոլոր արարքները, ՀՀ ԶՕ համաձայն, քրեորեն պատժելի են:

6. Դատական պրակտիկայում արդեն սկսել են կիրառել միջազգային օրենսդրությունը այն մասով, որով նա լրացնում է ազգային օրենսդրության բացը: Այսպես ՀՀ ԶՕ 132¹ հոդվածով հարուցված գործ թիվ ԵՔԲԳ-0054/01/2008–ով 2009թ. ապրիլի 2-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում կայացվեց մեղադրական դատավճիռ, որտեղ մեջբերում է իրականացվել ԱՄԿ-ի Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին N182 կոնվենցիայից:

Այսպիսով, վերոգրյալից երևում է, որ ՀՀ ազգային օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է միջազգային ակտերին, բայց կան որոշակի **բացթողումներ**, ինչպիսիք են, օրինակ,

- ստրկության հասկացության օրենսդրական սահմանման բացակայությունը,
- անօրինական որդեգրման համար քրեական պատասխանատվության բացակայությունը,
- քրեական դատավարության մասնակիցների համար (տուժող, վկա և այլն) պաշտպանության միջոցների կիրառման մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև քննության և դատավարության գործընթացում երեխային ուղեկցող մանկավարժի կամ խնամակալության մարմնի ներկայացուցչի կողմից իրենց դերի կատարման համար անհրաժեշտ կարողությունների պակասը:

Ընթացակարգային բացեր

ՀՀ-ում առկա է թրաֆիքինգի ենթարկված անձանց օգնելու իրավական բազան, սակայն այդ օգնությունը տրամադրելու բոլոր անհրաժեշտ մեխանիզմները դեռևս պետք է մշակվեն, մասնավորապես.

- Ուղղորդման Կարգի 15-րդ կետում նշված է, որ գոհն ուղղորդվում է միայն իր համաձայնությամբ՝ հայտնաբերման պահից: Այստեղ չկա նշված համաձայնության ձևը՝ պետք է լինի գրավո՞ր, թե՞ բանավոր, իսկ դա ունի գործնական մեծ նշանակություն, մասնավորապես, այն դեպքերում, երբ գոհը փոխում է իր մտադրությունը համագործակցելու վերաբերյալ (այս հանգամանքը դժվարություններ կարող է առաջացնել):
- Համաձայն կարգի, եթե թրաֆիքինգի գոհը ենթարկվել է դաժան վերաբերմունքի կամ բռնության, ապա սոցիալական աջակցության փաթեթը կկիրառվի այդ անձի նկատմամբ, իսկ եթե թրաֆիքինգի գոհը բռնության չի ենթարկվել, այլ ենթարկվել է շահագործման՝ վիճակի

խոցելիությունը օգտագործելով կամ խաբեությամբ, ապա այս պարագայում նա չի կարող օգտվել սոցիալական աջակցության փաթեթից, ինչն անթույլատրելի է:

- Ինչ վերաբերվում է թրաֆիքինգի գոհ երեխաներին, ապա Կարգը մատնանշում է ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխայի իրավունքների պաշտպանության բաժիններին, որոնց աշխատակիցները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ, ուստի պետք է համապատասխան փոփոխություններ իրականացվեն նրանց գործառույթները սահմանող փաստաթղթերում:

- Կարգի 30-րդ կետի համաձայն վերջնական աջակցությունն իրականացվում է 2005թ. հոկտեմբերի 24-ի ”Սոցիալական աջակցության մասին” ՀՀ օրենքով¹⁹: Այդ օրենքը երեխաների հարցերին անդրադառնում է ընդամենը մի քանի հոդվածներում, այն էլ մակերեսորեն: Մինչդեռ կարիք կա, որ երեխաների վերականգնողական օգնությունը իրականացվի հոգեբանի, մանկավարժի և դաստիարակի մասնակցությամբ, խնամքի կազմակերպման կարգը մանրամասն նշվի, երեխաների խորհրդատվական և իրավաբանական օգնությունը իրականացվի երեխաների համար հասկանալի ձևով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ներառվի փաստաթղթերի կազմումը, ձևակերպումը և այլն:

- Բաց է նաև այն հանգամանքը, որ ուղղորդման կարգի մեջ նշված չէ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ որպես երեխաների դեպքում կարևոր դերակատար:

- Ինչ վերաբերում է **որդեգրմանը**, ապա համաձայն Երեխայի որդեգրման կարգի 27-րդ կետի՝ “Եթե որդեգրման ենթակա միևնույն երեխայի կապակցությամբ ցանկություն են հայտնել մեկից ավելի որդեգրողի թեկնածուներ, ապա երեխայի հետ նրանցից առաջինի հանդիպումը կազմակերպվում է ըստ նրանց կենտրոնացված հաշվառման հերթականության: Մյուս որդեգրողի թեկնածուների հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե առաջին որդեգրողի թեկնածուն 15 օրվա ընթացքում ցանկություն չի հայտնում տվյալ երեխային որդեգրելու մասին”: Իսկ նույն կարգի 27.1-րդ կետի համաձայն՝ “Եթե ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն և օտարերկրյա քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկությամբ դիմել են նույն օրը, ապա երեխայի հետ հանդիպման առաջնահերթությունը տրվում է ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուին: Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուի հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն 15 օրվա ընթացքում տվյալ երեխային որդեգրելու ցանկություն չի հայտնել”: Այսինքն, այստեղ առաջին դեպքում նախապատվությունը տրվում է որդեգրողների շահերին, իսկ երկրորդ դեպքում՝ պետության: Չնայած դրան, Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի “բ” կետի համաձայն, օտարերկրյա

¹⁹ Ուժի մեջ է մտել 2006թ.-ի հունվարի 1-ից:

որդեգրումը կատարվում է միայն այն դեպքում, “եթե ծագման Պետության իրավասու մարմինները ծագման Պետությունում երեխայի տեղավորման հնարավորությունների պատշաճ քննարկումից հետո որոշել են, որ օտարերկրյա որդեգրումը բխում է երեխայի լավագույն շահերից” և կախված չէ “ուշ կամ շուտ գրանցվելուց”:

Ի լրումն վերոգրյալի, արժե նշել, որ որդեգրող ծնողների թեկնածուների ընտրության չափորոշիչները չեն համապատասխանում միջազգային առաջավոր պրակտիկային, որդեգրվող ծնողները չեն ուսուցանվում, հետագա մոնիթորինգ չեն անցնում, հատուկ մասնագիտական աջակցություն չեն ստանում: Որդեգրության գաղտնիության պահպանման գործող սկզբունքը վերանայման կարիք ունի՝ ելնելով երեխայի լավագույն շահի գերակայությունից:

1.2. Հայաստանում իրագործված ուսումնասիրությունների և որոշ այլ փաստաթղթերի անդրադարձը երեխաների թրաֆիքինգի երևույթին

Սույն հետազոտության մեջ երկրորդային վերլուծության են ենթարկվել Հայաստանում իրականացված՝ խնդրին առնչվող հետազոտությունների հաշվետվությունները, ինչպես նաև այլ նյութեր²⁰:

Վիճակագրությունը ըստ փաստաթղթերի. Առկա նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրում ավելի շատ հնարավոր է խոսել երեխաների թրաֆիկինգի երևույթի միտումների, դրսևորման ձևերի, պոտենցյալ զոհերի բնութագրիչների մասին, քան երեխա զոհերի վերաբերյալ հստակ վիճակագրության մասին:

2005թ. «Երեխաների պաշտպանության ռազմավարական ծրագրում» նշվում է, որ Հայաստանում ներկայումս առկա չէ երեխաների սեռական շահագործման, առք ու վաճառքի երևույթի հետ կապված հիմնախնդիրը, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ կանանց և երեխաների ապօրինի փոխադրումները ԱՊՀ երկրներում աճելու միտում ունեն, անհրաժեշտ է առավել համապարփակ տեղեկություններ հավաքել ապօրինի փոխադրումների վերաբերյալ: *«Երեխաների պաշտպանության ռազմավարական ծրագիր», Հայաստան, 2005*

Այս պնդումը բխում է ավելի վաղ իրականացված հետազոտության զեկույցից, որտեղ կոնկրետ դեպքեր հիշատակելով, նշված է. «Հետազոտությունը բացահայտեց, որ պատանի զոհերը որբեր են կամ սոցիալ-տնտեսական տեսակետից խոցելի ընտանիքների երեխաներ... Երեխաների թրաֆիկինգը սեռական շահագործման նպատակով աճելու հակում ունի»:
Հետազոտություն երեխաների և կանանց Հայաստանից ապօրինի փոխադրելու վերաբերյալ. ԱՄԿ, 2001

²⁰ Աղբյուրներ.

1. Հետազոտություն երեխաների և կանանց Հայաստանից ապօրինի փոխադրման վերաբերյալ. ԱՄԿ, 2001
2. Մարդկանց թրաֆիքինգ Հայաստանի Հանրապետությունում, Հայկական միջազգային քաղաքականության հետազոտական խումբ, Հիլդա Գրիգորյան, 2005
3. Հայաստանում մանկատների և հատուկ դպրոցների երեխաներ. թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհեր, ՀՕՄ 2005
4. «Երեխաների պաշտպանության ռազմավարական ծրագիր», Հայաստան, 2005
5. Անապատի գիշերները, 2006
6. Մանկատների և հատուկ դպրոցների սաների թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունը. UMCOR, 2007
7. Երեխայի պաշտպանություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ-Հայաստան, 2007/Իզոլ Դաշեվսկի
8. Չեկույց Մարդկանց թրաֆիքինգի մասին, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և մոնիտորինգի գրասենյակ, ԱՄՆ, Հունիս 12, 2007
9. Երիտասարդների ձայները ընդդեմ երեխաների թրաֆիքինգի. Հարավ-արևելյան Եվրոպայի փորձից, Մայք Դոբրիշ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Innocenti հետազոտական կենտրոն, մայիս, 2008
10. «Երեխայի թրաֆիքինգ», «Երեխայի իրավունքների պաշտպանության ձեռնարկ», հեղինակների խումբ, Երևան 2008

Մեկ այլ հետազոտության զեկույց փաստում է. «Չնայած չկան և երբեք չեն լինի որևէ փաստացի թվեր, ՀՀ-ում մարդկանց թրաֆիկինգը վեր է ածվել զարգացող հիվանդության, որն արագորեն աճում է: Տեղական ՀԿ-ներն ու վստահելի աղբյուրները նշում են, որ անցած 5 տարիների ընթացքում, 3000-5000 տղամարդիկ, կանայք և երիտասարդ աղջիկներ ուղարկվել են հարևան երկրներ՝ սեռական չարաշահման և հարկադիր աշխատանքի նպատակով»:
Մարդկանց թրաֆիկինգ Հայաստանի Հանրապետությունում, Հայկական միջազգային քաղաքականության հետազոտական խումբ, Հիլդա Գրիգորյան, 2005:

Մեկ այլ աղբյուր նշում է. «2006-ին կառավարությունը հետազոտեց 16 թրաֆիքինգի դեպքեր, 2005-ի մինչև 14 դեպքերի փոխարեն: Իշխանությունները մեղադրանք առաջադրեցին 13 անձի թրաֆիկինգով զբաղվելու համար, մինչդեռ 2005-ին 16 դեպք է արձանագրվել: Բոլոր 13 թրաֆիկինգով զբաղվողները դատապարտվեցին 2006-ին»:
Ձեկույց Մարդկանց թրաֆիկինգի մասին, Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի և մոնիտորինգի գրասենյակ, ԱՄՆ, Հունիս 12, 2007

Ինչ վերաբերում է երեխաներին, ապա պաշտոնապես արձանագրվել է թրաֆիքինգի միայն 3 դեպք, մինչդեռ լրագրողական հետազոտության զեկույցը վկայում է, որ «Դուրսայում տեղական լրագրողների վերջին հետազոտությունները նույնպես ցույց են տալիս, որ դեպի Միացյալ Էմիրություններ թրաֆիքինգի ենթարկվածներից շատերը անչափահասներ են, որոնք հիմնականում գալիս են Հայաստանի կամ այլ երկրների գիշերօթիկ հաստատություններից»:
Անապատի գիշերները, 2006

Պաշտոնական տվյալներով, 2009թ. դրությամբ, ՀՀ-ում անչափահասները թրաֆիքինգի տուժողներ են 3 քրեական գործով, նրանցից մեկով անչափահասի նկատմամբ կիրառվել է այլ անձի պռոնկության ներգրավելը (այս գործով դատաքննությունը դեռ չի ավարտվել), իսկ երկուսով՝ հարկադիր ծառայություն՝ մուրացկանություն (այս գործերից մեկով դատաքննությունը դեռ չի ավարտվել, իսկ մյուսը ավարտվել է մեղադրական դատավճռով՝ 7 տարի ազատազրկում):
Ոստիկանության զեկույց, 2009թ. Թրաֆիքինգի դեմ պայքարի ռեսուրս կենտրոնի նյութերից

Թրաֆիքինգի դրսևորման ձևերը. Թրաֆիքինգը Հայաստանում ունի երկու հիմնական ուղղություններ. որդեգրություն և սեռական շահագործում: Դեռևս 2005-ի ընթացքում 2 մեծահասակներ հայտնաբերվեցին և մեղադրվեցին անչափահասներին մուրացկանության և թափառաշրջիկության մեջ ներգրավելու համար: «Երեխայի թրաֆիքինգ» Երեխայի իրավունքների պաշտպանության ձեռնարկ, հեղինակների խումբ, Երևան 2008

ՀՀ-ում դատարաններում քննվող գործերի վերլուծությունից երևում է, որ արական սեռի անչափահասները ներգրավվում են մուրացկանության (2009թ. ընթացքում եղել է 2

քրեական գործ), իսկ իգական սեռի անչափահասները՝ մարմնավաճառության մեջ (2009թ. ընթացքում եղել է 1 քրեական գործ²¹): *Ռեսուրս կենտրոնի նյութերից*

«Որոշ մանկատներում, հատկապես հարավային շրջաններում, նորածին երեխաներին վաճառում են օտարերկրացիներին, երիտասարդ աղջիկներին ստիպում են սեռական ծառայություններ մատուցել և դրան վաստակել, իսկ հաշմանդամ/մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին՝ վաճառում բժշկական փորձարկումներ իրականացնելու համար»: *Մարդկանց թրաֆիկինգ Հայաստանի Հանրապետությունում, Հայկական միջազգային քաղաքականության հետազոտական խումբ, Հիդրա Գրիգորյան, 2005*

Երեխաների թրաֆիկինգի ենթարկելու պատճառները և գործոնները. Ուսումնասիրված փաստաթղթերում արտացոլվում են հետևյալ պատճառները.

Ծննդի չգրանցում. Անկախությունից հետո, տնտեսական անկման պատճառով, անցումային երկրներում, ինչպիսին Հայաստանն է, կանայք և երեխաները հեշտ թիրախ են հանդիսանում թրաֆիկինգով զբաղվողների համար. «Սոցիալապես ամենավատթար համայնքներում, ծնողները հաճախ չեն կարողանում գրանցել իրենց երեխաների ծնունդը, ծայրահեղ աղքատությունը կարող է նույնիսկ դրդել որոշ ծնողների վաճառել իրենց երեխաներին շատ փոքր գումարի համար և առանց անգամ մտածելու նրանց ապագայի մասին»: *Հետազոտություն երեխաների և կանանց Հայաստանից ապօրինի փոխադրման վերաբերյալ. ԱՄԿ, 2001*

Նույն հետազոտության մեջ նշվում է նաև, որ «Վերջին 7 տարիների ընթացքում տան պայմաններում տեղի ունեցած ծնունդների թիվը հինգ անգամ ավել է, քան նախորդ տարիներին: Ծատ դեպքերում նորածինները չեն գրանցվում պաշտոնապես: Վանաձորի իշխանությունները համարում են, որ տան պայմաններում ծնունդների նշանակալի աճը պայմանավորված է ապօրինի որդեգրությունների պահանջարկով: Օտարերկրացիների կողմից երեխաների որդեգրությունը կանոնակարգող օրենսդրությունը բավականին խիստ և խնամքով մշակված է, որը դեսպանատան կանոնակարգի հետ համատեղ սահմանափակում է երեխաների դուրս բերումը երկրից: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այդ օրենքների կիրարկման մեխանիզմները թույլ են, ինչը թուլացնում է նաև օրենքի խստությունը»: *Հետազոտություն երեխաների և կանանց Հայաստանից ապօրինի փոխադրման վերաբերյալ. ԱՄԿ, 2001*

Երեխաների՝ հաստատություններում խնամվելու գործոնը. Համաձայն ուսումնասիրված գրականության, թրաֆիկինգի տեսակետից հատկապես խոցելի են համարվում մանկատների և հատուկ դպրոցների սաները. «Թրաֆիկինգի ենթարկվելու հիմնական գործոնները մեծապես կապված են այն պայմանների և հնարավորությունների հետ, որոնք առաջարկվում են երեխաներին ինչպես հաստատության ներսում, այնպես էլ դրսում: Հոգեբանորեն և տնտեսապես խոցելի, ֆիզիկական բռնության ենթարկված, սոցիալական անառողջ երեխան ունի բոլոր հավանական նախադրյալները՝ թրաֆիկինգի գոհ դառնալու: Ակնհայտորեն,

²¹ Սույն գործով դատավարության ընթացքում լրացել է անչափահաս տուժողի 18-ամյակը:

գործոնների մի ամբողջ համալիր շատ խոցելի է դարձնում այս երեխաներին՝ թրաֆիքինգի առումով: Խնամքի հաստատությունները լքելուց հետո, այս երեխաներից շատերը թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկի ներքո են հայտնվում: *Իգոր Դաշեվսկի, Երեխայի պաշտպանություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ/Հայաստան, 2007,*

Մեկ այլ զեկույց փաստում է. «Ոչ միայն հաստատությունների երեխաներն են ենթադրյալ թրաֆիքինգի զոհեր, այլև, ըստ էության, հավանականությունը մեծ է, որ այդ երեխաներից շատերը հակված են թրաֆիկյոր դառնալու: Մյուս կողմից, երբ շահառուները երկար ժամանակ մնում են առանց աշխատանքի, նրանք վաճառում են իրենց տները, ձեռք բերում որոշակի գումար գոյատևելու համար, դառնում անապաստան և, հետևաբար, նորից հայտնվում թրաֆիքինգի ռիսկի ներքո: Այսպիսով, ստեղծվում է արատավոր մի շրջանակ»:
Մանկատների և հատուկ դպրոցների սաների թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունը. UMCOR, 2007

«Որոշ ուսումնասիրությունների համաձայն, թրաֆիքինգի դեպքերը կարծես աճում են Հայաստանում, սակայն պաշտոնական վիճակագրական տվյալները բավարար չեն և վերլուծության սահմանափակ փորձ կա միտումների վերլուծության ուղղությամբ: Հայաստանում եղել են մի շարք դեպքեր, երբ թրաֆիքյորները, օգտվելով այս երեխաների անպաշտպան լինելու հանգամանքից, հավաքագրել են մանկատներից և հատուկ դպրոցներից երեխաներ Արաբական Էմիրություններում (ԱՄԷ) սեռական շահագործման ենթարկելու նպատակով: Բազմաթիվ դեպքեր վկայում են այն մասին, որ երեխաների մի ստվար զանգված դառնում է անօրինական միգրանտ արտասահմանում աշխատանք գտնելու հույսով: Մի շարք հատկանշական վկայություններ գալիս են ապացուցելու, որ բազմաթիվ երեխաներ այս հաստատություններից դառնում են թրաֆիքինգի զոհ մանկական մարմնավաճառության, կեղծ ամուսնության, աշխատանքային շահագործման կամ որդեգրության մեթոդներով: Չնայած այս խմբի խոցելիությանը, հազիվ թե հնարավոր լինի ցույց տալ այն դեպքերը, որտեղ մանկատան և հատուկ դպրոցի երեխաները դառնում են շահագործման և թրաֆիքինգի զոհ և թվում է, որ գրեթե ոչինչ չի իրականացվում այս խնդրի դեմ պայքարելու համար»:
Հայաստանում մանկատների և հատուկ դպրոցների երեխաներ. թրաֆիքինգի և շահագործման պոտենցիալ զոհեր, ՀՕՄ 2005

Ընտանեկան բռնությունները որպես թրաֆիքինգի պատճառ և խոցելիության գործոն արտացոլված է մեկ ուսումնասիրության մեջ. «Ուսումնասիրությունը հաստատում է, որ այն երեխաները, ովքեր ընտանեկան բռնության են ենթարկվել, թրաֆիկյորների կողմից հավաքագրվելու ռիսկի ներքո են հայտնվում, կամ նրանք նախընտրում են արտագաղթը, որը, որպես կանոն, ավարտվում է նրանց շահագործմամբ՝ կրկնակի «վիկտիմիզացիա»: Ավելին, երեխաները վկայում են այն մասին, որ թե իրենց երկրում, և թե օտար երկրներում նրանց հավաքագրած և տեղափոխած հիմնական դերակատարները անհրաժեշտ պաշտպանություն չեն տրամադրում նրանց: Որոշ դեպքերում նրանք նույնիսկ բռնության ենթարկվելու ավելի մեծ

ռիսկի են դրդում այդ երեխաներին»: Մայք Դոթրիջ, Երիտասարդների ձայները ընդդեմ երեխաների թրաֆիկինգի. Հարավ-արևելյան Եվրոպայի փորձից, ՄԱԿԻ-ի մանկական հիմնադրամ, Innocenti հետազոտական կենտրոն, մայիս, 2008

Թրաֆիքինգի մասին իրազեկվածությունը որպես գործոն. «Հարցվածների մի զգալի տոկոս բացարձակապես անտեղյակ էր թրաֆիքինգի մասին. հատուկ դպրոցների և մանկատների երեխաների 43.5% -ը, նրանց ծնողների և խնամողների 41.3%-ը, այս հաստատությունների շրջանավարտների 36.7%-ը և հատուկ դպրոցների և մանկատների դաստիարակների և խնամողների 12.8%-ը պատասխանեցին, որ նրանք ընդհանրապես չեն լսել թրաֆիքինգի երևույթի մասին»: Կարելի է եզրակացնել, որ իրազեկվածությունը լուրջ **գործոն է.** «Տնտեսական և սոցիալական խոցելիության և թրաֆիքինգի մասին ակնհայտ իրազեկության պակաս ունենալու ֆոնի վրա, մանկատների և հատուկ դպրոցների սաները համարվում են բարձր ռիսկի խումբ, երբ խոսքը վերաբերում է թրաֆիքինգի պոտենցիալ զոհերին»: Հայաստանում մանկատների և հատուկ դպրոցների երեխաներ, Թրաֆիքինգի և շահագործման պոտենցիալ զոհեր ՀՕՄ, 2005

Պաշտպանություն. Ըստ փաստաթղթերի, վերջին 10-15 տարիների ընթացքում շատ փոփոխություններ են իրականացվել Հայաստանում երեխաներին թրաֆիքինգից պաշտպանելու համար: 2003 թ. օգոստոսին ուժի մեջ է մտել նոր վերանայված ՀՀ քրեական օրենսգիրքը: Մասնավորապես, 20-րդ գլխում այժմ ներառված է «Ընտանիքի և երեխաների դեմ հանցագործություն», հոդված 168՝ «Երեխաների վաճառք»: Այդ ժամանակվանից ի վեր Հայաստանը այս ուղղությամբ որոշ գործողություններ է իրականացրել. 2005 թ. միացել է ԵԽ-ի Թ.197 Թրաֆիքինգի դեմ միջոցառումների մասին Կոնվենցիային; 2006 թ. ՀՀ օրենսդրությունը վերանայեց թրաֆիքինգի հանցագործության պատժամիջոցները; 2007 թ. ՀՀ վարչապետը ընդունեց Թ. 1598-Թ որոշումը “ՀՀ-ում մարդկանց հանդեպ բռնությունների դեմ պայքարի ազգային ծրագիրը 2007-2009թ.թ. համար և համապատասխան ժամանակացույցը», 2007 թ. ստեղծվեց «Մարդկանց հանդեպ բռնություններից պաշտպանելու խորհուրդը»: Երեխայի պաշտպանություն, Ձեռնարկ, հեղինակների խումբ, Երևան 2008

Միևնույն ժամանակ, ըստ «Մարդկանց թրաֆիքինգի մասին» զեկույցի, «Հայաստանի կառավարությունը չի իրականացնում թրաֆիքինգի երևույթը վերացնելու ուղղությամբ նվազագույն չափորոշիչները, ինչևէ, այն բավականին ջանքեր է գործադրում այդ ուղղությամբ: Հայաստանը արդեն երրորդ տարին է, որ գտնվում 2-րդ Կարգի Դիտման Ցանկում՝ նախորդ տարիների ընթացքում բավականաչափ ջանքեր գործադրել չկարողանալու պատճառով, մասնավորապես, թրաֆիքինգի հետ կապված կոռուպցիայի դեմ պայքարի և զոհերին աջակցություն տրամադրելու բնագավառում: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը ներդրել և խստացրել է թրաֆիքինգի դեմ պայքարելու օրենքները, աճ է գրանցել

դատապարտված թրաֆիքյորների առումով և դատական կարգով հետապնդել է առաջին աշխատանքային թափփինգի դեպքը 2006թ. դեկտեմբերին, (ով առաջինն էր, որ ֆինանսական փոխհատուցում ստացավ), այնուամենայնիվ, հարկ է նշել, որ զոհերի հայտնաբերման և ուղղորդման ինչպես նաև պաշտոնական հանցակիցների առումով առաջընթաց արձանագրելու տեսակետից կառավարությունը թերանում է: Թրափփինգի զոհերը ստացան ֆինանսական փոխհատուցում – սակայն կառավարությունը չկարողացավ առաջընթաց ունենալ զոհերին գտնելու և տեղեկություն ստանալու ուղղությամբ կամ թրափփինգում պաշտոնական հանցակցության դեմ պայքարելու մեջ»: *Ձեկույց Մարդկանց թրափփինգի մասին, Մարդկանց թրափփինգի դեմ պայքարի և մոնիտորինգի գրասենյակ, ԱՄՆ, Հունիս 12, 2007*


Այսպիսով, ուսումնասիրված փաստաթղթերից պարզ է դառնում, որ

- Պաշտոնական տվյալներով, երևույթի չափերը գրեթե աննշան են (3 դեպք), մինչդեռ լրագրողական տվյալներով՝ «բավականին մեծ»: Տարբեր հետազոտություններում մատնանշվում են կոնկրետ իրավիճակներ, որոնց թիվը շատ ավելին է, քան պաշտոնապես արձանագրվածն է: Այսպիսով, Հայաստանում երեխաների թրափփինգի վերաբերյալ չկա հստակ վիճակագրություն, այնուամենայնիվ միտումները գրանցվել են որպես աճող թե լրագրողական, և թե սոցիոլոգիական հետազոտություններում:
- Դաշտը հատվածային է ուսումնասիրված, սակայն կարևոր բացահայտումներ են արված երեխաների խոցելի խմբերի, պատճառների, դեպքերի վիճակագրության և խոցելության գործոնների վերաբերյալ: Մասնավորապես, բացահայտումները վերաբերում են՝
 - ա) *պատճառներին*՝ (ծնունդների չգրանցում, աղքատություն, գործազրկություն, կոռուպցիա),
 - բ) *տեսակներին* (որդեգրություն, սեռական շահագործում, աշխատանքային շահագործում, երեխաների վաճառք՝ բժշկական փորձարկումների համար),
 - գ) *խոցելիության գործոններին* (ընտանեկան բռնություններ, իրազեկվածության պակաս, հաստատություններում մեծանալու հանգամանք և այլն): Մասնավորապես, փաստաթղթերում հատուկ անդրադարձ կա հաստատության պայմաններում մեծացող երեխաներին՝ որպես թրափփինգի տեսանկյունից առանձնապես բարձր խոցելի խմբի:
- Փաստաթղթերն անդրադառնում են նաև իրազեկվածության խնդրին՝ որպես խոցելիություն/ճկունություն պայմանավորող կարևոր գործոնի:
- Փաստաթղթերում արտացոլված է նաև երևույթի ընկալման և ըստ այդմ, մոտեցումների փոփոխության դինամիկան ու պաշտպանության համար կիրառվող մեխանիզմների անկատարությունը, մասնավորապես, զոհերի իրական կարիքների և պաշտպանության համար ներդրված մեխանիզմների միջև անհամապատասխանությունը:

1.3. Երեխաների թրաֆիքինգի երևույթի լուսաբանումը (էլեկտրոնային և տպագիր մամուլ)

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրվել է թվով 52 հրապարակում, որոնցից 33-ը՝ տպագիր և 19-ը՝ էլեկտրոնային մամուլի օրինակներ: Թրաֆիքինգի երևույթի նկատմամբ առավել մեծ հետաքրքրություն են ցուցաբերել «Հետք»-ը՝ 11 հրապարակում և «Առավոտ»-ը՝ 5 հրապարակում (զծապատկեր 1):


Գծ. 1. Առանձին հրապարակումների բաշխումն ըստ լրատվամիջոցների



Հրապարակումների «ակտիվության» համար տարբեր շարժառիթներ են եղել, մասնավորապես, ԱՄՆ Պետքարտուղարության գեկույցը, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչ Եվա Բյոդեի այցը Հայաստան, ինչպես նաև աղմկահարույց մի քանի դատավարություններ և այլն: Հրապարակումների գրեթե կեսը՝ 23 հրապարակում, ներկայացված են լուսանկարի առկայությամբ: Հրապարակումները 7 տարբեր ժանրերում են:

Հրապարակումների մեջ հիշատակված են հետևյալ երկրները. (զծապատկեր 2)

Գծապատկեր 2 Թրաֆիքինգի առումով Հայաստանի առնչությունը այլ երկրների հետ



Ընդ որում, ըստ հոդվածների, Հայաստանը հանդես է գալիս որպես թե՛ առաքող, թե՛ ընդունող և թե՛ տարանցիկ երկիր (գծ. 3)

Գծապատկեր 3. Հայաստանի դերը՝ ըստ լրատվամիջոցների



Հրապարակումներում տեղեկատվության ամենահաճախ հանդիպող աղբյուրը ուստիկանությունն է (13 դեպք), մնացած դեպքերում ներկայացված է հեղինակների տպավորություններն ու տեղեկատվությունն այն միջոցառման մասին, որին ներկա են գտնվել, ինչպես նաև՝ ՀԿ-ներից ստացված տվյալները և այլն:

Աղյուսակ 1. Հրապարակումների տեղեկատվության աղբյուրները

Տեղեկատվության աղբյուրը ²²	Քանի՞ հոդվածում է հիշատակված
Ոստիկանություն	13
Չոհեր	8
Մեղադրյալ/դատապարտյալ	7
Օրենքներ, փաստաթղթեր	7
ԵԱՀԿ	6
Միգրացիայի վարչություն	5
ԱՄՆ դեսպանատուն	4
ՀՀ ԱԳՆ	4
ՀՀ ԱՍՀՆ	4
ՀԿ-ներ	4
Այլ ՁԼՄ-ներ	2
ՄԱԿ-ի ՄԱԶԾ	1
ՀՀ ԱԱԾ	1
ՀՀ ՍԵՀՆ	1
Հասարակություն	1

Գրևորելով տարբեր երանգավորումներ, ուսումնասիրված հրապարակումներում հատկապես կարևորվում էին այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են պայքարը երևույթի դեմ, զոհի իրավունքի խախտումները, կանխարգելումը և իրազեկման կարիքը:

Երեխաների առումով հրապարակումներում երևույթի որակավորումը հետևյալն է՝ «երեխայի թրաֆիքինգ», «երեխաների շահագործում/մուրացկանություն», «երեխաների առուվաճառք»:

Աղյուսակ 2. Երևույթի որակավորումը ըստ լրատվամիջոցների

Որակավորումը կամ օգտագործված տերմինը ²³	Քանի՞ հոդվածում է նկատելի
Թրաֆիքինգ	29
Աշխատանքային թրաֆիքինգ	8
Երեխաների թրաֆիքինգ	7
Հարկադիր աշխատանք	7
Մեռական շահագործում	7
Մարդկանց առևտուր	7
Հարկադրական մարմնավաճառություն և պոռնկության դրդում	6
Երեխաների շահագործում, մուրացկանություն	5
Մարդու օրգանների վաճառք/թրաֆիքինգ	4
Երեխաների առուվաճառք	3
Մարդկանց շահագործում	3
Մեռական թրաֆիքինգ	2
Սայիտակ ստրկություն	2
Կանանց թրաֆիքինգ	2
Տղամարդկանց թրաֆիքինգ	2
Ստրկավաճառություն	1
21-րդ դարի ստրկություն	1

²² Առանձին հոդվածների դեպքում տեղեկատվության աղբյուրը 1-ից ավելին է

²³ Բազմաթիվ հոդվածներում օգտագործված են 1-ից ավելի տերմիններ

Հրապարակումների բովանդակային վերլուծություն

1. Երևույթի տարածվածությունը/չափերը, աշխարհագրությունը, սեռա-տարիքային բաշխումը.

Բազմաթիվ լրատվամիջոցներ փաստում են, որ առանձին դեպքերում Հայաստանից սեռական շահագործման նպատակով կանայք և աղջիկներ են արտահանվում Թուրքիա և Արաբական Միացյալ Էմիրություններ, իսկ աշխատանքային թրաֆիքինգի նպատակով՝ Ռուսաստանի Դաշնություն տարվում են հիմնականում տղամարդիկ, շատ քիչ դեպքերում՝ նաև կանայք (*աշխատանքային թրաֆիքինգին վերաբերող տվյալները, ըստ հեղինակի, ստացված են ՀՀ ՏԿՆ Միգրացիայի վարչության պետ Գ.Եզանյանի հետ հարցազրույցներից*):

Հիմնվելով ՀՀ ԱՍՀՆ թրաֆիքինգի ռեսուրս կենտրոնի մասնագետի տված տեղեկատվության վրա՝ ներկայացվում է, որ սեռական շահագործման գոհերի գերակշիռ մասը 19-36 տարեկան երիտասարդ կանայք են (առանձին դեպքերում՝ 16-18 տարեկան աղջիկներ), չամուսնացած, ամուսնալուծված կամ միայնակ մայրեր, ովքեր իրենց խնամքի տակ ունեն առնվազն մեկ երեխա, աղքատ են, շատերն ունեն հոգեբանական խնդիրներ: Չոհերի մեծ մասը մարզերի բնակիչ է. առավելապես՝ Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի մարզերից և Երևանից:

2. Անդրադարձը երեխաների թրաֆիքինգին. Պետք է փաստել, որ ուսումնասիրված բոլոր հրապարակումների մեջ, որպես դերակատարներ՝ երևույթին առնչվող/ներգրավված օբյեկտներ, առաջին հերթին ներկայացված են կանայք, իսկ նրանցից հետո՝ երեխաները: Երեխաների թրաֆիքինգի երևույթի մասին անդրադարձ կա հրատարակված հոդվածներից 13-ի մեջ: Դրանցից 4-ը հաղորդում են անչափահասների շրջանում իրականացված իրազեկման-կանխարգելիչ աշխատանքների մասին: Թվով 6 հոդվածներ անդրադարձել են երեխաների թրաֆիքինգի բացահայտված հայտնի 2 դեպքերին, որոնցից մեկի պարագայում հանցագործը դատապարտվել է 7 տարվա ազատազրկման՝ 132¹ հոդվածով, իսկ մյուսը, որ վերաբերում է մանկավարժի կողմից՝ հաստատության երեխաներին մուրացկանության մեջ ներառելու մեղադրանքին, դեռևս ընթացքի մեջ է: Ներկայացված է նաև մեկ դեպքի նկարագիր՝ հոր կողմից անչափահաս աղջկան թրաֆիքինգի մեջ ներքաշելու վերաբերյալ: Երկու հոդվածներ իրազեկում են «Մարդիկ դժբախտության մեջ» ՀԿ-ի կողմից իրականացվող երեխաների թրաֆիքինգի ծրագրի մասին:

3. Թրաֆիքինգի դրսևորումները. Երևույթի՝ Հայաստանում հանդիպող դրսևորումների մասին խոսելիս, լրատվամիջոցները ուղիղ ներկայացնում են միջազգային փորձագետների կարծիքները: Մասնավորապես, Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչ Եվա Բյոդեի կարծիքով, Հայաստանում թրաֆիքինգի երևույթը դեռևս լավ ուսումնասիրված չէ, սակայն եղած տվյալներով, երևույթի դրսևորման 1-ին հորիզոնականը զբաղեցնում է սեռական շահագործումը, հաջորդը հարկադիր աշխատանքի դեպքերն են:

Աշխատանքային թրաֆիքինգի գոհերը մեծամասամբ տղամարդիկ են, քիչ դեպքերում՝ նաև կանայք, և, ինչպես նշված է հրապարակումներում, «շատ են նաև անչափահասների թրաֆիքինգի, մուրացկանության դեպքերը»:

Երեք հոդվածներում խոսվում է ՀՀ-ում ԵԽ դեսպան Ռատուլ դը Լյուցենբերգերի ընտանիքի կողմից ՀՀ քաղաքացի Ա. Դանիելյանին աշխատանքային թրաֆիքինգի ենթարկելու դեպքի մասին, ինչը լրագրողի կողմից ներկայացվում է իբրև «թրաֆիքինգ՝ դիվանագիտական մակարդակով»: Այս հոդվածներում շեշտադրված է արտերկրում աշխատանքի հրապուրիչ առաջարկների, ներկայացվող փաստաթղթերի նկատմամբ անհրաժեշտ զգուշավորության կարևորությունը:

Առանձին հոդվածները պնդում են, որ «երեխաներին մուրացկանության մեջ ներգրավելը դիտարկվում է որպես շահույթ ստանալու ձև, գնահատվում է որպես հարկադիր աշխատանքի ձևով դրսևորվող շահագործում»: Երեխաների թրաֆիքինգի այլ ձևերի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ներկայացված:

Հոդվածների մեծամասնության պնդմամբ, թրաֆիքինգի երևույթը շատ քիչ է ուսումնասիրված և լուսաբանված մեր երկրում, այն ավելի հաճախ ընկալվում է որպես միայն «սեռական ծառայությունների մատուցում»: Ըստ այդմ, որոշ հոդվածներում զգացվում է ջանքը՝ մարդկանց իրազեկելու. «Ե.Բյոդեի դիտարկումներով, հասարակական գիտակցությունը սովորաբար թրաֆիքինգը ընդունում է որպես մի բան, որը ենթադրում է սահմանի անցում, սակայն թրաֆիքինգի փաստը ոչ բոլոր դեպքերում է կապված սահմանն անցնելու հետ. այն կարող է լինել և սեռական շահագործում, և հարկադիր աշխատանք, և անչափահասներին դրդել մուրացկանությամբ զբաղվելու»: Բանախոսը կարծում է, որ Հայաստանը սկսել է հանդես գալ որպես «ընդունող երկիր» (հայտնաբերվել են Հայաստան բերված և այստեղ շահագործված խմբեր՝ հիմնականում ռուսաստանցի աղջիկներ, ովքեր աշխատել են գիշերային ակումբներում): Եվա Բյոդեի կարծիքով «...շատ հաճախ թվում է, որ այն երկրներում, որտեղ ավանդական արժեքները, ընտանեկան կապերը մեծ դեր ունեն, թրաֆիքինգը ընդհանրապես չի կարող գոյություն ունենալ, բայց միշտ չէ, որ այդպես է լինում, և թրաֆիքինգի երևույթն ավելի դժվար է այդ երկրներում հայտնաբերելը»:

Հրապարակումների գերակշիռ մասում, ներկայացնելով թրաֆիքինգի հասարակական ընկալումը, կարծիք է ներկայացվում, որ հասարակությունը անտարբեր է գոհերի նկատմամբ, ավելին՝ մերժում, դատապարտում ու մեղադրում է, կամ էլ՝ խղճահարությամբ վերաբերվում, բայց միևնույն է, հասարակությունը խուսափում է գոհերից և երևույթի մասին խոսելուց, ինչն իր հերթին նպաստում է, որ գոհերը օտարվեն, լռեն, թաքնվեն ու նորից դառնան գոհ կամ էլ իրենց նախկին փորձը կիրառեն՝ ուրիշ գոհեր փնտրելու համար:

4.Թրաֆիքինգի պատճառները. Թրաֆիքինգի պատճառների մասին խոսելիս լրագրողները հենվում են պաշտոնյաների հետ հարցազրույցներից ստացված տեղեկությունների վրա, որոնց պնդմամբ աղքատությունը, աշխատաշուկայի անկայունությունը, բնակչության ցածր կենսամակարդակը, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակը և բռնությունն ընտանիքում նպաստում են անձի խոցելիության ձևավորմանը և պարարտ դաշտ ստեղծում տարաբնույթ շահագործումների ենթարկվելու համար: Ցածր կենսամակարդակն ու կրթական ցենզը, աշխատանք գտնելու անհնարինությունը մարդուն դրդում են ռիսկային վարքի դրսևորումների: Դրան նպաստում է տեղեկացվածության ցածր մակարդակը և այն հանգամանքը, որ գոհերը խուսափում են դիմել իրավապահներին: Մեծ դեր ունի նաև հասարակության իրազեկվածության ցածր մակարդակը: Քաղաքացիները, երևույթին իրազեկված չլինելու պատճառով, հենվելով ծանոթ-բարեկամների աշխատանքային գայթակղիչ առաջարկների վրա, չեն փորձում անգամ ստուգել դրանց իսկությունը: Բարձր աշխատավարձի խոստումներով հրապուրված՝ անձանոթներին են վստահում իրենց փաստաթղթերը կամ աշխատանք ձեռք բերելու համար դիմում են աշխատանքի տեղավորման կասկածելի գործակալությունների աջակցությանը (հողվածներում ներկայացված է «Accept» աշխատանքի տեղավորման մասնավոր գործակալության հետ կապված դեպքը):

Հրապարակումների մեջ անդրադարձ է եղել նաև վաճառողուհիների և տաքսու վարորդների աշխատանքային պայմաններին, ինչը վկայում է, որ թրաֆիքինգի երևույթը միշտ չէ, որ ճիշտ է ընկալվում և մեկնաբանվում լրագրողների կողմից:

Ինչ վերաբերում է հետևանքներին, լրատվամիջոցներն այս մասին խոսում են հպանցիկ, մի քանի ընդհանուր փոքրիկ ակնարկներով միայն: Մեկ հրապարակման մեջ լրագրողն արձանագրում է, որ թրաֆիքինգը դաժան ու անկանխատեսելի է և կապված է մարդկանց ճակատագրի խեղաթյուրումների հետ և մեջբերում փորձագետի կարծիքը, որ «հասարակության մեջ անհրաժեշտ է սերմանել հանդուրժողականություն դժվար իրավիճակում հայտնված այս մարդկանց հանդեպ»:

5.Անդրադարձը երևույթի դեմ պայքարին. Լրատվամիջոցների մեծամասնությունը ուղղակի կամ անուղղակի ձևով կարծիք է հայտնում, որ չնայած բազմաթիվ միջոցառումներ են ձեռնարկվում, օրենքներ ու կոնվենցիաներ են ստորագրվում, վավերացվում, թրաֆիքինգն, այնուամենայնիվ, օր օրի մեծ ծավալներ է ստանում՝ հսկայական շահույթներ բերելով թրաֆիքյորներին:

Ուսումնասիրված հրապարակումներից 8-ն անդրադարձել են ԱՄՆ պետքարտուղարության զեկույցին (վերաբերում է Հայաստանի կառավարության՝ թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների/արդյունավետության գնահատմանը) և Թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով

ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչ Եվա Բյոդեյի այցին Հայաստան (ներկայացված են հատվածներ վերջինիս ելույթներից): ԱՄՆ պետքարտուղարության վերջին զեկույցի համաձայն՝ Հայաստանը հիմնականում համարվում է կոմերցիոն սեռական շահագործման նպատակով կանանց և աղջիկներին ՄԱԷ և Թուրքիա տեղափոխելու սկզբնաղբյուր երկիր: Աշխատանքային շահագործման նպատակով իրականացվում է հայ կանանց և տղամարդկանց թրաֆիքինգ դեպի Ռուսաստան: Հայաստանը, հիշյալ զեկույցի համաձայն, 4 խմբանոց սանդղակի 2-րդ խմբի հատուկ վերահսկման ցուցակից (որում գտնվում էր 2005-2008թթ.) տեղափոխվել է 2-րդ խումբ: Այնուհանդերձ, լրատվամիջոցները ներկայացնում են, թե նույն զեկույցը պնդում է, որ ՀՀ կառավարությունն ամբողջովին չի բավարարում թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին, թեև երկիրը լուրջ քայլեր է կատարում այդ ուղղությամբ (գոհերի պաշտպանության և թրաֆիքինգի վտանգների մասին հասարակության իրազեկության բարձրացման նպատակով ֆինանսական միջոցներ են տրամադրվում, 2008-ին ընդունվել է թրաֆիքինգի գոհերի ուղղորդման ազգային ծրագիր): Վերոհիշյալ զեկույցի մեջ արձանագրվում է նաև, որ հայ-թուրքական հարաբերությունների բացակայության պատճառով Հայաստանը չի կարողանում տեղեկանալ Թուրքիա գնացած իր քաղաքացիների մասին:

Լրատվամիջոցների գերակշիռ մասը բարձրացնում է թրաֆիքինգի գոհերի իրավունքների ու պաշտպանության, նրանց խոցելիության և անվտանգության հարցերը, իսկ ավելի շատ՝ երևույթի դեմ պայքարի խնդիրները: Հրապարակումներում կարծիք է հնչում, որ գոհերի նկատմամբ հասարակության և պատասխանատու կառույցների անբարյացակամ վերաբերմունքը, պետության և ՀԿ-ների կողմից ցուցաբերվող ոչ ադեկվատ աջակցությունը (չնայած տրամադրված մեծ միջոցներին), բացի ուղղակիորեն տվյալ գոհին վնասելուց, մեծապես խոչընդոտում են նաև երևույթի բացահայտման, գոհերի և նրանց շահագործողների/թրաֆիքյորների հայտնաբերման գործին (այս իմաստով, հատկապես ընդհանադիր մամուլում, շեշտադրված է ոստիկանության դերը): Այստեղից հետևում է նաև, որ դժվարանում է երևույթի դեմ պայքարի գործընթացը:

Լրատվամիջոցների պնդմամբ, թրաֆիքինգի գոհերի թիվը Հայաստանում մեծ չէ, սակայն երևույթն ինքնին անհանգստացնում է և հակազդման քայլեր է պահանջում (աղբյուրը՝ միջազգային փորձագետներից և ՀՀ՝ ոլորտի պատասխանատուներից ստացված տվյալները): Հարկ է նշել, որ դեպքերը դժվարությամբ են բացահայտվում, քանի որ շատերը պարզապես չեն ցանկանում կամ վախենում/ամաչում են խոսել այդ մասին: Նույն աղբյուրների հավաստմամբ, 2008 թվից, Հայաստանում ավելի գործուն միջոցներ են կիրառվում թրաֆիքինգի դեմ պայքարում՝ սկսած կառավարական, օրենսդրական մակարդակներից մինչև պրակտիկ

կյանքում հասարակության իրազեկումը, համագործակցությունը պետական և ոչ կառավարական կառույցների միջև, զոհերին իրական աջակցության ցուցաբերումը:

Վկայակոչելով ՀՀ Ոստիկանության տվյալները, հողվածներում արժարժվում է հետևյալ վիճակագրությունը. 2008թ. հարուցվել է 13 քրեական գործ՝ մարդկանց թուրքիա, ԱՄԷ և ՌԳ տեղափոխելու դեպքերով, 3 քրեական գործ՝ «երեխայի առուվաճառք» հողվածով և 1 քր. գործ՝ երեխաներին մուրացկանության դրդելու և շահագործելու համար: Վկայակոչելով ՀԿ-ներին, 2008թ. թրաֆիքինգի զոհերի թիվը կազմել է 34 մարդ: 2009-ի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացվել է վարույթ 15 քրեական գործերով, հայտնաբերվել և տուժող է ճանաչվել 20 զոհ, բոլորը՝ ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացիներ: Ընդ որում, շահագործման երկու դեպքը եղել է աշխատանքային, մեկը՝ մուրացկանության, մնացածը առնչվել են սեռական շահագործմանը: Թրաֆիքինգի դեմ պայքարը ոստիկանության կարծիքով, կլինի գործուն, եթե լիցենզիաներից և գործունեության իրավունքներից զրկվեն այն սատուները, զվարճանքի վայրերը, որտեղ հայտնաբերվում են թրաֆիքինգին նպաստող որջեր:

Առանձին լրատվամիջոցների համոզմամբ. «Երեխաներին մուրացկանության մեջ ներգրավելը դիտարկվում է որպես շահույթ ստանալու ձև, գնահատվում որպես հարկադիր աշխատանքի ձևով դրսևորվող շահագործում: Այլ խոսքով՝ գործ ունենք երեխաների թրաֆիքինգի դրսևորման հետ, որը կատարվում է բոլորիս և հատկապես ոստիկանության ու քաղաքային իշխանությունների աչքի առաջ: Հանուն օբյեկտիվության՝ պետք է նկատել, որ դատախազության և դատական մարմինների նախաձեռնությամբ մեզանում ևս սկսել է ձևավորվել դատական նախադեպ՝ միջազգային կառույցների դիրքորոշմանը համապատասխան: Երեխաներին մուրացկանության դրդելու երևույթը դատախազությունը սկսել է գնահատել որպես թրաֆիքինգ և հենց այդ հողվածով առաջադրել մեղադրանք, ինչը հիմնավորված է համարել նաև դատարանը» (մեջբերում ԵՐԿԻՐ օրաթերթից, որտեղ խոսքը վերաբերում է Վարդաշենի և Նուբարաշենի կրթահամալիրների 4 սաներին մուրացկանության դրդող 34-ամյա Գ.Հ.-ի գործին):

6.Հանրային իրազեկում. Ուսումնասիրված հրապարակումներում տեղեկություն կա այն մասին, որ 2009թ. հունիսին Ծաղկաձորում իրականացվել են ճանաչողական ուսումնական դասընթացներ լրագրողների համար՝ թրաֆիքինգի թեմայով:

Հրապարակումներում հատուկ ուշադրություն է դարձվել երիտասարդների շրջանում թրաֆիքինգի երևույթի մասին իրազեկմանը. մամլո հրապարակումներում տեղեկատվություն է տրված 2009 թվի ընթացքում երիտասարդների համար Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում կազմակերպված 4-օրյա սեմինարի, Գավառի մարզային երիտասարդական կենտրոնում կազմակերպված 5-օրյա սեմինար-քննարկման, Լոռու

մարզում ստեղծված Թրաֆիքինգի դեմ պայքարի երիտասարդական ցանցի, «Մարդկանց առևտուրը կանխելուն ուղղված դպրոցական կրթություն Հայաստանում, Վրաստանում եւ Ադրբեջանում» տարածաշրջանային ծրագրի գործարկման մասին՝ Շվեյցարիայի կառավարության ֆինանսավորմամբ, որն իրականացնում է Միգրացիայի միջազգային կազմակերպությունը: Հիշյալ ծրագրի նպատակն է հատուկ մշակված ուսուցողական նյութերով բարձրացնել ուսուցիչների, աշակերտների, ծնողների իրազեկվածության աստիճանը:

Հարկ է նշել, որ թրաֆիքինգի վերաբերյալ առավել ուշագրավ նյութեր կարելի է հանդիպել «Հետք»-ի հրապարակումներում:

Միայն մի քանի հրապարակումներում բարձրացված է թրաֆիքինգի գոհերին հասարակություն վերահիմնեցրելու հարցը, որն այսօր Հայաստանում լուրջ ուշադրության կարիք ունի: Ըստ լրատվամիջոցների, գոհերի աջակցության խնդիրներով զբաղվում են երեք հասարակական կազմակերպություններ, որոնցից երկուսն ունեն ապաստարաններ: 2009-ի պետբյուջեում արդեն իսկ նախատեսված են ծախսեր՝ պետական ապաստարան ստեղծելու համար: Ըստ այդ հրապարակումների, երկրում գոհերի ինտեգրացիայի լուրջ ծրագրեր դեռևս չեն իրականացվում, իսկ գործադրվող ջանքերի մասին խոսվում է ենթատեքստերով և վերապահումներով:

Լուսաբանման բացերը (որոշ հետևություններ)

▪ **Տերմինաբանական խառնաշփոթ.** Ավելի քան 21 տարբեր որակում է տրվում երևույթին, ինչը խոչընդոտում է երևույթի ադեկվատ ընկալմանը հանրության կողմից և ավելացնում տեղեկատվական շփոթը: Կոնկրետ երեխաների առումով օգտագործվում է 3 տարբեր տերմին՝ 1) երեխաների թրաֆիքինգ 2) շահագործում/մուրացկանություն 3) երեխաների առուվաճառք: Որոշ հրապարակումներում Հայաստանը ներկայացված է որպես ընդունող, առաքիչ, կամ տարանցիկ երկիր, մինչդեռ ցանկալի է, որ լրատվամիջոցները գործածեն ընդունված տերմինները՝ ծագման և նպատակակետ երկիր:

▪ **Ընկալման խնդիրը.** Բացի տերմինաբանական անհարթություններից, գրեթե չեն հանդիպում հոդվածներ, որոնք կլուսաբանեին երևույթի ճանաչման, ընկալման փոփոխությունների խնդիրը, ինչը խիստ արդիական է՝ հաշվի առնելով հանցագործությունների ներկայիս վերաորակավորումը (օրինակ՝ մուրացկանության դրդելը): Ըստ էության, դա կապված է լրագրողների սեփական ընկալումների հետ:

▪ **Պաշտպանության խնդիրները.** գոհի համակողմանի պաշտպանության խնդիրներին անդրադարձը հրապարակումներում հատվածային բնույթ է կրում: Որոշ հոդվածներում

խոսելով պաշտպանության գործընթացի մասին, հեղինակները սահմանափակվում են միայն ապաստարանների մասին խոսելով: Այս պարագայում ուշադրություն չի դարձվում փոխհատուցման, ինտեգրման խնդիրներին, դրանց լուծված չլինելու հանգամանքի ազդեցությանը մարդկանց կյանքի պատմությունների վրա: Լավագույն դեպքում այդ խնդիրները արժարժված են հպանցիկ:

▪ **Իրազեկման և պայքարի այլ միջոցների կոորդինացման խնդիրները.** Որևէ հրապարակման մեջ անդրադարձ չի արվում տարաբնույթ իրազեկման ծրագրերի թողած ազդեցությանը՝ ուշադրություն հրավիրելու իրազեկման աշխատանքների հետևողական, կանոնակարգված կազմակերպման խնդիրներին:

▪ **Հոդվածների մակերեսայնությունը.** Հոդվածների մեծամասնությունը հպանցիկ ու մակերեսային են անդրադառնում երևույթի մեկնաբանմանը. զգացվում է նյութի պատրաստման հապճեպությունը, հեղինակները կարծես մեծ ջանքեր չեն փորձում գործադրել՝ ապահովելու հոդվածում արժարժվող նյութի վերաբերյալ տարբեր աղբյուրների տվյալները, դրանք համադրելու, ստուգելու կամ առնվազն տարբեր տեսանկյուններ հանձնելու ընթերցողի դատին:

▪ **Մոդայիկ թեմա.** Որոշ հոդվածների ընթերցումից տպավորություն է ստեղծվում, որ դրանք ավելի շատ տուրք են տալիս հետաքրքրության բավարարմանը, և նպատակ չունեն բարձրացնել մարդկանց իրազեկվածությունը: Թերևս միայն «Հետք»-ի հրապարակումներում է ներկայացվում թեմայի խորությունը, մոտեցման լրջությունն ու պրոֆեսիոնալիզմը:

▪ **Նախատրամադրվածության խնդիրը.** Հոդվածներում անուղղակիորեն արտացոլվում է հեղինակների վերաբերմունքը զոհերի հանդեպ, մեծ մասամբ դա կարեկցանքն է, սակայն, անմիջապես հետո, զոհի հանգամանքը օգտագործվում է որպես առիթ՝ պետական մարմինների, մանավանդ ոստիկանության անգործությունը ընդգծելու: Մյուս կողմից, հոդվածներում արտացոլվում են զոհերին օգնող հասարակական կազմակերպությունների գործունեության և նրանց ստացած դրամական միջոցների խիստ անհամապատասխանության խնդիրները: Այս հանգամանքը կարող է համարվել լրագրողական սուր դիտողականություն (ենթադրելով, որ օգտակար կլինի դոնորների և, ընդհանուր առմամբ, հանրության համար), սակայն, մյուս կողմից, հոդվածները այդպիսով խորացնում են անվստահությունը թե պետական մարմինների, թե օգնող հասարակական կազմակերպությունների հանդեպ: Այս հանգամանքը դժվար թե դրականորեն ազդի զոհերի բացահայտման, վերջիններիս ինքնակամ օգնության դիմելու հավանականության վրա: Այն նվազեցնում է հանրության մեջ ընդհանուր ապահովության զգացումը: Հիմնական ասելիքը կարծես պարփակվում է՝ «չորս բոլորը անվստահելի են» արտահայտության մեջ:

- **Անբավարար համագործակցության խնդիրը.** Ըստ էության, գոհերի իրական կարիքները և դրանց բավարարման նպատակով ՀԿ-ների, պետության և այլ աղբյուրների մոբիլիզացման անհրաժեշտությունը լուսաբանելու փոխարեն հողվածների ենթատեքստում խանդ է զգացվում այն հասարակական կազմակերպությունների հնարավորությունների հանդեպ (նրանց դրամաշնորհների), որոնք ունեն գոհերին օգնելու առաքելություն: Այսպիսով, հողվածների շեշտադրումները ավելի ապակառուցողական բնույթի են, քան մոբիլիզացնող: Նման մոտեցումը կարող է անդրադառնալ նաև դոնորների վստահության վրա, ինչը կարող է հանգեցնել գոհերին տրամադրվող աջակցության ծավալների ոչ ցանկալի փոփոխությունների:
- **Միակողմանի տվյալներ.** Վիճակագրական տվյալներ ներկայացնելիս հեղինակները հենվում են միայն պաշտոնական աղբյուրների վրա՝ շրջանցելով ՀԿ-ների հարուստ տեղեկատվությունը: Նկատվում է նաև հակառակ միտումը. միայն ՀԿ-ների տվյալների վրա հենվելը՝ առանց համեմատելու դրանք ոստիկանության տվյալների հետ: Ի դեպ, գրեթե ոչ մի հողվածում չեն օգտագործվել ՀԿ-ներում կուտակված փորձագիտական գիտելիքները, թեև 4 հողվածի համար աղբյուր է հանդիսացել ՀԿ-ների տեղեկատվությունը:
- **Անդրադարձը հանցագործներին.** Հանցագործներին լսելու ցանկություն ցուցաբերված է միայն 1 հողվածում (երեխայի մուրացկանության առնչությամբ), և չեն լուսաբանվում հանցագործության մոտիվները:
- **Օրենքների լուսաբանում.** Գրեթե անդրադարձ չկա ոլորտը կարգավորող օրենքներին և պատժամիջոցներին, թեև հողվածների հեղինակները կարող էին առիթն օգտագործել՝ իրազեկելու հանրությանը:
- **Էթիկական խնդիրներ.** Որոշ հողվածներ էթիկական սկզբունքների խախտումներով են՝ հրապարակված են կոնկրետ անուն, տվյալներ, որոնք գոհին դնում են ավելի խոցելի վիճակում: Ոչ միշտ է պահպանվում գոհի անձնական տվյալների բավարար գաղտնիությունը: Երբեմն օգտագործվում են էթիկական տեսանկյունից անընդունելի որակումներ («պոռնկություն») և այլն:

Գլուխ II

Երեխաների թրաֆիքինգը՝ թիրախ խմբերի իրազեկվածության համատեքստում. քանակական հետազոտության տվյալների վերլուծություն

2.1 Իրազեկվածություն և աղբյուրներ

Բնակչության հետ իրականացված հարցումները ցույց տվեցին, որ երևույթի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը բավականին բարձր է: Ըստ փորձագիտական հարցման և երեխաների հետ աշխատող մասնագետների հետ իրականացված ֆոկլոր խմբերից ստացված տեղեկատվության, այդ արդյունքը ձեռք է բերվել 2002-ից ի վեր ընթացող իրազեկման աշխատանքների շնորհիվ²⁴:


Գրեթե բոլոր փորձագետները պնդում էին, որ հսկայական աշխատանք է տարվել ՀԿ-ների կողմից հանրությանը իրազեկելու նպատակով: Մեծ թվով տեղեկատվական նյութեր, (բուկլետներ, պլակատներ, էջանիշներ), որոնք պարունակում են տեղեկատվություն երևույթի վերաբերյալ, ներառյալ «Թեժ գիծ» օգնության հեռախոսահամարը, պատրաստվել և բաժանվել են բնակչությանը՝ հնարավոր գրեթե բոլոր ուղիներով²⁵: Ըստ փորձագետների մեծամասնության, այդ նյութերը մեծ մասամբ հարմարեցված են եղել բնակչության տարբեր լսարանների պահանջներին (երիտասարդներ, արտագնա աշխատանքի մեկնողներ, միգրանտներ, տուրիզմի նպատակով մեկնողներ և այլն), այնպես, «որ ասելիքը նպատակակետին հասնի», բայց երեխաների լսարանին՝ ոչ այնքան:

Թիրախ խմբերի նման տարբերակված մոտեցման արդյունքները երևում են սույն հետազոտության տվյալներով. իրազեկվածության անհամեմատ ավելի բարձր ցուցանիշ է արձանագրվել ընդհանուր բնակչության, քան երեխաների շրջանում, (գծապատկեր 4)

²⁴ (թվային համեմատություն հնարավոր չէ անել, տվյալների բացակայության պատճառով, սակայն, ինչպես պնդում են փորձագետները, գործընթացներն այս ոլորտում ակտիվացել են սկսած 2002 թ-ից):

²⁵ «Օրինակ, կազմակերպված միջազատումների ժամանակ այդ նյութերը տրվում են մասնակիցներին: Տրվում են նյութեր նաև մարզից դուրս մեկնող երթուղային տաքսիների և ավտոբուսների ուղևորներին, Թուրքիա մեկնողներին/գործակալություններում/: Այլ ՀԿ-ների կողմից իրականացվող միջոցառումների ժամանակ հրավիրվում են մեր կազմակերպության ներկայացուցիչները՝ խոսելու այս թեմայով: Տեղական հեռուստատեսությամբ եթերներ են կազմակերպվում մեր մասնակցությամբ, թերթերում տպագրվում են հոդվածներ», ՀԿ փորձագետ

Գծապատկեր 4. Տնային տնտեսություններում հարցվածների և երեխաների իրազեկվածության մակարդակը




Այսպես, տնային տնտեսություններում հարցվածների 86,7%-ը լսել էր մարդկանց/երեխաների թրաֆիկինգի մասին, մինչդեռ երեխաների՝ միայն 51,5%-ը:

Ընդհանուր առմամբ, բնակչության իրազեկվածությունը ավելի բարձր է Երևան քաղաքում (89,1%) և գյուղերում (85,8%): Այն համեմատաբար ցածր է մարզային քաղաքներում՝ 85%²⁶:

Հինգ մարզերի թվում, որտեղ բնակչության հարցումից բացի իրականացվել են նաև երեխաների հարցումներ, երեխաների իրազեկվածության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Երևանում, իսկ ամենացածրը՝ Սյունիքի մարզում: Արարատում և Լոռիում նույնպես բարձր անտեղյակություն է գրանցվել՝ համապատասխանաբար՝ 36,1% և 37,6%: Ընդհանուր բնակչության և երեխաների իրազեկվածության ցուցանիշների համեմատությունը ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 5-ում:

Գծապատկեր 5. Հարցվողների անտեղյակության աստիճանը ըստ մարզերի



²⁶ ընդհանուր բոլոր մարզերի թվում՝ բնակչության իրազեկվածության մակարդակը ամենաբարձրը Վայոց ձոր մարզում էր, իսկ ամենացածրը՝ Շիրակի մարզում (տես հավելվածում Գծապատկեր Հ1) :

Գծապատկեր 5-ից ակնհայտ է, որ երևույթից անտեղյակ երեխաները բոլոր մարզերում շատ ավելի մեծ մաս են կազմում, քան չափահասները, բացառությամբ Երևանի, որտեղ չափաբաժինները հավասար են:

Երեխաների տեղեկացվածության մակարդակի վերաբերյալ մասնագետների կարծիքները ֆոկուս խմբերում հակադրվում էին. ոմանք կարծում էին, որ սեփական հետաքրքրվածության, սեմինարներին, «Իրավունքի», «Կյանքի հմտությունների» դասընթացներին, մանկական ֆիլմերի դիտման և տեղեկատվության ժամանակակից աղբյուրներից օգտվելու, մեծերի համեմատ, ավելի մեծ հմտություններ ունենալու շնորհիվ երեխաները ներկայումս բավականին տեղեկացված են: Մյուսները կարծում էին, որ երեխաները իրազեկ չեն, ուստի նրանք խոցելի են ոչ միայն տարիքից ելնելով, այլ նաև անիրազեկ լինելու պատճառով: Վերջին միտքը հաստատվեց փորձագետների մի խմբի կողմից. նրանք հավաստիացնում են, որ դա հատկապես զգալի է հաստատությունների խնամքից դուրս եկող շրջանավարտների շրջանում, «...որոնք հեշտությամբ դառնում են թրաֆիքյորների թիրախը»*:


Ըստ փորձագետների, «երեխաների լսարանին ուղղված իրազեկման գործընթացները նոր են միայն ծավալվում», ինչը ուղղակիորեն արտացոլված է նրանց իրազեկվածության մակարդակի ցուցանիշում: Ըստ էության, մանկատներում ապրող երեխաների իրազեկվածության մակարդակը, ՀՕՄ-ի կողմից 2005թ. իրականացված հետազոտության արդյունքների հետ համեմատած, գրեթե չի աճել*:

Ըստ հաստատության տիպի, առավել տեղեկացված էին խնամքի կենտրոնի երեխաները, իսկ հանրակրթության երեխաները՝ ամենաքիչը (տես գծապատկեր 6), աղջիկներն ավելի շատ, քան տղաները (գծապատկեր՝ 7):


* Ինչպես և դիտարկվել էր գրականության բովանդակային ուսումնասիրության ժամանակ:

* «...հարցվածների մի զգալի տոկոս բացարձակապես անտեղյակ էր թրաֆիկինգի մասին. հատուկ դպրոցների և մանկատների երեխաների 43.5% -ը, նրանց ծնողների և խնամողների 41.3%-ը, այս հաստատությունների շրջանավարտների 36.7%-ը, և հատուկ դպրոցների և մանկատների դաստիարակների և խնամողների 12.8%-ը չեն լսել այդ մասին»: Հայաստանում մանկատների և հատուկ դպրոցների երեխաներ. թրաֆիկինգի և շահագործման պոտենցիալ գոհեր, ՀՕՄ 2005: Քանի որ նշված հետազոտության մեջ դիտարկվել է երեխաների այն խումբը, որը գտնվում է մանկատներում, ուստի համեմատությունը արված է միայն այդ ցուցանիշի համար:

Գծապատկեր 6 Իրազեկվածության մակարդակը ըստ հաստատության տիպի.




Գծապատկեր 7. Երեխաների տեղեկացվածության մակարդակը՝ ըստ սեռի.



Որոշակի առանձնահատկություն է նկատվում հաստատության երեխաների դեպքում. որքան հաստատությունում գտնվելու տևողությունը երկար է, այնքան բարձր է իրազեկվածության մակարդակը (գծապատկեր 8): Միևնույն ժամանակ, ընտանիքի հետ հանդիպումների հաճախականության գործոնը իրազեկվածության տեսակետից այս խմբի համար նշանակալից չէ:


Գծապատկեր 8. Երեխաների տեղեկացվածության մակարդակի կապը հաստատությունում գտնվելու տևողության հետ.



Ընտանիքի բարեկեցության գործոնը. Հարցված ընտանիքներում բարեկեցության մակարդակի և թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի միջև²⁷ կապի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ծայրահեղ աղքատ» խմբում իրազեկ էին 85.2%, «աղքատ»-ների՝ 87.6%, «ոչ աղքատ»-ի դեպքում՝ 90,9%, ինչը նշանակում է, որ նկատվում է իրազեկվածության մակարդակի աճ՝ կախված ապահովության մակարդակից (որքան աղքատ՝ այնքան ոչ իրազեկ):

Հարցված երեխաների խմբում, սուբյեկտիվ գնահատմամբ իրենց ընտանիքների բարեկեցության մակարդակը «ծայրահեղ աղքատ» համարածների իրազեկվածության մակարդակը կազմել է 73%, «աղքատ»-ների խմբում՝ 41%, իսկ «ոչ աղքատ»-ների՝ 44 %-ը (զծապատկեր 9): Ըստ այդմ, ի տարբերություն մեծերի, առավել իրազեկված են այս երևույթի մասին այն երեխաները, ովքեր «ծագում են» աղքատ ընտանիքներից: Այս հանգամանքը բացատրվում է աղքատ ընտանիքներից «ծագող» երեխաների՝ շահագործման երևույթի տարբեր դրսևորումների հետ ունեցած առնչության ավելի մեծ հավանականությամբ:


Գծապատկեր 9. Երեխաների իրազեկվածության մակարդակի և նրանց ընտանիքների բարեկեցության մակարդակի սուբյեկտիվ գնահատականի միջև առնչությունը



Երեխաների թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի և տարբեր գործոնների միջև առնչության դիտարկումը ցույց է տալիս, որ առավել նշանակալի գործոն է հանդիսանում **կրթությունը**: Կրթության մակարդակի աճի հետ ավելանում է տեղեկացվածությունը (կորելյացիայի գործակիցը հավասար է - 0.128, զծապատկեր 10):


²⁷ Ըստ բարեկեցության մակարդակի՝ հարցվող տնային տնտեսությունների խմբերը առանձնացվել են՝ հաշվի առնելով տն.տնտեսության ամսեկան եկամուտը 1շնչի հաշվարկով և օգտագործելով նվազագույն սպառողական զամբյուղի մեծությունը մեկ շնչի հաշվով (36.000 դրամ) (<http://www.armstat.am>) Ծայրահեղ աղքատ համարվել են բացարձակ աղքատության շեմի կեսից պակաս եկամուտ ունեցող տնտեսությունները:

Գծապատկեր 10. Հարցված չափահասների կրթական միջին մակարդակի և իրազեկվածության մակարդակի միջև կապը



Ինչպես և սպասելի էր, նույն օրինաչափությունը դիտարկվում է նաև երեխաների դեպքում. (գծապատկեր 11)

Գծապատկեր 11. Երեխաների իրազեկվածությունը ըստ դասարանների



Բնակչության շրջանում երեխաների շահագործման առավել քիչ հայտնի տեսակները վերաբերվել են «խիստ անհամապատասխան ամուսնություններին», երեխաների առևանգմանը, անօրինական որդեգրություններին ու երեխաներին թմրանյութերի վաճառքի/տեղափոխման մեջ ներգրավելուն: Երեխաներին այլ բնակավայր տեղափոխելը աշխատացնելու կամ այլ տիպի շահագործման նպատակով՝ հատկապես քիչ հայտնի տեսակ է:

Այլ գործոնների ազդեցությունը. Դիտարկվել է, որ այն երեխաները, ովքեր ընտանիքում առնվազն 1 միզրանտ ունեն, առավել իրազեկված են: Մի փոքր ավելի տեղեկացված էին այն

ընտանիքները, ովքեր **դպրոցահասակ երեխաներ** ունեն, թեև իրենք՝ երեխաները, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, համեմատաբար պակաս տեղեկացված են: Պետք է նշել, որ հարցվածների շրջանում տեղեկացվածության մակարդակի կապը որոշ այլ գործոնների հետ (ընտանիքում առկա խոցելի անդամների թիվը, աշխատող անդամների թիվը, ընտանիքում զբաղված անդամների աշխատանքի ոլորտը) նշանակալի չէ:

Բնակարանային պայմանները էական գործոն են, երբ խոսքը գնում է ոչ թե իրազեկվածության, այլ երևույթի հետ առնչվելու մասին (մանրամասն՝ «առնչություններ» մասում):

Ինֆորմացիայի աղբյուրի առումով (աղյուսակ 3) տնային տնտեսությունների հարցումը ցույց տվեց, որ իրազեկման աղբյուրներն, ըստ նշանակալիության, հետևյալն են. հեռուստատեսություն՝ 48,5%, ընկերներ/ծանոթներ՝ 20,8%, մամուլ՝ 11,9% ֆիլմեր՝ 9,3%, այն դեպքում, երբ երեխաների համար դա հեռուստատեսությունն է՝ 40,3%, դպրոցը՝ 19,8%: Ընկերները, կամ «բերանից-բերան» տարբերակը երեխաների համար հեռուստատեսությունից հետո ամենանշանակալիցն է՝ 25,4%:

Աղյուսակ 3. Տեղեկատվության աղբյուրը


#	Ինֆորմացիայի աղբյուրը	Տնային տնտեսություն	Երեխաներ
		%	%
1	հեռուստատեսություն	48,5	40,3
2	իրազեկող հոլովակներ	1,1	0
3	գեղարվեստական ֆիլմեր	9,3	0
4	ռադիո	3,8	0
5	մամուլ	11,9	0
	դպրոց	-	19,8
6	տեղեկատվական թերթիկներ	0,9	-
7	սոցիալական միջավայր ²⁸	20,8	25,4
8	ինտերնետ	2,0	2,9
9	ուստիկանություն	0,6	0
10	տարատեսակ սեմինարներ	1,0	7,4
11	Այլ	0,1	4,2
	ընդամենը պատասխաններ	100,0	100,0

²⁸ Ընկերներ, հարևաններ, ծանոթներ, ընտանիքի անդամներ և այլն...

Աղյուսակ 3-ից ակնհայտ է, որ թե՛ մեծերի, և թե՛ երեխաների «լսարանների» համար, ամենաէական միջոցը հեռուստատեսությունն է, մյուս միջոցների չափաբաժինները, ըստ կարևորության, տարբեր են²⁹:

Այսպես, «թրաֆիքինգ» տերմինը, ինչպես նշվեց իրազեկվածության բաժնում լսել է երեխաների 51.5%-ը, իսկ երևույթի առանձին դրսևորումների հետ ծանոթ լինելու պատկերը խիստ տարբեր է՝ կախված դրսևորման տեսակից: Մասնավորապես, երեխաների հանդեպ անցանկալի արարքներից մինչև թրաֆիքինգ կամ այն հիշեցնող դրսևորումների 13 տարբեր իրավիճակների հետ երեխաների ծանոթ լինելու վերաբերյալ կատարված հարցումներից պարզվել է, որ երեխաները առավել իրազեկ են «ստիպողական մուրացկանության»՝ 78,2% «աշխատանք առանց վարձատրության կամ չնչին վարձատրությամբ», «երեխաների առևանգում» տարբերակին՝ 72.7%, իսկ «գողության մղելու» տարբերակին՝ 69,1%: Այսպիսով, այս տեսակների մասին երեխաները ավելի են տեղեկացված, քան «թրաֆիքինգ» տերմինին, որպես այդպիսին: (**Գծապատկեր 12**)

Գծապատկեր 12. Երեխաների տեղեկացվածությունը անցանկալի իրավիճակների տեսակներին (երբևէ լսել է՞ր)



Ընդհակառակը, երեխաները ավելի քիչ են ծանոթ (տեղեկացված) այնպիսի դրսևորումների հետ, ինչպիսին են «ստիպողական մարմնավաճառությունը», «զվարճանքի վայրերում մատուցող աշխատելը/ պարելը», աշխատանքը՝ վտանգավոր պայմաններում, ծնողների ունեցած պարտքի դիմաց, կամքին հակառակ, որոնք, ըստ էության, նկարագրում են թրաֆիքինգ կամ դրան մոտ իրավիճակ, քան տեղեկացված են «թրաֆիքինգ» տերմինի մասին:

²⁹ Այս հանգամանքը, ըստ էության, պետք է արտացոլվի մեծերի և երեխաների լսարանների իրազեկման համար միջոցների ընտրության մեջ:

Ի դեպ, ամենաքիչը երեխաները տեղեկացված էին «պոռնոգրաֆիական նպատակներով նկարահանվելու» տարբերակին (20%):

Թրաֆիքինգ հիշեցնող կամ թրաֆիքինգի նման իրավիճակներին ու դրա որոշ դրսևորումների վերաբերյալ երեխաների իրազեկվածության մակարդակը տարբերվում է թրաֆիքինգ տերմինի հետ ծանոթ լինելու պատկերից. դրսևորումների որոշ տեսակների հետ երեխաները ավելի ծանոթ են, քան իրազեկված (թրաֆիքինգին) և, ընդհակառակը (ավելի շատ են իրազեկ «թրաֆիքինգ» բառին, քան դրսևորման որոշ տեսակներին):³⁰

Երեխաների իրազեկվածության վերաբերյալ ստացված պատկերը վկայում է իրավիճակի ռիսկայնության մասին. երեխաների իրազեկվածությունը բավականին ցածր է, իսկ որքան անտեղյակ՝ այնքան խոցելի: Ակնհայտորեն, երեխաներին՝ որպես իրազեկման թիրախ դիտարկելու գործընթացները երկրում դեռ նոր են ծավալվում և հետ են մնացել բնակչության իրազեկման գործընթացներից: Մի քանի փորձագետներ այս իրավիճակը բացատրում են նախ և առաջ ինքնին երևույթի, ապա այդ երևույթը երեխաներին մատչելի կերպով ներկայացնելու բարդությամբ: Մյուսները հակված են կարծելու, որ երեխաների «հերթը» անարդարացիորեն է ուշացել, քանի որ «ճիշտ է՝ քիչ են³¹ երեխաների թրաֆիքինգի բացահայտված դեպքերը, բայց երևույթը աներկբայորեն առկա է նաև երեխաների շրջանում, ուստի ուշացնելը ի վնաս է աշխատում»:

Այսպիսով.

- Տնային տնտեսություններում հարցվածների 86,7% լսել էր մարդկանց/երեխաների թրաֆիքինգի ենթարկելու երևույթի մասին, մինչդեռ երեխաների՝ միայն 51.5%:
- Բնակչության իրազեկվածությունը ավելի բարձր է Երևան քաղաքում (89.1%) և գյուղերում (85.8%): Համեմատաբար, այն ցածր է մարզային քաղաքներում՝ 85%:
- Երեխաների իրազեկվածության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Երևանում, իսկ ամենացածրը՝ Սյունիքի մարզում: Իրազեկվածության մակարարդակը ցածր է նաև Արարատում և Լոռիում:
- Ըստ էության, մանկատներում ապրող երեխաների իրազեկվածության մակարդակն առանձնապես չի աճել՝ համեմատած 2005թ. իրականացված հետազոտության տվյալների հետ:

³⁰ Դժվար է պնդել, որ շահագործման տարբեր տեսակների վերաբերյալ երեխաների առնչությունները (դրանց ծանոթ լինելը) անպայման վերաբերում է թրաֆիքինգին, սակայն ակնհայտ է, որ երևույթը հստակ ճանաչված չէ:

³¹ «...երեխաներին թրաֆիքինգի ենթարկելու առնչությամբ հարուցված 3 քրեական գործերի առկայությունը համոզել է անգամ ամենաօպտիմիստ մասնագետին, որը հակված էր մտածել, որ դժվար թե Հայաստանում թրաֆիքինգ դրսևորվի երեխաների հանդեպ ... », փորձագետի հետ հարցազրույցից)

- Ըստ հաստատության տիպի, առավել տեղեկացված էին խնամքի կենտրոնի երեխաները, իսկ հանրակրթության երեխաները՝ ամենաքիչը:
- Աղջիկներն ավելի շատ են տեղեկացված, քան տղաները:
- Բնակչության մեջ նկատվում է իրազեկվածության մակարդակի աճ՝ կախված ապահովության մակարդակից (որքան աղքատ՝ այնքան ոչ իրազեկ), երեխաների մոտ հակառակն է՝ որքան աղքատ, այնքան իրազեկ:
- Կրթության մակարդակի աճի հետ ավելանում է տեղեկացվածությունը:
- Այն երեխաները, ովքեր ընտանիքում ունեն առնվազն 1 միզրանտ, առավել իրազեկված են: Մի փոքր ավելի տեղեկացված էին այն ընտանիքները, ովքեր դպրոցահասակ երեխաներ ունեն: Բնակարանային պայմանները էական գործոն են, երբ խոսքը գնում է երևույթի հետ առնչվելու մասին (մանրամասն՝ «առնչություններ» մասում):
- Մեծերի իրազեկման հիմնական աղբյուրներն են՝ հեռուստատեսություն, ընկերներ/ծանոթներ, մամուլ, ֆիլմեր, այն դեպքում, երբ երեխաների համար դա հեռուստատեսությունն է, ընկերները կամ «բերանից-բերան» տարբերակը, ապա դպրոցը:
- Ակնհայտորեն երեխաների իրազեկման աշխատանքները հետ են մնացել բնակչության իրազեկման գործընթացներից:
- Երեխաների իրազեկվածությունը բավականին ցածր է, իսկ որքան անտեղյակ՝ այնքան խոցելի:
- Երեխաները ավելի շատ տեղեկացված են թրաֆիքինգի/շահագործման տարբեր դրսևորումների մասին, քան կոնկրետ թրաֆիքինգի տերմինին ու երևույթին՝ որպես այդպիսին:

2.2 Դրսևորումներ և հանդիպած իրավիճակներ


Սույն հետազոտության շրջանակներում երեխաների թրաֆիքինգի երևույթին բախվելու հանգամանքը բացահայտելու մոտեցումն մեծերի և երեխաների խմբերի համար ընթացել է որոշ առանձնահատկություններով՝ հաշվի առնելով խմբերի տարբերությունները:

Ի տարբերություն մեծերի, երեխաների դեպքում (ինչպես և նշվել է մեթոդաբանության մեջ), հանդիպած դեպքերը պարզելիս, «թրաֆիքինգ» բառի ուղիղ օգտագործումը նպատակահարմար չի գտնվել, քանի որ երեխաները պարզապես կարող էին ծանոթ չլինել կոնկրետ տերմինին, միևնույն ժամանակ, հնարավոր է, որ ծանոթ (առնչված) լինեին շահագործման տարբեր դրսևորումներին: Տերմինը, այսպիսով, օգտագործվել է միայն պարզելու համար տեղեկացվածությունը, իսկ տարածվածությունը պարզելու համար կիրառվել է հատուկ մոտեցում (նույն մոտեցումը կիրառվել է նաև ընկալումը պարզելու համար). երեխաների հանդեպ վատ վերաբերմունքի և հարկադրանքի/շահագործման ավելի ընդհանրական տարբերակների հետ (օրինակ՝ հարկադրական աշխատանք, «հարկահավաքություն»), ոչ օրինական գործողությունների պարտադրանք և այլն) երեխաներին ծանոթ համարված պատասխաններից ֆիլտրվել են այն պատասխանները, որոնք երեխաները որակել են որպես «թրաֆիքինգ»: Այսպիսով, հնարավոր է դարձել դատողություն անել, թե երեխաների որ մասն է հանդիպել թրաֆիքինգ հիշեցնող դրսևորումների հետ: Այս «հնարքը» թույլ է տվել նաև պարզել, թե հարկադրանքի դրսևորման այն կոնկրետ տեսակները, որոնց անձամբ բախվել են, երեխաները ինչպե՞ս են որակում՝ թրաֆիքինգ, շահագործում, թե՞ այլ կերպ: Ըստ պատասխանների, երեխաների մեկ երրորդը ընդհանրապես չի բախվել որևէ իրավիճակի հետ, իսկ 13,8%-ը բախվել է հարկադրանքի³² տարբեր դրսևորումների հետ՝ հարկադրական աշխատանքի պարտադրանք, ոչ օրինական գործողությունների պարտադրանք, «հարկահավաքություն», սեռական բռնություններ (գծանկար13): Սեռական բռնության և հարկադրական աշխատանքի տարբերակների դեպքում երեխաների մեջ ավելի մեծ մաս են կազմում 9-11 դասարաններում սովորող աղջիկները, իսկ ոչ օրինական գործողությունների և հարկահավաքության պարագայում՝ նույն դասարաններում սովորող տղաները և նրանց թվում ավելի շատ ծայրահեղ աղքատ, ինչպես նաև աղքատ ընտանիքների երեխաները (հավելված, գծանկարներ Հ 5,6,7): Ինչպես երևում է գծանկար 14-ից, հարկադրանքի տարբեր դրսևորումների հանդիպած երեխաների խմբում հաստատություններում գտնվող երեխաները ավելի մեծ չափաբաժին ունեն, ինչը բացատրելի


³² Թեև երեխաների հանդեպ վերաբերմունքի մյուս ձևերի վերաբերյալ պատկերը բավականաչափ հետաքրքրական է ստացվել, տվյալ վերլուծական նյութում հատկապես կարևորվել են հարկադրանքի ձևերը:

է, քանի որ նրանց կենսագրության մեջ հիմնականում բռնության, հարկադրանքի և այլ անցանկալի իրավիճակներն են դառնում պատճառ՝ տեղավորվելու հաստատություններում:

Գծապատկեր 13. Երեխաների հարաբերվելը վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ




Գծապատկեր 14. Վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ հարաբերվելը (բաշխումը ըստ հաստատության տիպի)



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկադրանքի նկարագրված ձևերը այնուամենայնիվ, կարող են և չլինել թրաֆիքինգի օրինակներ, քանի որ ընդհանրական են, այսպիսով, տարածվածությունը գնահատելու համար հիմք է ընդունվել նրանց կողմից ներկայացված կոնկրետ իրավիճակների (երեխաների սուբյեկտիվ պատկերացմամբ) թիվը (գծապատկեր 15): Ինչպես երևում է, երեխաների միայն 4.9%-ն (39 դեպք)³³ է համարում, որ ինքը բախվել է թրաֆիքինգի իրավիճակների հետ: Այնուամենայնիվ, հարկադրական ձևերի հետ ծանոթ լինելու վերաբերյալ տվյալը հետաքրքրական էր՝ հասկանալու համար բռնության, հարկադրանքի/շահագործման և թրաֆիկինգի վերաբերյալ երեխաների պատկերացումները ըստ դրսևորման տեսակների (տես՝ «ընկալում» բաժնում):

Գծապատկեր 15. Երեխաների՝ թրաֆիկինգի դրսևորումների հետ բախվելը.



Երեխաների թրաֆիքինգի հետ բախվելու դեպքերի վերաբերյալ վիճակագրությունից պարզ է դառնում, որ առավել հաճախակի հանդիպող իրավիճակները վերաբերում են «հարկահավաքության», ստիպողական մուրացկանության, սեռական շահագործման, անօրինական գործողությունների մեջ ներքաշման և հարկադիր աշխատանքի դրսևորումներին (աղյուսակ 4): Ըստ երեխաների, իրենց հանդիպած դեպքերում երեխաներից ամենակրտսերը 9 տարեկան է: Հետաքրքրական է, որ միայն 4 դեպքում են երեխաները ներկայացրել, որ դեպքը անմիջապես իրենց հետ է տեղի ունեցել, մնացած դեպքերում, ըստ երեխաների, դա տեղի է ունեցել ընկերոջ/ընկերուհու՝ 6, նույն հաստատության սանի՝ 18, իրեն ծանոթի հետ՝ 6, քրոջ/եղբոր հետ՝ 5 դեպքում: 16 դեպքում որպես բռնացող նշվել է ծնողը (մայրը՝ 11, հայրը՝ 5 դեպքում), հաստատության աշխատակիցը/ղեկավարը՝ 7, տարիքով մեծ երեխաները՝ 7, օտար

³³Երեխաների ներկայացրած իրավիճակների մասին նախնական տվյալները ներկայացված են «Վկայություններ հետազոտությունից» բաժնում:


մարդիկ՝ 9: Որոշ պատմություններում երեխաները նշել են մի քանի «դերակատարներ»: 39 դեպքից 13-ը ներկայացրել են հանրակրթական դպրոցի երեխաները, 26՝-ը հաստատության:

Աղյուսակ 4. *Երեխաների պատասխանները ըստ հանդիպած դեպքերի թվի և շահագործման տիպի*

Շահագործման տիպը	Ցիվը
Երեխայի առևանգում	1
Հարկադիր աշխատանք	5
Գողության մղել ³⁴	4
«Հարկահավաքություն»	7
Ստիպողական մուրացկանություն	8
Ներգրավում թմրանյութերի տեղափոխման/ վաճառքի մեջ	3
Աշխատանք առանց վարձատրության կամ չնչին վարձատրությամբ	3
Սեռական շահագործում	5
Աշխատանք վտանգավոր պայմաններում	2
Ընդամենը պատասխաններ	39

Ինչպես երևում է աղյուսակից, երեխաներն առավելագույնս բախվել են ստիպողական մուրացկանության հետ: Այսպիսով, երեխաների դեպքում նկատվում են լուրջ տարբերություններ «թրաֆիկինգ» տերմինի իմացության, շահագործման տարբեր դրսևորումների մասին իրազեկվածության և դրանց հետ բախվելու (կոնկրետ իրավիճակների հետ ծանոթ լինելու) ցուցանիշների միջև:

Գծապատկեր 16. *Երեխաների՝ թրաֆիկինգի ենթարկվելու երևույթի կոնկրետ դեպքերի հետ ծանոթ լինելը (քնակչություն)*



³⁴ Ի դեպ, մեկ դեպքում երեխան ինքն էր ուրիշին գողության մղել


Ինչ վերաբերում է մեծերին, ապա, ինչպես նշվեց «Իրազեկվածություն» բաժնում, երեխաների թրաֆիկինգի երևույթի մասին այս կամ այն կերպ լսել էին տնային տնտեսություններում հարցվածների մոտ 86%-ը, մինչդեռ սուբյեկտիվ ընկալմամբ, երևույթի դրսևորումների հետ բախվել էին նրանց միայն 1.8%-ը (գծապատկեր16): Բնակչության մասով, երեխաներին վերաբերող 22 կոնկրետ դեպքերը վերաբերում են ավելի շատ ծանոթների, հարևանների, ընկերների երեխաներին, միայն մեկ դեպքում հարցվողը նկատի է ունեցել իր երեխային, իսկ 3 դեպքում հրաժարվել են նշել, թե ում հետ է տեղի ունեցել (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Ծանոթ դեպքերը. (n՞ւմ հետ է տեղի ունեցել)


Ում հետ է կապված եղել	դեպքերը
Բարեկամի երեխայի	1
Հարևանի երեխայի	7
Ընկերների երեխայի	1
Ծանոթի երեխայի	9
Իմ երեխայի	1
Հրաժարվում է պատասխանել	3
Ընդամենը	22

Հանդիպած դեպքերը հարցվողները ներկայացրել են իբրև երեխայի հարկադիր աշխատանք, հարկադիր մարմնավաճառություն, երեխայի գողության և ստիպողական ամուսնության դեպքեր (իրավիճակների գնահատականները հարցվողների սուբյեկտիվ գնահատականներն են, գծապատկեր 17): 5 դեպքում առնչված հարցվողները վայրը նշել են երկրից դուրս (Ռուսաստան և Ադրբեջան), մնացածը՝ ներսում (Երևան, Նոյեմբերյան, Աշտարակ, Բերդ, Սիսիան): Շահագործման ենթարկված երեխաների տարիքը ներկայացված է գծապատկեր 16-ում:

Գծապատկեր 17. Ծանոթ իրավիճակների տեսակները (քնակչություն)



Գծապատկեր 18 Շահագործված երեխայի տարիքը



Ինչպես երևում է Գծապատկեր 18-ից, ըստ մեծահասակների՝ թրաֆիկինգի ենթարկվելու երեխաների ամենառիսկային խումբը վերաբերում է 14-17 տարեկաններին:

Երևույթի հետ բախվել էին ունեցել ավելի շատ բնակչության «շատ աղքատ» և «աղքատ» խմբերի ներկայացուցիչները (4.2%)՝ տարրական կրթությամբ (14.3%), քան «ոչ աղքատ»-ները՝ 1.7%, ընդ որում դիտարկվել է ուղիղ կապ երևույթի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի և երևույթի տարբեր դրսևորումների հետ բախվելու չափաբաժնի միջև, օրինակ, եթե մարզային քաղաքներում բնակչությունը ամենաքիչն էր տեղեկացված, նույն խումբը ամենից շատն էր բախվել թրաֆիկինգ հիշեցնող տարբեր իրավիճակների հետ:

Երևույթի հետ բախվելու հավանականության մակարդակը էականորեն բարձր է այն ընտանիքներում, ում **բնակարանային պայմանները** համարվել են անբարենպաստ, ինչը վկայում է այս գործոնի **ռիսկայնության** մասին:

Թե բնակչության, թե երեխաների առումով, որքան տեղեկացվածությունը փոքր է, այնքան մեծ է բախվելու հավանականության մակարդակը: Աղքատությունը, կրթության ցածր մակարդակը, բնակարանային անապահով պայմանները բարձրացնում են երևույթի հետ բախվելու հավանականությունը:

Այսպիսով.

- Երևույթի դրսևորումների կոնկրետ իրավիճակների հետ ծանոթ էին (բախվել էին) մեծերի միայն 1.8%-ը (22 դեպք), իսկ երեխաների՝ 4.9%-ը (39 դեպք)
- Երեխաները կոնկրետ ծանոթ էին թրաֆիկինգի իրավիճակ հիշեցնող կամ դրան նման առնվազն 4 տեսակների հետ՝ հարկադրական աշխատանքի պարտադրանք, ոչ օրինական գործողությունների պարտադրանք, «հարկահավաքություն», սեռական բնույթի բռնություններ:

Մեծերը առավելապես ծանոթ են երեխայի հարկադրական աշխատանքի, հարկադիր մարմնավաճառության, երեխայի գողության և ստիպողական ամուսնության տեսակների հետ:

- Ըստ դպրոցի տիպի, շահագործման տարբեր տարատեսակների հետ առավելագույնս ծանոթ են հատուկ դպրոցի երեխաները, իսկ հանրակրթական դպրոցում գրանցվել է ամենացածր ցուցանիշը, ընդ որում, հատուկ դպրոցի երեխաները առավելագույնս ծանոթ են ստիպողական մուրացկանությանը:

- Մեծերին հանդիպած դեպքերից դատելով, թրաֆիկինգի տեսանկյունից երեխաների առավել խոցելի տարիքը տատանվում է 14-17 տարեկանների միջև:

- Երևույթին հանդիպելու հավանականությունը էականորեն բարձր է այն ընտանիքներում, ում բնակարանային պայմանները համարվել են անբարենպաստ, ինչը վկայում է ռիսկի մասին:

- Թե՛ բնակչության, թե՛ երեխաների առումով որքան տեղեկացվածությունը փոքր է, այնքան մեծ է երևույթի հետ բախվելու հավանականության մակարդակը:

- Աղքատությունը, կրթության ցածր մակարդակը, բնակարանային անապահով պայմանները բարձրացնում են երևույթի հետ **բախվելու** հավանականությունը:

- Այսպիսով, երեխաների դեպքում նկատվում է լուրջ տարբերություններ «թրաֆիկինգ» տերմինի հետ ծանոթ լինելու, թրաֆիկինգի/շահագործման տարբեր դրսևորումների հետ ծանոթ լինելու և դրա տարբեր դրսևորումների հետ կոնկրետ բախվելու ցուցանիշների միջև. երեխաները ավելի շատ իրազեկված են թրաֆիկինգ հիշեցնող կամ նման իրավիճակներին ու դրա դրսևորումներին, քան «թրաֆիկինգ» բառին: Սա հանգամանք է, որ ուշադրության պետք է արժանանա իրազեկման աշխատանքներ իրականացնելիս. (օգնել երեխաներին իրենց ծանոթ իրավիճակները ճանաչել նոր տեսանկյունից):


3.3 Ընկալում և վերաբերմունք

Բնակչության և երեխաների՝ երևույթի վերաբերյալ պատկերացումներում դիտարկվել են որոշ առանձնահատկություններ:

Հավելվածում Աղյուսակ Հ1-ը ներկայացնում է երեխաների շահագործման՝ բնակչությանը հայտնի տեսակների բաշխումը:

Աղյուսակից երևում է, որ գոյություն ունի ուղիղ կապ շահագործման տեսակների վերաբերյալ մեծերի տեղեկացվածության և «թրաֆիքինգ» որակած նրանց պատասխանների միջև: Գծապատկեր 19-ը ներկայացնում է շահագործման այն տեսակները, որոնք մեծերը որակել են որպես «երեխաների թրաֆիքինգ»: Ինչպես երևում է գծապատկերից, ավելի շատ մարմնավաճառությունը, չվարձատրվող աշխատանքը և մուրացկանությունը, քան օրգանների տեղափոխումն ու երեխաների առք ու վաճառքը մեծերը հակված են համարել երեխաների թրաֆիքինգի դրսևորումներ:

Գծապատկեր 19 Թրաֆիքինգի ընկալումն ըստ մեծերի




Այս հանգամանքը, ըստ փորձագետների, կապված է այն իրողության հետ, որ թրաֆիկինգի դեմ պայքարում իրազեկման աշխատանքները սկիզբ են առել նախ «սեքս» առևտրի մեջ ներգրավված անձանց իրավիճակների, ապա աշխատանքային թրաֆիկինգի ենթարկվածների դեպքերի լուսաբանման ուղղությամբ³⁵, ահա ինչու բնակչությունը մնացած տեսակներից ավելի քիչ է տեղյակ:

³⁵ Ամենայն հավանականությամբ, այս հանգամանքն է, որ բացատրում է երևույթի տեսակների վերաբերյալ բնակչության իրազեկվածության վերաբերյալ ստացված պատկերը, հատկապես, որ դրանք փաստացի, «թրաֆիկինգ» ճանաչված առայժմ միակ տեսակներն են:

Երեխաները, ինչպես և մեծերը, ավելի տեղեկացված էին մուրացկանության տարբերակի մասին, բայց ի տարբերություն մեծերի, նրանց շատ ավելի փոքր մասն էր հակված (7.8%) դա համարելու «թրաֆիքինգ»: Թրաֆիքինգի մի շարք տեսակների վերաբերյալ բավականին տեղեկացված լինելով հանդերձ (զծապատկեր 13), երեխաները հատկապես «առևանգումն» ու «մարմնավաճառությունն» էին համարել թրաֆիքինգ (զծապատկեր 20):

Գծապատկեր 20. «Թրաֆիքինգ» համարված իրավիճակները ըստ երեխաների



Մասնավորապես, ի տարբերություն մեծերի, երեխաների դեպքում աշխատանքը տարբեր անբարենպաստ պայմաններում (առանց կամ չնչին վարձատրությամբ, վտանգավոր պայմաններում, ծնողների ունեցած պարտքի դիմաց, և այլն), պրակտիկապես չի համարվել թրաֆիքինգ, այդպես է անգամ «աշխատանք կամքին հակառակ» տարբերակում:

Դատելով երեխաների ներկայացրած բնորոշումներից, (հավելվածում, Աղյուսակ Հ2.) իրենց ծանոթ անբարենպաստ իրավիճակների մեծամասնությունը երեխաները հակված են որակել ավելի շուտ որպես բռնություն, շահագործում, քան թրաֆիքինգ: Տրամաբանական է, որ պատկերը չի փոխվում նաև առնչվելու պարագայում:

Այսպես, հարկադրանքի տարբեր ձևերի հետ առնչվելու դեպքերում երեխաները տարբեր կերպ են որակում տեղի ունեցածը. մասնավորապես,

1. հարկադրական աշխատանքի հետ առնչված նույնքան թվով (34) երեխաներից միայն 1-ն է համարում, որ դա թրաֆիքինգ է:

2. ոչ օրինական գործունեության պարտադրանքի հետ առնչված երեխաներից (17 երեխա) ոչ մեկը չի համարում, որ դա թրաֆիքինգ է:

3. սեռական շահագործման հետ առնչված երեխաներից (9 երեխա), միայն 1 երեխա է համարում, որ դա թրաֆիքինգ է:

Այսպիսով, հարկադրանքի տարբեր ձևերի հետ ամիջական առնչություն ունեցած (11%) երեխաների ընդամենը 0,3% համարում, որ առընչվել է թրաֆիքինգի հետ: Կոնկրետ իրավիճակներ, որոնք իրենց կարծիքով թրաֆիքինգ են, ներկայացրել են 4.9 %-ը (կամ 39 դեպք):

Առանց պնդելու, որ առնչված դեպքերը հատկապես թրաֆիկինգին են վերաբերում*, այս տվյալների մեջ հետաքրքրական է այն հանգամանքը, թե ինչպես են երեխաները որակում իրենց (կամ իրենց ծանոթ մեկի) հետ տեղի ունեցածը, որից կարելի է հետևություն անել, որ հարցվածների մոտ 50%-ի կողմից թրաֆիկինգը որպես հանցատեսակ պրակտիկապես ճանաչված չէ, թեև, դատելով պատասխաններից, նշում են, որ տեղեկացված են դրա մասին, իսկ մեծ մասը՝ ծանոթ կամ առնչվել է դրա դրսևորման ձևերին: Ավելին, 11%-ը առնչվել է հարկադրանքի տարբեր ձևերի հետ:

Ընկալման անհամապատասխանությունն ու բազմազանությունը դիտարկվում է նաև մասնագետների պարագայում: Երեխաների թրաֆիկինգի վերաբերյալ հանդիպել են հետևյալ բնորոշումները (մասնագետների կողմից հնչած որակումները ներկայացվել են առանց փոփոխությունների).

- Երեխայի սեռական շահագործումը
- Աշխատուժի չարաշահումը
- Հոգեբանական բռնությունը հարազատների կողմից
- Շահ ստանալու նպատակով որոշակի գործողություններ կատարելը, որոնք հակասոցիալական են
- Թրաֆիքինգը մարդկանց անօրինական աշխատացնելն է, առք ու վաճառքը և այլն...
- Մուրացկանությունը ավելի շատ է թրաֆիքինգի նման, որովհետև այստեղ շահույթ կա
- Այն հարկադիր աշխատանքը, որը որոշակի շահույթ է հետապնդում
- Եթե երեխան իր ընտանիքին օգնում է, ապա դա թրաֆիքինգ չէ: Իսկ եթե հարևանը/բարեկամը կամ

* հետազոտության շրջանակներում նույնականացում հնարավոր չէր իրականացնել:

ուրիշը տանում է որպես վարձու աշխատող երեխային, ապա դա կարելի է դիտարկել իբրև թրաֆիքինգ:

- Եթե անգամ երեխան ինչ-որ տեղ աշխատում է և ստանում է որոշակի գումար իր աշխատածի դիմաց, բայց որտեղ չկա աշխատանքային պայմանագիր, ապա դա նույնպես թրաֆիքինգ է:
- Եթե երեխան աշխատում է, գումար է վաստակում և դրանից նաև կարողանում է իրեն ինչ-որ բան գնել, ապա դա թրաֆիկինգ չէ: Իսկ եթե նա աշխատում է և այդ ամբողջ աշխատած գումարից իրավունք չունի ծախսել, ապա դա արդեն թրաֆիկինգ է:
- Մուրացկանությունը տարբեր է թրաֆիքինգից: Եթե մուրացիկը ինքն է գումարը վերցնում, դա թրաֆիկինգ չէ: Բայց եթե տեղի համար գումար են վերցնում՝ թրաֆիքինգ է:
- Ծնողների կողմից նրանց աշխատացնելն է, որի պատճառով երեխան դուրս է մնում կրթությունից և այլ հիմնարար ծառայություններից, այսինքն օգտագործում է երեխային որպես «էժան» կամ «ծրի» աշխատուժ: Եթե երեխայի կրթական իրավունքը ոտնահարվում է, ապա արդեն կարելի է դասել դա իբրև թրաֆիկինգի երևույթ: Այսինքն արգելում են օգտվել իր իրավունքներից: *Կար նաև հակադիր կարծիք. «Ոչ դա թրաֆիկինգ չէ, դա պարզապես երեխայի լուծան է ընտանիքի գոյատևման հարցում... Եվ եթե նա սիրում է աշխատել, ավելի, քան սովորելը ինչու՞ չաշխատի...»*

Ֆոկուս խմբերի ժամանակ տարբեր ձևակերպումներով, սակայն հնչել են նաև թրաֆիկինգի՝ կոնվենցիայի ձևակերպմանը համապատասխանող բնորոշումներ, սակայն ավելի քիչ, քան վերը նշված շահագործման և բռնության տարատեսակ ձևերին հատուկ ձևակերպումները:

Մասնագետները մեծ մասամբ հակված են այն կարծիքին, որ այժմ հասարակությունը բավականին իրազեկված է (դա ցույց տվեց նաև դաշտի հետազոտության տվյալները), սակայն կա **ընկալման** խնդիր ոչ միայն բնակչության, այլ նաև մասնագետների շրջանում: Ամենայն հավանականությամբ, այս հանգամանքը լուրջ գործոն է երեխաների դեպքում, քանի որ դպրոցը (դպրոցի մասնագետները) նրանց համար իրազեկման երրորդ աղբյուրն է: «Յուրաքանչյուր մասնագետ (ուսուցիչ, բժիշկ, սոցիալական աշխատող և այլն) յուրովի է պատկերացնում թրաֆիկինգը, իր պատկերացմամբ է ներկայացնում այն և, բնականաբար, ոչ միշտ է, որ երևույթը ճիշտ ձևով է փոխանցվում: (ֆոկուս խմբից):

Որոշ փորձագետներ կարծում են, որ մասնագետների շրջանում երևույթը համեմատաբար հասկացված է շնորհիվ տարատեսակ վերապատրաստումների. «...իմ ճանաչած մասնագետները, համեմայն դեպս, հստակ պատկերացնում են երևույթը, դրսևորումները...» (փորձագետ):

Ըստ փորձագետներից մեկի, այնուամենայնիվ իրազեկման աշխատանքները ընթացել են ոչ այնքան գրագետ, քանի որ թրաֆիկինգի երևույթի ընկալումը հաճախ ասոցացվում է սեքս-թրաֆիկինգի հետ: Ըստ փորձագետի, աշխատանքային թրաֆիկինգը իր տարածվածությամբ չի զիջում սեքս-թրաֆիկինգին, հետևաբար, իրազեկումն էլ, ճիշտ կլիներ, որ համաչափ ձևով ընթանար:

Վկայություններ ֆոկլոր խմբերի ժամանակ հնչած մտքերից

- «...Չնայած որ որոշ դասընթացների ենք մասնակցել, միևնույնն է, լավ չենք պատկերացնում թե հատկապես ո՞րն է թրաֆիքինգը...»
- «Ունեցել ենք դեպք, երբ հայրն է ենթարկել երեխային շահագործման, բայց էլի լավ չենք պատկերացնում արդյոք դա թրաֆիքինգ է, թե ոչ»:

Փորձագետների գերակշիռ մեծամասնությունը նույնպես հակված է այն կարծիքին, որ երևույթի բարդության, ուսումնասիրված չլինելու հետ կապված, **ընկալումը** գրեթե բոլոր մակարդակներում՝ լայն հանրության, երեխաների, անգամ մասնագետների ու պաշտոնյաների շրջանում ոչ ադեկվատ է, առկա են երևույթի ըմբռնման և մեկնաբանման բազմաթիվ տարբերություններ և այլն: Թրաֆիքինգը, ինչպես փորձագետներից մեկը նշեց, բարդ ու հակասական «երևույթ է, որի շերտերը դեռ նոր ենք բացում»:(*փորձագետի հետ հարցազրույցից*): Այլ խոսքով, իրազեկման աշխատանքները առայժմ օգնել են ինֆորմացիայի միայն «ալիքաձև տարածմանը»³⁶:

Ըստ այդմ, մասնագետների շրջանում հանդիպում են երկու տիպի ծայրահեղություններ՝ շահագործման բոլոր տիպերը վերագրել թրաֆիքինգի, կամ հակառակը, մերժել թրաֆիքինգը, իսկ դրսևորման տեսակները փորձել տեղավորել շահագործման արդեն հայտնի, գրեթե «դասական դարձած» ձևերի ձևակերպումների ներքո: Իբրև մտահոգություն, մեկ փորձագետ նշել է. «Ես անձամբ բոլոր այդ հանցատեսակները մեկ հովանոցի տակ դիտարկելու մեջ և այն թրաֆիքինգ կոչելու միտում եմ տեսնում, դա նշանակում է հանցատեսակների, նրանց դրսևորման ձևերի և պատճառների բազմազանության բնորոշման հարցում ոչ պրոֆեսիոնալ մոտեցում»:

Այնուամենայնիվ, փորձագետների մեծ մասը հակված է այն մտքին, որ «տերմինների շփոթը» առկա է ամբողջ աշխարհում: Նրանք գտնում են, որ «շահագործում» տերմինը ավելի մոտ է թրաֆիքինգին. («հնարավոր է, որ վաճառքի կամ առևտրի կոմպոնենտները չլինեն, բայց շահագործում լինի») և նպատակահարմար է ելնել կոնվենցիաներում հնչած գաղափարների մեկնաբանությունից:

Տերմինների խառնաշփոթը չհերքվեց և ոչ մի փորձագետի կողմից, ավելին, շատերը համոզված էին, որ այն առաջացնում է հարցերի մի խումբ, որը խնդիրներ է ստեղծում նախ և առաջ գոհի նույնացման գործում: «Հանցատեսակը ինքնին շատ դժվար է և բոլոր տարատեսակները (առևանգում, խարդախություն և այլն) ընդգրկված են մի հոդվածի մեջ: Թեկուզ մի բառի փոփոխությունը փոխում է ամբողջ հանցագործության բնույթը»: Ստեղծված խառնաշփոթ

³⁶ Փորձագետի բնորոշումն է

վիճակը բացատրվում է նրանով, որ «թրաֆիկինգ» տերմինը միանգամից է մտել շրջանառության մեջ, և դեռևս շատ «հում» է *(փորձագետի հետ հարցազրույցից)*:

Ըստ էության, երեխաների դեպքում խնդիրը կայանում է շահագործման այլ տեսակների շարքում «թրաֆիկինգի» տեսակը հստակ սահմանազատելու մեջ՝ օրենսդրությամբ և մարդկանց ընկալումներում: Փորձագետներից մեկը նշում է. «Ես համոզված եմ, որ պատկերը ճիշտ ստանալու պարագայում մենք չենք ունենա թրաֆիկինգի շատ դեպքեր, մենք կունենանք ավելի շատ աշխատանքային շահագործման դեպքեր»: «Շատ հնարավոր է, որ ներկայումս մեր կողմից այլ դիտանկյան տակ դիտվող որևէ կոնկրետ իրավիճակ վաղը, չափանիշների վերանայման արդյունքում, մենք անվանենք ոչ թե պարզապես շահագործում, այլ թրաֆիկինգ, ինչպես մուրացկանության մղելու դեպքում եղավ³⁷»:

«Մուրացկանության մղելու» հանցատեսակի հանդեպ մոտեցման արմատական փոփոխության վերաբերյալ փորձագետների դատողություններից ելնելով³⁸, հնարավոր է, որ մոտ ապագայում նույն անալոգիայով վերանայվի մարմնավաճառության վերաբերյալ ներկայիս մոտեցումը:

Ընկալման տեսակետից փորձագետների տեսակետները հակադրվում էին նաև 3 բաղադրիչների (հավաքագրում-տեղափոխում-շահագործում) առկայությունը պարտադիր համարելու տեսակետից. «Էմիբրությունների պարագայում բավականին մեծ թիվ են կազմում այն երեխաները, որոնց ուղտերի վրա տեղափոխում և շահագործում են: Կամ ռումինացի երեխաները, որոնց ստիպում են մարմնավաճառությամբ զբաղվել, տեղափոխում են, հարկադրանքի տարբեր ձևեր են օգտագործում: Նրանք ինքնակամ չեն գալիս, նրանց փակի տակ են պահում: Նրանք ակնհայտ թրաֆիկինգի գոհեր են, քանի որ նշած այդ բոլոր երեք բաղադրիչները առկա են եղել» *(փորձագետի հետ հարցազրույցից)*:

Մինչդեռ մեկ այլ փորձագետ կարծում է, որ «...եթե անգամ երեխան խնդրի, որ իրեն ներգրավեն մուրացկանության մեջ ու հետո գումարը ձեռքից վերցնեն, ապա տվյալ անձը, ով կատարել է այդ խնդրանքը, արդեն թրաֆիքյոր է»:

Երեք բաղադրիչների հանգամանքը կարևորող փորձագետները կարծում են, որ եթե հարկադրանքը չի դիտարկվում որպես կարևոր գործոն, արդեն դրանով իսկ հակվածությունը՝ «ցանկացած դրսևորում թրաֆիկինգի մեջ մտցնելու», շատ ավելի մեծանում է, օրինակ,

³⁷ Մուրացկանության մղելը նախկինում դիտարկվում էր որպես «երեխային հակահասարակական գործողությունների մեջ ներքաշում» և ավարտվում էր ընդհամենը տուգանքով:

³⁸ որը ծնողի կամ այլ անձի կողմից ստիպողական պայմաններում իրականացնելը տարիներ շարունակ դիտարկվում էր որպես հակահասարակական արարքների մեջ ներգրավում, իսկ հետո դիտարկվեց որպես թրաֆիկինգ և ըստ այդմ, արմատականորեն փոխվեց պատժաչափը

երեխաների առք ու վաճառքի դեպքում «Հայաստանում գրանցված երեխաների առք ու վաճառքի դեպքերը վերաբերում են երեխայի որդեգրմանը, երբ նորածնին որդեգրում են՝ ծնողին կամ միջնորդին գումար տալով: «Ճիշտ չէ որդեգրող ընտանիքին և երեխայի ծնողին թրաֆիկինգի մեջ մեղադրելը, թեև դա հանցագործություն է» (փորձագետի հետ հարցազրույցից): Երեխաների հարկադիր աշխատանքի պարագայում նույնպես այս տեսակետի կողմնակիցները հակված են վերաբերվել վերապահումներով՝ «ի նկատի ունենալով ընտանիքների տնտեսական վիճակը»: Մինչդեռ, ըստ մեկ այլ փորձագետի, «Երեխայի հարկադիր աշխատանքը միշտ պետք է դիտարկել իբրև թրաֆիկինգ՝ ելնելով Պալերմոյի արձանագրությունից»:

Երևույթի ընկալման և սահմանման տերմինաբանական խառնաշփոթը, փորձագետների կարծիքով, առկա է ոչ միայն լայն հասարակության, այլ նաև մասնագետների շրջանում և դա կապված է նաև օրենսդրության ու արձանագրության միջև առկա անհամապատասխանության հետ: Օրինակ, մարմնավաճառության մեջ ներգրավելը, ըստ փորձագետներից մեկի, անչափահասի պարագայում ունի առանձնահատկություններ ու շատ հակասություններ կան մեր օրենսդրության և Պալերմոյի արձանագրության միջև: Պալերմոյի արձանագրությունը ասում է հետևյալը. «...կապ չունի՝ համոզել են, բռնի էր, թե կամավոր՝ դա թրաֆիկինգ է...մինչդեռ մեր օրենսդրությունը ասում է՝ «բռնություն չկար, ուրեմն թրաֆիկինգ չէ...»:

Այսպիսով, թրաֆիկինգի երևույթի ընկալումը տարաբնույթ է. մասնավորապես, բնակչության շրջանում “երեխաների թրաֆիկինգ” է համարվել հիմնականում երեխային **մուրացկանության և մարմնավաճառության** մեջ ներգրավելն ու **հարկադիր աշխատանքի ձևերը**, այն դեպքում, երբ երեխաների շատ քիչ մասն է (մոտ 7,8%) համարել ստիպողական մուրացկանությունը թրաֆիկինգ, իսկ անբարենպաստ պայմաններում աշխատանքը, այդ թվում՝ հարկադրական բնույթի, պրակտիկապես չի համարվել «թրաֆիկինգ»:

Բացի «մարմնավաճառությունից», ի տարբերություն մեծերի, «**առևանգումը**»³⁹, **թմրանյութերի տեղափոխման, վաճառքի մեջ ներգրավվելը, պոռնոգրաֆիական նպատակներով նկարահանվելը** նույնպես երեխաները համարել են «թրաֆիկինգ»:

Ի տարբերություն բնակչության, հարկադիր աշխատանքի ընկալման խնդիրը լուծված չէ ոչ միայն երեխաների, այլ նաև նրա հետ աշխատող մասնագետների և անգամ փորձագետների շրջանում: Մոտեցումները տրամաբանորեն հակասում են միմյանց. ըստ երևույթին տերմինաբանական խառնաշփոթը առաջանում է, որովհետև այդ երկու հասկացությունները

(հարկադիր աշխատանքը և թրաֆիկինգը) շատ մոտ են իրար: Փորձագետները այս իրավիճակների համար լուծումը թողնում են դատարանի որոշմանը. «...երկարատև բանավեճերից հետո գալիս ենք այն մտքին, որ դատարանն է այնուամենայնիվ որակելու, թե արդյո՞ք տվյալ դեպքը թրաֆիկինգ է, թե ոչ, և դա է առայժմ լուծումը»:

Այսպիսով՝


- Մեծահասակները ավելի իրազեկ էին հարկադրական իրավիճակների՝ «երեխաներին մարմնավաճառության, մուրացկանության մեջ ներքաշելն ու գումարը ձեռքից կորզելը» և հարկադրանքի այլ տեսակների մասին: Առավել քիչ հայտնի տեսակները վերաբերվել են «խիստ անհամապատասխան ամուսնություններին», երեխաների առևանգմանը, անօրինական որդեգրություններին ու երեխաներին թմրանյութերի վաճառքի/տեղափոխման մեջ ներգրավելուն: Երեխաների՝ **այլ բնակավայր տեղափոխելը աշխատացնելու կամ այլ տիպի շահագործման նպատակով** ամենաքիչն էր հայտնի բնակչությանը:
- Երեխաները, ավելի տեղեկացված էին **ստիպողական մուրացկանության** տարբերակի մասին, սակայն այն թրաֆիքինգ չէին համարում՝ ի տարբերություն բնակչության:
- Բնակչության գերակշիռ մեծամասնությունը **հարկադրական աշխատանքի** տարբեր ձևեր համարել է թրաֆիկինգ, մինչդեռ երեխաների միայն շատ փոքր մասը:
- Ի տարբերություն մեծերի, «**առևանգումը**», **թմրանյութերի տեղափոխման, վաճառքի մեջ ներգրավվելը, պռոնոգրաֆիական նպատակներով նկարահանվելը** երեխաները նույնպես համարել են «թրաֆիկինգ»:
- Ըստ երևութին, սեռական բնույթի ծառայությունների մեջ ներգրավումը խճողված արժեքների խաչմերուկում է գտնվում շատ ավելի, քան մուրացկանությունը առհասարակ, ահա ինչու, ընկալումների մեջ հերթը դեռևս չի հասել դրան, (ի տարբերություն մուրացկանության):
- Եթե երեխաների «լսարանը» այն փուլում է, որի համար դեռևս գոնե «ալիքաձև» պետք է տարածվի թրաֆիքինգի վերաբերյալ ինֆորմացիան, ապա բնակչության (ինչպես և մասնագետների) համար, ակտուալ է դարձել ավելի շատ գիտելիքներով զինելու, քան պարզապես տեղեկացնելու խնդիրը:
- Եթե հարկադրական աշխատանքի վերաբերյալ իրազեկումն այնպես է ընթացել, որ բնակչությունը դա համարում է «թրաֆիքինգ», իսկ երեխաների պատկերացումներում դա միայն «շահագործում է», ապա պետք է պատասխան գտնել այն հարցին, թե ո՞ր լսարանի

պատկերացումները պետք է շտկվեն, ինչը, իր հերթին, կախում ունի տերմինաբանական հստակեցումներից:

- «Թրաֆիզինգ» տերմինը միանգամից է մտել շրջանառության մեջ, և դեռևս շատ «հում» է: Օրենսդրության մեջ արտացոլվող տերմինների դիմամիկ փոփոխությունները վկայում են, որ թրաֆիզինգի, որպես երևույթի ընկալում, մեկնաբանումն ու սահմանումը դեռևս տրամաբանական ավարտին չհասած «կենդանի» գործընթաց է:

Վերաբերմունք. Ըստ երեխաների, առավել խոցելի երեխաների խմբերը հետևյալն են. (զծ. 21)

Գծանկար 21. Թրաֆիքինգի առումով առավել խոցելի երեխաների խումբը (ըստ երեխաների)



Պարզելու համար, թե հարցվող երեխաներն ինչպիսի վերաբերմունք ունեն այն երեխաների հանդեպ, ովքեր հայտնվել են նմանատիպ իրավիճակներում, նպատակահարմար է համարվել նախ հասկանալ, թե ինչպիսին են երեխաների պատկերացումները գոհերի ներգրավման և հավաքագրման միջոցների վերաբերյալ:

Աշխատանքի անցանկալի իրավիճակներում հայտնվելու միջոցներին/ձևերի վերաբերյալ հարցումները ցույց են տվել, որ հաստատություններում գտնվող երեխաների մեծ մասը հակված է կարծելու, որ երեխաները ավելի շատ այդպիսի իրավիճակներում հայտնվում են իրենց կամքով, կամ այլ խոսքով՝ գիտակցաբար, մինչդեռ հանրակրթության մեջ ընդգրկված երեխաների կարծիքով՝ խաբեությամբ և դրան նմանվող միջոցներով⁴⁰:

⁴⁰ Այս պնդումը ճիշտ է աշխատանքի տարբեր պայմանների հետ կապված, սակայն տարբերվում է «վտանգավոր աշխատանքի» դեպքում, երբ երեխաների թե մեկ, թե մյուս խմբերի կարծիքները համընկնում են (ավելի շուտ խաբեությամբ, քան երեխաների կամքով):

«Մուրացկանության մեջ ներգրավելու» տարբերակի պարագայում հանրակրթության երեխաների խումբը ավելի հակված է «իր կամքով» տարբերակին, մինչդեռ հաստատություններում գտնվող երեխաները նշել են «ստիպողաբար, բռնի» տարբերակները:

Առանձին հետաքրքրության առարկա է «աշխատանք ծնողների ունեցած պարտքի դիմաց» տարբերակի և մարմնավաճառությամբ զբաղվելու վերաբերյալ երեխաների պատկերացումները: Ըստ խմբերի, պատկերը հետևյալն է (աղյուսակ 6).

Աղյուսակ 6. Ծնողների ունեցած պարտքի դիմաց աշխատելու նպատակով երեխաների ներգրավման միջոցները ըստ երեխաների

Միջոց	հանրակրթություն	մանկատուն	խնամքի հաստատություն	հատուկ դպրոց
Իր կամքով/ցանկությամբ	40,2%	15,4%	26,7%	29,7%
Պատահաբար	1,9%	3,8%	0	0
Խաբեությամբ	4,7%	11,5%	26,7%	18,9%
Ստիպողաբար/բռնի	48,6%	61,5%	40,0%	45,9%
Ինչ-որ ծառայության դիմաց (նշել)	0,9%	0	0	0,5%
Այլ (նշել)	0,9%	0,1%	3,3%	0
Դժվարանում են պատասխանել	2,8%	7,7%	3,3%	5%
ընդամենը պատասխաններ	100	100	100	100

Ըստ էության, գրեթե բոլոր խմբերի երեխաները կարծում են, որ այս իրավիճակը ստեղծվում է ավելի շատ «ստիպողաբար/բռնի», քան «երեխայի կամքով»: Նույն պատկերն է դիտարկվում նաև մարմնավաճառության մեջ ներգրավելու տարբերակի դեպքում (*հավելվածում, Աղյուսակ Հ2*):

Ներգրավման միջոցների վերաբերյալ կարծիքները խիստ տարբեր էին, ըստ հաստատության տիպի, այնպիսի տարբերակների դեպքում, ինչպիսին են՝ մարմնավաճառությունը, պոռնոգրաֆիական նպատակներով նկարահանվելը, գվարճանքի վայրերում մատուցող/պարող աշխատելը: Հատուկ դպրոցների երեխաները կարծում են, որ դա տեղի է ունենում ավելի շատ ստիպողաբար, քան անչափահասի սեփական կամքով, իսկ մնացած հաստատություններում ավելի շատ հակված էին, նախ, «իրենց կամքով», ապա՝ «խաբեությամբ» տարբերակին: Կարելի է ենթադրել (բայց դժվար է պնդել), որ դա անմիջականորեն կապված է այն փորձառության հետ, որը ունեն կամ որի մասին տեղեկանում են հաստատության երեխաները սեփական կամ տվյալ հաստատությունում գտնվող ուրիշ երեխաների փորձից:

Թվում է, թե երեխաներին անցանկալի իրավիճակների մեջ հայտնվելու վերը նշված միջոցների /եղանակների վերաբերյալ այսպիսի պատկերացումները (երբ երեխաները համոզված են, որ դա տեղի է ունենում ոչ այնքան երեխաների կամքով, որքան ստիպողաբար/բռնությամբ) պետք է հանգեցնեն հանդուրժողական, աջակից վերաբերմունքի: Մինչդեռ վերաբերմունքը տատանվում է «անտարբեր»-ից մինչև «աջակցող»: Աջակցող է վերաբերմունքը հատկապես «առևանգում» պարագայում, մինչդեռ մնացած բոլոր պարագաներում գերազանցում է խուսափողական, արհամարհական վերաբերմունքը:

Հարկ է նշել, որ հանրակրթության երեխաների խմբում խուսափումը «ուժգնանում է», երբ խոսքը վերաբերում է մերկ/կիսամերկ վիճակում ֆիլմերում, տեսահոլովակներում նկարվելու և մարմնավաճառության իրավիճակներին:

Ինչ վերաբերում է միջավայրի, շրջապատի վերաբերմունքին, ապա երեխաների կարծիքով, շրջապատի վերաբերմունքը նկարագրված գրեթե բոլոր իրավիճակներում ավելի շատ անտարբեր կլինի: Իսկ մուրացկանության և սեռական տարաբնույթ շահագործման տեսակների դեպքում այն ավելի շատ խուսափողական բնույթ կկրի:

Երեխաների կարծիքով, շրջապատի վերաբերմունքի մանրամասն ցուցանիշները ներկայացված են հավելվածում` (Աղյուսակ Հ 3):

Այսպիսով.


- Հաստատություններում գտնվող երեխաների մեծ մասը հակված է կարծելու, որ երեխաները աշխատանքային շահագործման իրավիճակներում ավելի շատ հայտնվում են իրենց կամքով կամ գիտակցաբար, մինչդեռ հանրակրթության մեջ ընդգրկված երեխաների կարծիքով` խաբեությամբ և դրան նմանվող միջոցներով:
- Ըստ հաստատության երեխաների, մուրացկանության մեջ ներգրավելը տեղի է ունենում ստիպողաբար, բռնի, մինչդեռ հանրակրթության երեխաների կարծիքով` սեփական կամքով:
- Երեխաների կարծիքով, ծնողների ունեցած պարտքի դիմաց երեխաները աշխատում են, մեծ մասամբ, ստիպողաբար, բռնի ուժով, իսկ «պռոնոգրաֆիական նպատակներով նկարահանվելը», «զվարճանքի վայրերում մատուցող/պարող աշխատելը» և «մարմնավաճառության» մեջ ներգրավվելը երեխաները հակված են ավելի շատ վերագրել «խաբեությամբ» միջոցներին:
- Շահագործման անցանկալի իրավիճակներում հայտնվելու եղանակների/միջոցների իմացությունը գրեթե ազդեցություն չունի նման պայմաններում հայտնվածների հանդեպ երեխաների վերաբերմունքի վրա, ավելի զգալի է կարծրատիպերի ազդեցությունը:

- Երեխաները ըմբռնումով և աջակցելու պատրաստակամությամբ են տրամադրված միայն առևանգված երեխաների հանդեպ, մեծ մասամբ անտարբեր՝ անցանկալի պայմաններում աշխատողների և խուսափողական՝ բոլոր այն իրավիճակների դեպքում, որոնք կապված են սեռական շահագործման տեսակների և հանցագործությունների մեջ ներգրավելու հետ:
- Երեխաները գտնում են, որ նման իրավիճակներում հայտնված երեխաների հանդեպ շրջապատի վերաբերմունքը, կախված իրավիճակից, գրեթե նույնը կլինի, ինչպիսին երեխաների դեպքում է (խուսափողական, արհամարհական), սակայն այն տարբերությամբ, որ շրջապատը զոհին կարող է կրկին ներքաշել նմանատիպ իրավիճակների մեջ, այսինքն՝ կօգտվի երեխայի խոցելի վիճակից:

2.4 Խոցելություն և ճկունություն

Ընտանիքում 7-18տ. երեխա ունեցող ընտանիքներում հարցվածների 53,7% -ի շրջանում մեծ է անհանգստությունը («շատ է վախենում»), որ իր երեխան(երը) երբևէ կհայտնվեն թրաֆիկինգի վտանգի ներքո: Ընդ որում, անհանգստության մակարդակը ուղիղ համեմատական է ընտանիքի բարեկեցության մակարդակին (որքան բարեկեցիկ՝ այնքան անհանգստությունը ավելի բարձր (գծապատկեր 22):

Գծապատկեր 22 Անհանգստության մակարդակը, բնակչություն




Գծապատկեր 22-ից երևում է, որ հարցված բնակչության մեկ երրորդը խնդիրը չի կարևորում՝ «չի վախենում» կամ «հարցը իրեն չի հուզում»: Համեմատելով այս տվյալը իրազեկվածության մակարդակի հետ, կարելի է հետևություն անել, որ խնդիրը չի կարևորում նաև իրազեկված մարդկանց մի մասը, ինչը կարող է վկայել իրազեկվածության մակերեսայնության մասին, (թեև կարող են լինել նաև այլ գործոններ): Առավելագույն չափով անհանգստություն են հայտնել Արարատի մարզում (80%-ից ավելին), իսկ Սյունիքում և Արմավիրում՝ հարցվածների կեսից պակաս մասը (Աղյուսակ 7): Այս տվյալը ուղիղ առնչության մեջ է իրազեկվածության մակարդակի հետ. որքան իրազեկ, այնքան՝ անհանգիստ, այլ խոսքով, որքան մարդիկ իրազեկ են, այնքան կարևորում են այդ խնդիրը, պատկերացնում վտանգները:

Աղյուսակ 7 Անհանգստության արտահայտման մակարդակն ըստ մարզերի

Անհանգստության մակարդակը	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց Ձոր
բոլորովին չեմ վախենում	31,7%	2,2%	39,3%	21,4%	4,8%	18,8%	33,0%	10,7%	-
հարցն ինձ չի հուզում	4,9%	-	3,6%	7,1%	11,5%	10,9%	2,9%	26,8%	4,8%
շատ եմ վախենում	56,1%	86,0%	47,6%	58,6%	74,1%	69,3%	53,4%	42,8%	52,3%
այլ	7,3%	10,8%	9,5%	12,9%	9,6%	1,0%	4,9%	17,9%	42,9%
դժվարանում եմ պատասխանել		1,0%	-	-	-	-	5,8%	1,8%	-
ընդամենը պատասխաններ	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%


Հարցված երեխաների կեսից ավելին պատրաստ է աշխատել ցանկացած պայմաններում, եթե ընտանիքը կարիքի մեջ գտնվի, այդ թվում՝ բնակավայրից հեռու, չնայած, որ մինչ այդ նման իրավիճակում հայտվելու միջոցը երեխաները ավելի շատ համարել են հարկադրանքը: Կարելի է եզրակացնել, որ երեխաները կամովին կարող են հայտնվել անբարենպաստ պայմաններով աշխատանքի ռիսկերի ներքո:

Գծապատկեր 23 Երեխաների պատրաստակամությունը աշխատելու տարբեր անբարենպաստ պայմաններում.



Չափահաս հարցվողների զգալի մասը համաձայն էր, որ իր երեխան այլ վայրում աշխատանքի առաջարկներ ընդունի, եթե առաջարկը բավարարում է հետևյալ պայմաններին (գծապատկեր 24).


Գծապատկեր 24 Պայմանների տարբերակները (բնակչություն)



Այսպիսով, դատելով դիրքորոշումներից, «աշխատանք այլ վայրում» տարբերակի ռիսկայնությունը քիչ է հայտնի թե՛ մեծերին և թե՛ երեխաներին:


Երևույթի հետ առնչվելու պարագայում հարցվածների կեսից ավելին (54.8%) պատրաստ է դիմել ուստիկանության միջամտությանը: Կարելի է ենթադրել, որ հանցագործության այս տեսակի լրջությունը և դրանից պաշտպանվելու բարդությունը գիտակցված է առնվազն հարցվածների այդ խմբի կողմից: Ըստ փորձագետներից մեկի, դեռևս բավարար չէ ուստիկանության հանդեպ հասարակության վստահությունը, ըստ այդմ, դիտարկվում է հասարակության և ուստիկանության միջև համագործակցության նման մակարդակ (բնակչության մոտ կեսը չի վստահում): Ըստ երևույթին, դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ հարցվածների մյուս կեսը (մի փոքր պակաս՝ 45.2%) գերադասում է այլ տարբերակներ՝ գծապատկեր 25: Դատելով «դիմելու» վերաբերյալ տվյալներից, դեռևս բարձր չէ մասնագիտացված ծառայությունների ու հասարակական կազմակերպությունների մասին իրազեկվածությունը ո՛չ բնակչության, ո՛չ հատկապես երեխաների շրջանում (գծապատկեր 26): Հատկապես փոքր է «Թեժ գիծ» դիմելու պատրաստ հարցվածների չափաբաժինը, ինչը, ըստ էության, մտահոգության առարկա է:

Գծապատկեր 25. Ինչպիսի՞ քայլերի կդիմի, եթե առնչվի երևույթի հետ. (ընակչության)



Ի տարբերություն մեծերի, շահագործման ենթարկվելու վտանգի պարագայում երեխաները պատրաստ են իրենք օգնել՝ 59,1%, դիմել ոստիկանին՝ 23,8%, ՀԿ-ներին և «Թեժ գծի» օգնությանը պատրաստ է դիմել հարցվածների շատ ավելի փոքր մասը:

Գծապատկեր 26. Ինչպիսի քայլերի կդիմի, եթե ընկերն առնչվի երևույթի հետ (երեխաների պատասխանները)



Ինչ վերաբերվում է երևույթից պաշտպանվելու վերաբերյալ իրենց գիտելիքների մակարդակի սուբյեկտիվ գնահատմանը, ապա հատուկ դպրոցների երեխաների մեծամասնությունը համոզված է, որ «լիովին տիրապետում է», ունի այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են օգնելու որևէ երեխայի, եթե վերջինս հայտնվի նմանատիպ իրավիճակում, մինչդեռ հանրակրթության երեխաների մեծ մասը իր գիտելիքների առումով անվստահ է: «Բոլորովին չեմ տիրապետում» տարբերակի պատասխանների մեջ առավելագույն մասը կազմում են


խնամքի կենտրոնի երեխաները⁴¹: Աղյուսակ 8-ում ներկայացված է երեխաների գիտելիքների սուբյեկտիվ գնահատականը՝ «նման իրավիճակներում խորհուրդներ տալու համար»:

Աղյուսակ 8 *Գիտելիքների վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականը՝ ըստ երեխաների*

Ունե՞ք արդյոք բավարար գիտելիքներ՝	Հանրակրթական	Մանկատուն	Խնամքի կենտրոն	Հատուկ դպրոց
Այո, լիարժեք	21,7%	26,8%	23,9%	33,8%
Ոչ այնքան	64,1%	58,6%	50,8%	54,5%
Բոլորովին չունեմ	5,8%	1,2%	7,0%	3,9%
Դժվարանում եմ պատասխանել	8,4%	13,4%	18,3%	7,8%
Ընդամենը պատասխաններ	100,0%	100,0%	100,0%	100,0%

Ինչ վերաբերում է երեխաների զգուշությանն ու հնարավոր շրջահայաց վարքի դրսևորմանը (ըստ երեխաների սուբյեկտիվ գնահատականների), ապա միայն 7,3 %-ն է կարծում, որ այլ վայրում աշխատելու կամ սովորելու մեկնելիս կարևոր է նախապես ունենալ գրավոր պայմանագիր: Այդ վայրում աշխատելու, սովորելու հանգամանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքելը կարևորում են 29%, մյուս տվյալները՝ սովորելու վայրի, ապրելու վայրի հանգամանալից հասցեն, կրթավճարը/աշխատավարձը պարզելը կարևորել են հարցվածների փոքր մասը (տես հավելվածում՝ Աղյուսակ Հ 4): Երկրից մեկնելու պարագայում հարցվածների միայն 16,8%-ն է ինքնուրույնաբար պատրաստ զբաղվել իր փաստաթղթերի ձևակերպմամբ. 56,3%-ը պատրաստ է վստահել դա ծնողներին, մոտ 21%-ը՝ երրորդ մարդկանց՝ ընկերներին, ծանոթներին, տուրիստական գործակալություններին, հաստատության ղեկավարներին:

Գծապատկեր 27 *Փաստաթղթերը վստահելու պատրաստականությունը ըստ երեխաների*




⁴¹ Ի դեպ, այս խումբը հարցված երեխաների խմբերում ամենափրագեկվածն էր:

Գիտարկելով այս պատասխանները ստուգիչ դատողությունների կշիռների համատեքստում, ստանում ենք հետևյալ պատկերը. փաստորեն, երեխաները պաշտպանական կանխարգելիչ միջոցների հիմնական մասը համարել են կարևոր:

Միևնույն ժամանակ, երեխաներն իրենց դատողություններում ավելի մեծ շրջահայացություն են ցուցաբերում (տեսականորեն), քան հնարավոր պրակտիկ գործողություններում: Օրինակ, անձնագիրը անձամբ պահելը համարում են կարևոր, սակայն ձևակերումների համար նրանց մոտ մեկ հինգերորդը պատրաստ է վստահել անձնագիրը երրորդ մարդուն: Կամ, պայմանագիր ունենալը տեսականորեն համարում են կարևոր, սակայն արտասահման սովորելու կամ աշխատելու մեկնելու պարագայում ընդամենը 7 %-է նշել, որ գրավոր պայմանագրի առկայությունը կարևոր է:

Թե դատողություններում, և թե ենթադրյալ պրակտիկ գործողություններում երեխաները բավականին խոցելի են առաջարկի, հրավերի առնչությամբ հանգամանալից տեղեկություններ հավաքելու հանգամանքը չկարևորելու տեսակետից: Այս գործոնը բացասաբար կազդի նրանց ճկունության վրա: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ երեխաների միայն մեկ երրորդն է հակված դադարեցնել աշխատանքը, եթե ամիսներով չի վարձատրվում, իսկ մեկ երրորդը պատրաստ է դիմել ինչ որ քայլերի (ծնողներին, ոստիկանությանը, դատարան), զգալի մասը՝ 26%-ը, կողմնակից է ավելի պասսիվ բնույթի գործողությունների (Գծապատկեր 28)

Գծապատկեր 28. Երեխաների պատասխան քայլերը հնարավոր շահագործման դեպքում



Այնուամենայնիվ, շահագործման վտանգի դեպքում երեխաները պատրաստ են ոչինչ չձեռնարկել, երբ պետք է օգնել ընտանիքին՝ հաղթահարելու ֆինանսական ծանր վիճակը: Այն դեպքում, երբ ընտանիքը գտնվում է ծանր պայմաններում, երեխաների գերակշիռ մեծամասնությունը պատրաստ է աշխատել ցանկացած պայմաններում, կեսից մի փոքր պակասը՝ նաև աշխատել բնակության վայրից հեռու վայրում, մեկ երրորդը՝ առողջության

համար վտանգավոր պայմաններում, իսկ մեկ հինգերորդը՝ պատրաստ է անգամ տեղաշարժման համար սահմանափակություններ ունեցող աշխատանք կատարել: Միայն մուրացկանություն և պոռնոգրաֆիական նպատակներով նկարահանվելու տարբերակներն են ստացել նվազագույն չափ՝ պակաս 10%-ից: Մի կողմից սա բացատրելի է, եթե դատում ենք արժեքների տեսանկյունից. երեխան այնքան է արժևորում իր ընտանիքը, որ պատրաստ է օգնել նրան ցանկացած, այդ թվում՝ իրեն լրջորեն վնասող պայմաններով⁴²: Սակայն այս հանգամանքը վկայում է նաև նրանց խոցելիության մասին. երեխաների անկեղծ նվիրվածությունը կարող է դառնալ շահարկման առարկա և շահագործման առիթ՝ այլոց, մերձավորների, նաև ծնողների կողմից: Այլ խոսքով, շահագործման իրավիճակի լրջությունը երեխաների կողմից հավուր պատշաճի գիտակցված չէ: Ի լրումն դրա, նրանք գտնվում են նաև ծնողների/խնամողների ընկալումներով պայմանավորված ռիսկերի ներքո: Ֆոկուս խմբերին մասնակցած մասնագետները նշում էին հանգամանքներ, որոնք, ի լրումն մակարդակում ընկալումների, լրացուցիչ խոցելիություն էին առաջ բերում մեզո և մակրո մակարդակներում:

- Ես զբաղվածության ոլորտի աշխատող եմ: Ինձ խնդրում են աշխատողներ և խոստանում են վճարել: Բայց ես համոզված չեմ, որ նա կվճարի, այնպես որ տեղի է ունենում տեղական թրաֆիկինգ, որում ես ակամա ներգրավվում եմ:
- Մենք նույնիսկ տվյալներ չունենք թե ինչ է կատարվում մեր քաղաքացիների հետ դրսում: Գուցե արժե՞ պետական մակարդակով որևէ բան անել: Որքան էլ իրազեկենք հասարակությանը, միևնույն է, եթե ընտանիքի համար ոչինչ չենք կարողանում անել, ապա անիմաստ է երեխայի համար անելը:

Մակրո մակարդակում խոցելիության գործոններից են համարվել նաև որոշ բարեփոխումներ, օրինակ, կրթական ոլորտում, որտեղ որոշ ռիսկեր ակնհայտորեն հաշվի չեն առնվել:

...Կրթության ոլորտում իրականացված վերջին ռեֆորմներից հետո մի տեսակ նոր երևույթ է ի հայտ եկել. 8 և 9 դասարաններից հետո երեխաները դպրոց չեն հաճախում և ընդհանրապես ոչնչով չեն զբաղվում...այդ պարապությունը ինքնին շատ ռիսկային է դարձնում դեռահասների իրավիճակը:

Ըստ այդմ, կարելի է հետևություն անել, որ երեխաների խոցելիության գործոնները շատ ավելի նշանակալից են, քան ճկունության: Այսպիսով.

- Որքան բարեկեցիկ՝ այնքան իրազեկվածությունը բարձր, ըստ այդմ, այդքան անհանգստության մակարդակը՝ բարձր, այլ խոսքով, որքան մարդիկ իրազեկ են, այնքան

⁴² Որսշ փորձագետներ պնդում էին, որ դա ճիշտ է նաև մեծերի համար: «...ինձ ավելի հուզում է այն հանգամանքը, որ մենք ունենք այնպիսի իրականություն, որտեղ մարդիկ ստիպված են գնալ նման զոհողությունների, սա է իրողությունը ու դրա հետ գրթե ոչինչ չենք կարող անել...»

կարևորում են այդ խնդիրը, պատկերացնում վտանգները: Միևնույն ժամանակ, հարցված բնակչության մեկ երրորդը չի կարևորում հարցը (չի վերաբերում, չի հուզում):

- Երևույթի հետ առնչվելու պարագայում հարցվածների կեսից ավելին (54.8%) պատրաստ է դիմել ոստիկանության միջամտությանը: Կարելի է ենթադրել, որ հանցագործության լրջությունը և դրանից պաշտպանվելու բարդությունը առնվազն հարցվածների այդ խմբի կողմից գիտակցված է, մինչդեռ մյուս կեսի մոտ՝ ոչ:

- Դատելով «դիմելու» վերաբերյալ տվյալներից, դեռևս բարձր չէ մասնագիտացված ծառայությունների ու հասարակական կազմակերպությունների մասին իրազեկվածության մակարդակը: Հատկապես փոքր է «Թեժ գիծ» դիմողների չափաբաժինը, ինչը, ըստ էության, մտահոգության առարկա է:

- Երեխաներ, հատուկ դպրոցների երեխաների մեծամասնությունը համոզված է, որ «լիովին տիրապետում է», ունի այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են օգնելու որևէ երեխայի, եթե վերջինս հայտնվի շահագործման իրավիճակում, մինչդեռ հանրակրթության երեխաների մեծ մասը իր գիտելիքների առումով անվստահ է: «Բոլորովին չեմ տիրապետում» տարբերակի պատասխանների մեջ առավելագույն մասը կազմում են խնամքի կենտրոնի երեխաները: Ի դեպ, այս խումբը երեխաների խմբում ամենաիրազեկվածն է:

- Երեխաների գգուշավորությանն ու շրջահայաց վարքի դրսևորման հնարավորությունները մտահոգության առարկա են. տեսական դատողությունների մակարդակում երեխաները կարևորում են նախազգուշական գրեթե բոլոր միջոցները, սակայն պրակտիկ մակարդակում իրենց ենթադրյալ գործողություններում՝ ոչ այնքան:

- Երեխաների միայն մեկ երրորդն է հակված դադարեցնել աշխատանքային հարաբերությունները, եթե ակնհայտ է շահագործումը, մեկ երրորդը պատրաստ է ինչ որ քայլեր ձեռնարկել, իսկ մի զգալի մասը կողմնակից է ավելի պասսիվ բնույթի գործողությունների (պարզապես լռել և սպասել):

- Անգամ շահագործման ակնհայտ վտանգի դեպքում երեխաները պաշտպանական որևէ գործողության չեն դիմում, երբ պետք է օգնել ընտանիքին: Երեխաների գերակշիռ մեծամասնությունը, այն դեպքում, երբ ընտանիքը գտնվում է ծանր պայմաններում, պատրաստ է աշխատել ցանկացած պայմաններով: Սա բարձր ռիսկային գործոն է. երեխաների անկեղծ նվիրվածությունը կարող է դառնալ շահարկման առարկա և շահագործման առիթ՝ մերձավորների, նաև ծնողների կողմից:

Այսպիսով, երեխաները կամովին կարող են հայտնվել աշխատանքի անբարենպաստ պայմանների ռիսկերի ներքո:

2.5. Պայքար և պաշտպանություն


Հարցված երեխաների մեծամասնության կարծիքով երևույթի դեմ պայքարի լավագույն միջոցը համարվում է երեխաների կարողությունների զարգացումը, մասնավորապես՝ «զգուշանալը» տեղեկանալու միջոցով (58.5%) և զինվելը՝ ուսուցման միջոցով:⁴³ (Աղյուսակ 9)

Աղյուսակ 9 Պայքարի միջոցները ըստ երեխաների

Պայքարի միջոցները ըստ երեխաների	%
Տեղեկացնել երեխաներին մյան վտանգների մասին	29,8%
Տեղեկացնել երեխաներին այդ հարցերով զբաղվող կազմակերպությունների մասին	5,3%
Երեխաներին ուսուցանել պաշտպանվելու ձևերի մասին	12,6%
Ծնողներին ուսուցանել	12,5%
Ուսուցիչներին ուսուցանել	5,1%
Պատժել հանցագործներին	18,6%
Օգնել աղքատ ընտանիքներին	10,9%
Օրենքները խստացնել	2,0%
Դժվարանում եմ պատասխանել	3,2%
Ընդամենը պատասխաններ	100%

Մյուս կողմից, հատկանշական է, որ երեխաներին տեսանելի են եղել նաև մակրոմակարդակի խնդիրները. ըստ երեխաների, ընտանիքների աղքատության հաղթահարումը, օրենքների խստացումը և հանցագործներին պատժելը համարվել են ապահով միջավայրի անհրաժեշտ կոմպոնոնտներ, որոնք թույլ չեն տա, որ երևույթը զարգանա: Ըստ էության, անուղղակիորեն, հարցված բնակչության 63,3%-ը պայքարի համեմատաբար ավելի արդյունավետ միջոց է համարում երևույթի մասին տեղեկացված լինելը, դրա մասին գիտելիք ունենալը և պատրաստ է ավելացնել իր գիտելիքները, տեղեկատվությունը այդ ոլորտում (Գծապատկեր 29):

Գծապատկեր 29. Թրաֆիկինգի վերաբերյալ գիտելիքներն ավելացնելու ցանկությունն ըստ մարզերի.




⁴³ ընդ որում «ծնողներին ուսուցանելու» միջոցով, միջնորդավորված ուսուցման բավական վստահելի ձև է համարվել ուսուցիչների կրթումը, ըստ էության նկատի ունենալով, որ նրանք իրենց հերթին կկրթեն երեխաներին:

Հարցված մեծերի երկու երրորդը գերադասում է, որ լրացուցիչ տեղեկությունները վերաբերեն դեպքերի հրապարակմանը, գոհերի վկայություններին, օրենքների լուսաբանմանը: Կարևորել է նաև սեմինարների միջոցով ուսուցումը՝ ինչպե՞ս պաշտպանվել:

Հետաքրքրական է, որ երևույթի մասին ավելի շատ տեղեկություններ ցանկացել են ստանալ հատկապես այն մարզերում, որտեղ իրազեկվածությունը դիտարկվել է առավել բարձր (Գծապատկեր 30):

Գծապատկեր 30. *Իրազեկվել ցանկացողների բաշխումն ըստ բնակավայրի (բնակչություն)*



Ընդ որում, ըստ զբաղվածության ոլորտի, առավել հետաքրքրված են պետական ծառայողները, գյուղացիական տնտեսության մեջ ներգրավվածները և ինքնազբաղվածները: Ըստ սեռի, գիտելիք ստանալ ցանկացել են կանանց 64,8%-ը, իսկ տղամարդկանց՝ 59,1%-ը: Ըստ կրթական մակարդակի, ավելի շատ լրացուցիչ տեղեկություններ են ցանկացել ստանալ այն հարցվողները, որոնք ունեն միջնակարգ և ավելի բարձր կրթություն: Ըստ սոցիալական խմբերի, ավելի հետաքրքրվածություն են ցուցաբերել այն հարցվողները, որոնք ընտանիքի կազմում ունեն հետևյալ սոցիալական խմբերը՝ հաշմանդամ անդամներ, միայնակ մայրեր, 7-18 տարեկան երեխաներ, նաև փախստականների ընտանիքները: Հետաքրքրված խմբի մեծամասնությունը գյաւղաբնակ է, ավելի փոքր մասը բնակվում է մարզերի քաղաքներում, իսկ ամենաքիչ մասը՝ Երևան քաղաքում:

Ըստ փորձագետների, մարդկանց իրազեկվածությունը շատ է կարևորվում, քանի որ «...կիսագրագետ մարդը չի կարող թրաֆիկյոր լինել, դրա համար հմտություններ են անհրաժեշտ..., դա ինտելեկտուալ աշխատանք է.... մինչդեռ կիսագրագետ մարդը կարող է դառնալ գոհ»: Եթե անհատը իրազեկված է, բայց չի կարողացել խուսափել իրավիճակից, ապա նա կարող է գոնե նվազագույնի հասցնել իր գոհ դառնալու վնասները, արագ ելքեր գտնել» (փորձագետ): Նրանք համոզված են, որ պայքարի միջոցները մշտապես պետք է

վերանայել, քանի որ «թրաֆիկյորները շատ հմուտ են և, բնականաբար, մոդիֆիկացնում են բոլոր առաջարկները»: Հետևաբար, «...խաբելու, մոլորեցնելու հմտություններ ունեցող մարդու հնարքներին դիմակայելու համար անձը պետք է ի վիճակի լինի տիրապետելու այնպիսի նվազագույն պաշտպանության միջոցների, ինչպիսին «ոչ» ասելու կարողությունն է» (փորձագետ): Այլ խոսքով, բացի իրազեկվածությունից, հատկապես երեխաների դեպքում, կարևոր է զարգացնել ճկունության մեխանիզմները, որովհետև «ռիսկը միշտ կմնա բարձր, եթե մարդը ցածր ինքնագնահատական ունի և այնպիսի անելանելի վիճակում է, որ անգամ նվաստացուցիչ պայմաններով առաջարկը կարող է իբրև գրավիչ համարել »: Մեկ այլ փորձագետ հաստատում է, որ «շատ կարևոր է մարդկանց զինել այն իմացությամբ, թե աշխատանքի առաջարկ ստանալու դեպքում ինչպես ստուգել դրա հավաստիությունը, վստահելիությունը և ինչպես պաշտպանվել հնարավոր վտանգներից»: Նույնը պետք է անել երեխաների դեպքում, սովորեցնել ինչպես իրենց ապահովագրել և հետևաբար՝ պաշտպանվել վտանգներից: «Միայն սահմանափակվել իրազեկվածությամբ, **կնշանակի զբաղվել ինքնախաբեությամբ...**»: Երեխաների դեպքում, ի լրում իրազեկման, շատ լուրջ մասնագիտական մեթոդներ են անհրաժեշտ: Այսպիսով,

- Այս փուլում, երբ կա հասկացությունների տարըմբռնում և երևույթի ճանաչման, նույնացման բարդություններ, ավելի արդյունավետ կլինի, եթե «մեկ էջանոց» սահմանումների ուսուցման փոխարեն երեխաներին իրազեկենք ընդհանրապես շահագործման դրսևորումների մասին՝ թեթևից մինչև ծանր աստիճաններ և որպես ծանրագույն հանցատեսակ նշվի նաև թրաֆիկինգը: Ըստ փորձագետների, երիտասարդներին պետք է ուսուցանել պաշտպանության միջոցները, իսկ երեխաներին իրազեկել շահագործման երևույթի՝ ընդհանրապես և դրա վտանգների մասին:
- Բնակչության երկու երրորդը համեմատաբար ավելի արդյունավետ միջոց է համարում երևույթի մասին ավելի տեղեկացված լինելը, դրա մասին գիտելիք ունենալը՝ դեպքերի հրապարակման, զոհերի վկայությունների, օրենքների լուսաբանման միջոցով, իսկ մեկ երրորդը գերադասում է սեմինարների միջոցով տեղեկանալ, թե ինչպե՞ս պաշտպանվել:
- Երևույթի մասին ավելի շատ տեղեկություններ ցանկացել են ստանալ հատկապես այն մարզերում, որտեղ իրազեկվածությունը առավել բարձր է դիտարկվել. որքան տեղեկացվածության մակարդակը բարձր, այնքան ցանկությունը ավելին իմանալու՝ մեծ: Երեխաները ուսուցումը համարում են պայքարի միջոց, ինչպես և մեծերը, սակայն պակաս կարևոր չեն համարում մակրոմակարդակի խնդիրների կարգավորումը. ընտանիքների աղքատության հաղթահարումը, օրենքների խստացումը և հանցագործներին պատժելը (քիչ, բայց, այնուամենայնիվ, նշվել է նաև կոռուպցիայի դեմ պայքարը):

ԳԼՈՒԽ III

Երեխաների թրաֆիկինգի երևույթի նկարագիրը և դեմ պայքարի ռեսուրսներն ու բացերը

3.1 Երեխաների թրաֆիկինգի երևույթի նկարագիրը (որակական հետազոտության տվյալների ամփոփում)

Տարածվածությունը և դրսևորումները. Մեր իրականության մեջ թե մեծերի, և թե երեխաների շրջանում երևույթի առկայությունը հաստատվեց բոլոր փորձագետների կողմից և ֆոկուս խմբերում: Ըստ մասնագետների, աշխատանքային շահագործումը ավելի շատ մեծերի հետ է կատարվում, քան երեխաների: Երևույթն առավել տարածված է շինարարությունում աշխատող տղամարդկանց շրջանում. « Որոշ գործատուներ, օգտվելով առիթից, որ իրենք չեն պատժվում, շատ լավ գիտեն ամենախոցելի ընտանիքներին և շահագործում են» (ֆոկուս խումբ, Գեղարքունիք): Նշվում էին նաև թրաֆիկինգի դրսևորման այլ ձևեր:

Ֆոկուս խմբի մասնակիցների վկայություններից.

- Ամուսինը ընկերների հետ մեկնել է ՌԳ՝ աշխատելու: Աշխատանքը շատ վատ պայմաններում էր, անտառում, մույնիսկ վերմակ չկար ձմռանը: Նրանք թույլ չէին տալիս դուրս գալ: ՀԿ-ների միջոցով վերադարձ է եղել:
- Արտաշատում ՌԳ-ից ինչ որ մեկը գալիս է, հավաքագրում մի քանի կանանց ու տանում իր հետ: Պարզվեց, որ նրանք քնում և աշխատում էին մույն տեղը: Չկային ոչ մի հիգիենիկ պայմաններ, ավելին՝ առողջությունը և դեմքն այդ կանանց այլալվել էր և չէին վճարվել: Շատ մեծ դժվարությամբ վերադարձել են:
- Տղամարդը գնացել է ՌԳ՝ աշխատելու, սկսել է ապրել մի կնոջ հետ, ով իրեն պարբերաբար գումար էր տալիս, հագցնում և այլն: Սակայն, երբ տղամարդը ուզում էր գնալ այդ տանից, նրան թույլ չի տվել, ասելով, որ իր պարտքերը պետք է մարել: Իսկ դրանք այնքան շատ էին, որ նա չէր կարող մարել:
- Վանաձորցի մի կին, ով կամավոր կերպով գնացել է Ղարաբաղի պատերազմին մասնակցելու, մի քանի տարի հետո եկել է ու գնացել Թուրքիա ու հետո սկսել այստեղից աղջիկներ հավաքագրել: Նա հիմա ազատագրված է:

Այս երևույթը բավականին տարածված է և վերափոխվել է այն առումով որ «ոչ միայն մեր երկրից են արտասահման ուղարկում, այլ նաև մեր երկիր են բերում աղջիկների (պարուհիներ Ռուսաստանից/Ուկրաինայից) և ենթարկում թրաֆիկինգի:

Կարծիք կար, որ երեխաներին թրաֆիկինգի ենթարկելու դեպքերը Հայաստանում հիմնականում ներքին են⁴⁴: Համոզմունքը, որ ավելի շատ կան չհայտնաբերված դեպքեր,

⁴⁴ Այն հայտ նվազել են նաև չափահասների թրաֆիկինգի դեպքերը դեպի Արաբական Էմիրություններ, սանկցիաների խստացումը բավականին օգտակար էին, ըստ փորձագետի:

պայմանավորված է մուրացկանության առիթով հարուցված դեպքերի շուրջ դատողություններով. «Մուրացկանությունը առաջին անգամ 2008 թ. վերջում էր, որ դիտվեց որպես թրաֆիկինգ: Նման դեպքեր շատ կան մեր իրականության մեջ, բայց չհայտնաբերված»:

Չափերի մասին կարծիքները շատ իրարամերժ էին: Ոմանք հակված էին հիմնվել պաշտոնական տվյալների (բացահայտված 3 դեպքերի) վրա, այն դեպքում, երբ մյուսները վստահ էին, որ իրականության մեջ դեպքերը շատ ավելին են, «բայց չի հաջողվում բացահայտել»: Բացահայտելուն ամենից առաջ խանգարում է, այսպես կոչված, երեխաների ֆետիշացման «հայկական մոդելը», որը թվացյալ է, քանի որ մեր իրականության մեջ առկա է երեխայի և չարաշահում, և շահագործում: Ըստ մի փորձագետի, «Չայլամի կեցվածքը այդ հարցում մեզ չի օգնում, ավելին՝ խանգարում է...»:

Փորձագետներից ոմանք այն կարծիքին էին, որ եթե խորությամբ ուսումնասիրենք այս ոլորտը, կհայտնաբերվեն դեպքեր ինչպես աշխատանքային, այնպես էլ սեռական շահագործման: «Կասկած չկա, որ դեպքերը կան և դրանք եզակի չեն, սակայն նույնականացման դժվարությունների հետ կապված, պաշտոնապես գրեթե ոչինչ չի գրանցվում» (փորձագետ): Փորձագետները համոզված էին, որ ի տարբերություն աշխատանքային և սեռական շահագործման, ստրկության ու բժշկական փոխպատվաստման դեպքեր երկրում չկան և չեն գրանցվել նաև ոչ պաշտոնապես:

Աշխատանքային չարաշահում. Փորձագետներից ոմանք դժվարանում էին համոզված պնդել կամ ժխտել, որ երեխայի թրաֆիկինգի երևույթ գոյություն ունի, սակայն համոզված էին, որ գոյություն ունի երեխայի աշխատուժի չարաշահում, ինչը, որոշ չափով, հաստատվում է երեխաների հետ հարցազրույցի տվյալներով. «Մեղրիում, աշնանը, բերքահավաքի ժամանակ երեխաներին հաճախակի աշխատացնում են և փող չեն տալիս: Հնարավոր է ամբողջ օրը աշխատացնեն, փոխարենը միայն ուտելու բան առնեն, կամ մի հատ պաղպաղակ» (երեխայի հետ հարցազրույցից): Այս տեսակետը չէին կիսում որոշ փորձագետներ. «հիմնականում երեխաները աշխատում են սահմանի վրա, բեռներ են բարձում, գունավոր մետաղներ են հավաքում և այլն, բայց որպես կանոն աշխատում են հաճույքների բավարարման, «գրպանի» գումար ունենալու համար և հիմնականում իրենց ուժին համապատասխան աշխատանքներ են իրականացնում»:

Ֆոկուս խմբերից մեկի ժամանակ մասնագետներից ոմանք նշեցին երեխայի և ծնողի (համատեղ) աշխատանքի չարաշահման մասին. «Մեր գյուղերից մեկում մի կին փնտրել է այն ընտանիքներին, ովքեր «հացի խնդիր» ունեն: Ես չեմ ճանաչում ով է կազմակերպիչը, բայց գիտեմ, որ կին էր: Մեքենայով տեղափոխել է բոլոր հավաքագրած կանանց և նրանց

երեխաներին՝ ծիրանի այգիներում աշխատելու: Նրանք թույլ չեն տվել նույնիսկ հանգստանալ, այսինքն մեջքն ուղղել կամ կանգնել ծնկները հանգստացնելու համար: Երեխաները դիմանում էին, նրանք երիտասարդ են, սակայն մայրերը՝ ոչ: Նրանք չեն վճարվել կամ էլ վճարվել են կիսով չափ, և հետևանք չեղավ, քանի որ բանավոր պայմանավորվածության հիման վրա էր»: Հետաքրքրական է, որ Ֆոկուս խմբի մասնակիցների մեծամասնությանը այս դեպքը ծանոթ էր:

Աշխատանքային շահագործման ոչ բոլոր ձևերն են համարվում վտանգավոր. «Ուսուցիչները գնահատականի համար երեխաներին ստիպում են իրենց այգին փորել, աշխատել խաղողի այգում և այլն: Բայց չեն կարծում, որ սա խնդիր է: Այս երևույթը կար նաև Սովետական Միության ժամանակ»: *Ֆոկուս խմբի մասնակից*

Ֆոկուս խմբերի մասնակիցների վկայություններից.

- 14-ամյա երեխան աշխատում է ծնողների փոխարեն, նրա աշխատածը ծախսվում է ծնողների հարբեցողության վրա: Ամբողջ օրը անասնապահությամբ է զբաղվում և հողագործությամբ: Երբ մենք այցելեցինք այդ ընտանիք, մայրը տարբեր պատճառաբանություններ էր բերում, բայց մասնագետները տեսան, որ երեխան դպրոց չի գնում, որպեսզի աշխատի: Եվ երբ երեխան փորձում է ընդիմանալ, նրան ծեծում են: Անասուն էր պահում, «չոլերից» աթարներ էր հավաքում:
- Շատ երեխաներ ներգրավված են անասնապահության, հողագործության մեջ, մի մասը, հատկապես ամռանը, գնում մալինա են հավաքում, վաճառում, որից ստացված հասույթը հետո ծախսվում է հոր օդու վրա:
- Ամուսիններով ամուսնալուծվել են, ամուսինը մեկնել է Ռուսաստան և այլևս չի վերադարձել: Երեխայի մայրը, զայրացած լինելով ամուսնու վրա, կռվում է երեխայի հետ, տուն չի թողնում, ասելով, որ պետք է աշխատի իր հոր փոխարեն: Երեխան օրերով մնում էր ծովի (Սևանի) ափին, և ծառայում սրան-նրան մի փոր հացի դիմաց:
- Քարի ցեխ ունենք, որտեղ երեխա էր աշխատում, դպրոց չէր գնում, բայց իրեն ոչ մեկ չի ստիպել: Շեֆի հարևանի երեխան էր: Գայթակղել էին երեխային ավելի շուտ, քան ստիպել: Ծնողը կարծում էր, թե երեխան դպրոց է հաճախում...
- ...MSF կազմակերպությունում դեպք էր եղել, երբ որ տուբերկուլյոզով հիվանդ անչափահաս երեխա էր հետ վերադարձվել Ռուսաստանից: Նրան էլի տարբեր ձևերով շահագրգռել էին արտրագնա աշխատանքի հետ կապված, որ ուսումնական արձակուրդի ժամանակ կարող է գնալ փող վաստակել այնտեղ և այլն: Նա գնացել էր, նրա փաստաթղթերը վերցրել էին և սպառնացել, որ եթե փորձի ինչ-որ ձևով հետ գնա, ապա կվերացնեն նրա քրոջը, էս կանեն, էն կանեն: Այդպիսով մի քանի տարի այդ երեխայի մասին ոչ մի լուր չկար:

Երեխաների վկայություններից՝

- Տղան 13 տարեկան է, հաստատությունում է քրոջ հետ: Ընտանիքում ունի հայր և հորեղբայր, մորը չի հիշում, 3 տարեկան է եղել, երբ մայրը լքել է նրանց և հեռացել: Հաստատություն է եկել ՀՕՖ-ի երեխաների կենտրոնից: Նա պատմում է, որ ինքն ու քույրը աշխատում էին փողոցում, ծաղիկ և օրացույց էին վաճառում, վաստակում էին օրական 6000-7000 դրամ, սակայն երբ տուն էին գալիս հայրը ֆիզիկական բռնությունների էր ենթարկում իրենց, գումարը վերցնում էր իրենց ձեռքից և ծախսում խմիչքի վրա: Ըստ տղայի՝ նրանք երկար

ժամանակ գիշերել են փողոցում, կամ ինտերնետ ակումբներում: Նրանք օրավարձով բնակվել են տարբեր վայրերում: Նույնիսկ տղան նշեց, որ եղել են դեպքեր, որ փողոցում աշխատելու ժամանակ օտար մարդիկ փորձել են համոզել նրան վաճառել թմրանյութեր, ասելով, որ ոչ ոք չի իմանա դրա մասին, սակայն ինքը չի համաձայնվել: *Հատուկ կրթահամալիրի սանի հետ հարցազրույցից*

- Մանկատան երեխան աշխատել է «Հույս և իրավունք» կազմակերպությունում, համակարգչի վրա, խոստացել են աշխատավարձ, օրական 1000 դրամ, հետո չեն տվել գումարը, շատ պահանջելուց հետո տվել են մի փոքր մասը միայն:

Ըստ փորձագետներից մեկի, «հետաքրքրական է, որ բոլորս գիտենք, տեղյակ ենք և առնչվում ենք երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի հետ, սակայն մեր կառավարությունը հակված չէ ընդունելու, որ Հայաստանում գոյություն ունի երեխայի աշխատանք...»: Աշխատանքային շահագործումը հատկապես դրսևորվում է գյուղական, սեզոնային աշխատանքների մեջ ներգրավման ձևով, որը ըստ փորձագետներից մեկի, «ձեռնառու է և՛ ծնողին, ով աշխատացնում է երեխային իր տան կարիքների համար, և՛ ուսուցչին, ով չի արձանագրում բացակայությունը, որպեսզի լրացուցիչ խնդիրներ չառաջացնի դպրոցի և իր համար...»:

Մուրացկանություն. Փորձագետների հետ հարցազրույցից և ֆոկլուս խմբերի քննարկումներից ակնհայտ դարձավ, որ մասնագետները երեխաների շրջանում թրաֆիկինգի ամենատարածված ձևը համարում են մուրացկանությունը՝ աշխատանքային շահագործումից հետո:

Ֆոկլուս խմբերի մասնակիցների վկայություններից

Մի կին փոքր երեխան ձեռքին միշտ մուրացկանություն էր անում, որը մարդկանց մոտ խղճահարություն էր առաջացնում: Հետաքրքրական է, որ երեխան միշտ քնած էր լինում, որը ինձ շատ անհանգստացրեց: Ենթադրում եմ, որ երեխային հաբեր էին տալիս, որպեսզի կամ քնի կամ էլ խելոք մնա, ու իրեն չխանգարի...

Երեխաների վկայություններից

- Մեր փոխտնօրենը, որոշ երեխաների ուղարկում է մուրացկանության, գողության (ներկայումս գտնվում է մեկուսարանում), երեկոյան գումարը նրանց ձեռքից վերցնում է: Բայց երեխեքը վախենում են ասեն... *(հատուկ դպրոցի սան)*
- Մինչ հաստատություն գալը, մոր պարտադրանքով մուրացկանություն է արել տարբեր վայրերում, օրինակ՝ Հրազդան քաղաքում: Շատ չի ընդդիմացել՝ հասկանալով, որ գումարը պետք է ընտանիքին: Պատճառն, ըստ նրա, այն է, որ մայրն իրեն չի սիրել: Շատ դեպքերում բնակիչները նրան վիրավորել են: Մուրացկանությունից աշխատած գումարը մայրը միշտ ձեռքից վերցրել է: Այժմ մոր և ընտանիքի մյուս անդամների հետ չի շփվում: *(մանկատան սան)*
- Երկու անչափահաս աղջիկներ գալիս են իրենց շենք՝ մուրացկանություն անելու: Աղջիկներն ասել են, որ իրենք իրենց կամքով չեն զբաղվում մուրացկանությամբ, իրնց ստիպում են, բայց ով է ստիպում, չեն ասել: *(հանրակրթական դպրոցի սան)*
- Երևանում, Լուսնապարկում տեսել է, թե ինչպես են մի երեխայի ստիպում մուրացկանություն անել, երեխան իրեն ծանոթ է եղել: Երեխան լացել է, ասել, որ հոգնած է, չի կարող աշխատել, բայց նրա «չեֆը» ստիպել է փող հավաքել: *(հանրակրթական դպրոցի սան)*
- «Երբ ես փոքր էի, մայրս մահացավ և հայրս հրաժարվեց ինձանից, որպեսզի ամուսնանա

ուրիշի հետ: Նրանք ինձ դուրս շարտեցին: Ես ապրում էի քեռուս ընտանիքի հետ: Քեռիս ինձ ստիպում էր, որ փող հավաքեմ փողոցում: Ասում էր, որ փող չբերես, տուն չգաս»: *(մանկ. սան)*

Սեռական շահագործում. Որոշ մարզերում չէին ժխտում երեխաների հանդեպ սեռական շահագործման դեպքերը. «Երբ ես առաջին անգամ մեկնել եմ Սիրիա, մեր խմբում կային 4 աղջիկներ Երևանից (16, 18 և ավելի տարեկան): Իրենց հետ կար մի մեծահասակ, ով ներկայացրեց նրանց, իբրև իր ծանոթների աղջիկների, որոնք գնում են աշխատելու: Ակնհայտ էր, որ ստում էին, կամ էլ ինչ-որ բան թաքցնում: Պարզվեց, որ այդ աղջիկներից մեկը շատ հարուստ ընտանիքից էր, նույնիսկ մենք բոլորս զարմացել էինք, թե ինչու է նա այդ քայլին դիմել: Այսինքն, աղքատությունը չէ միայն, որ թրաֆիկինգի համար կարող է պատճառ հանդիսանալ»:

Ոմանք սեռական շահագործման իրենց հայտնի դեպքերի մասին խոսում էին՝ որպես արդեն հաղթահարված խնդրի. «Ունեինք «ստրիպտիզ ակումբ», որտեղ նույնիսկ անչափահասի մուտքը արգելված չէր և այնտեղ բազմաթիվ դեպքեր էին տեղի ունենում: Բարեբախտաբար, այժմ այն փակվել է»: Ազարակում մեկ այլ մասնագետ նշում էր, որ «Ժամանակաշրջան կար, որ պարսիկները մեքենաների մեջ երիտասարդ աղջիկներ, կանայք և երեխաներ էին տեղափոխում: Ի դեպ, այդ կանայք և աղջիկները «դժբախտ կամ տառապած տեսք չունեին...»: Մեր ոստիկանությունը կանգնեցնում էր և իջեցնում, թույլ չէր տալիս, սակայն հետո պարսիկները սկսեցին իրենց իրավունքները պաշտպանել և աղմկել դեսպանության միջոցով և այլն: Գ-ժվար է ասել՝ սա թրաֆիկինգ էր, թե ոչ, որովհետև, հաշվի առնելով Պարսկաստանի օրենքները, նա պետք է օրենքով ամուսնանա, նոր տանի իր հետ, բայց ես գիտեմ, որ այդ պրոբլեմը հիմա էլ կա, պարզապես էլ չենք կարողանում միջամտել»: *մասնագետի պատմածից*

Յուկուս խմբերի մասնակիցների վկայություններից

▪ . «...մայրը, ապրում է իր երկու անչափահաս դստերի հետ (15 և 17 տարեկան): Ապրելու ոչ մի տարրական միջոց չունեն, նույնիսկ տուն չունեն, ապրում են Նուբարաշենի «ամենակորած» տարածքներից մեկում. գտել են մի 1000 լիտրանոց բակ, այդ բակի վրա կտրել-պատուհան են սարքել ու ապրում են դրա մեջ: Դ-ա իրենց կացարանն է»: «...երկար ժամանակ դիմել են տարբեր ատյանների փորձելով հայթայթել ինչ-որ միջոցներ, բայց ոչ մի տեղից ոչինչ չկարողանալով ստանալ, ստիպված աղջիկները սկսեցին զբաղվել մարմնավաճառությամբ, այսինքն մայրն է դրդում, որ տանը, աղջիկները ընդունեն «կլիենտներ», տարբեր ժամերի կամ նույն ժամերին»: «...մեծամասամբ հաճախորդները զինվորներ են, քանի որ Նուբարաշեն համայնքում զորամաս կա...»: «... Ըստ հարևանների տարբեր «խայտառակություններ» են լինում, դեպքեր են լինում, հերթեր են լինում այդ երեխաների համար...»: «... Ինձ մայրը հստակ ասաց, որ եթե կարողանա որևէ մեկը ապահովել իրենց ապրուստը և դեղերի գումարը, ապա նա իր աղջիկներին այդ քայլին չի ուղարկի...»: «Փաստորեն մայրն է դրդում նրանց: Փոքր աղջիկն ասաց, որ երեք ամիս առաջ է գրկվել կուսությունից: Եվ երբ ես հարցրեցի թե արդյո՞ք նա ուրախ է դրա համար նա պատասխանեց. «...հա, ես գումար եմ վաստակում...»: *Իրավաբան, Նուբարաշենի վարչական տարածք*

▪ . «...Ծերեթելու մոտ, հենց Երևանյան լճի դիմացը մի հատ «որջ» է ստեղծվել, որը հայտնի է, որպես անչափահաս մարմնավաճառների հավաքատեղի ու այդտեղ տաքսիների մոտ, որ նայեք

կտեսնեք, որ 18-ից փոքր են այնտեղ կանգնողները և ինձ թվում է, որ հնարավոր չէ, որ իրավապահ մարմինները այդտեղով անցած չլինեն իրենց կյանքում...»: *Վորդ Վիժն, ՀԿ*

- Եղել է դեպք, երբ երեխաների մայրը ինքն էր տանում Երևան՝ մարմնավաճառությամբ շահագործելու երեխաներին, սակայն երեխաներից մեկին հաջողվել է փախչել: *Արարատ*

- Տարիներ առաջ գալիս էին Մասիսից, որդեգրում էին երեխային և տանում հետո սեռական շահագործման ենթարկում: Ես ինքս առնչվել եմ այդ երևույթի հետ: Հետո դժվարացրել են արտասահմանյան որդեգրությունը, և, հավանաբար, նվազել են այդպիսի դեպքերը: *Արարատ*

- Այնքափում ուսուցիչը սեռական բռնության է ենթարկել դասարանցիների աչքի առջև մի երեխայի, ով փորձել է նույնը անել իր տղայի հանդեպ: Նա նույնիսկ հրահրել է, որ հասակակիցները նույնպես վարվեն նրա հետ, եթե ուզում են, որ ինքը իրենց հարգի: Սա իհարկե թրաֆիկինգ է, որովհետև խմբին պարտադրել են անել դա: *Արարատ*

- Մի աղջիկ կար, որին նույնիսկ ուղարկել ենք ՀՕՖ-ի Երեխաների Կենտրոն և այլն, բայց հիմա 18 լրացել է ու հետքը կորցրել ենք: Աղջիկը բռնությունների էր ենթարկվում, մենք փորձում էինք պաշտպանել: Հենց 18-ը լրացավ, արդեն հնարավորություն ունեցավ փաստաթղթեր ստորագրել, արդեն բնակարանն էլ է վաճառվել: Ոչ մեկ չգիտի՝ ուր է այդ աղջիկը: Ես ավելի քան համոզված եմ, որ թրաֆիկինգի գոհ է դարձել: Ոստիկանությունը անընդհատ փնտրում է իրեն, բայց ոչ մի արդյունք: Բայց վերահսկելու և ստուգելու ոչ մի մեխանիզմ չունենք: Թրաֆիկինգի հավանականությունը, ռիսկը շատ մեծ է: *Լոռի*

- Ընտանիքը Վանաձորից տեղափոխվել էր Գյումրի, մայրը ամուսնացել էր, խորթ հայրը բռնություն էր գործադրում: Երեխան փախել է: Նման դեպքեր հիմա շատ են կատարվում, երբ աղջիկ երեխաների հանդեպ բռնություններ են կատարվում: Ու ես չեմ կարող ասել, որ սա միակ դեպքն է, պարզապես, մեխանիզմներ չկան բացահայտելու: *Լոռի*

- Հրագրան քաղաքում, «ջրի մարդուն» մայրը պարտք է եղել: Դրա դիմաց այդ մարդը սեռական կապի մեջ է մտել երեխայի հետ և այդ պարտքը չեզոքացրել են այդպիսով: Այդ հանցագործության դիմաց այդ մարդը վճարել է ընդամենը 100 000 տուգանք, ընդ որում դա երեխայի կամքով չի եղել, նա ընդդիմացել է դրան, երեխան եղել է 12 տարեկան, նրան ալկոհոլ են խմացրել և նա իվիճակի չի եղել ասել չեմ ուզում...»: *Երևան*

- «...15 տ աղջնակը մայրիկի հետ վիճելուց հետո, տնից գնացել էր: Ընկերուհին նրան տարել է Ջրվեժում գտնվող մի առանձնատուն, որտեղ նրանք սկսել էին ապրել և այնտեղից աղջիկը ընդունվել էր աշխատանքի ստրիպտիզ ակումբում որպես պարուհի: Այստեղ ամենակարևորը գործատուի պահը նշելն է: Գործատուն ասաց, որ իբր թե աղջիկը ստել է իր տարիքի մասին, սակայն պարզ երևում է աղջկա դեմքը մանկական էր: Այնտեղ երեխան սեռական շահագործման է ենթարկվել, որը դժվար է ասել իր կամքով թե ստիպողական: Երեխայի ասելով նա վաստակում էր ավելի քան 100,000 ՀՀ դրամ ամսեկան»: Ըստ պատմողի թրաֆիկյորը ընկերուհին է հանդիսանում այս դեպքում: *Երևան*

Երեխաների վկայություններից

- Կ.-ն 12 տարեկան է: Հաստատությունում է գտնվում շուրջ 1 տարի: Կ.-ի կենսաբանական մայրը զբաղվում էր մարմնավաճառությամբ և երեխայի ծնունդից հետո թողնում է նրան ընկերուհու մոտ, որպեսզի կարողանա աշխատել: Կ.-ն որպես մայր ճանաչում է Ս.-ին՝ մոր ընկերուհուն: Ապրել է նրա և նրա ամուսնու հետ միասին: Սակայն ինչպես նշում է երեխան, Ս.-ն շարունակ նրան ուղարկում էր մուրացկանություն անելու: «Ես օրական 500 դրամ էի հավաքում, բերում տալիս էի իրեն, եթե չբերեի, ինքը և իր մարդը (ամուսինը)՝ Գ.-ն, ծեծում էին ինձ», նշում է Կ.: Երեխայի խոսքերով, Ս.-ն և ամուսինը ստիպել են նրան զբաղվել օրալ սեքսով: «Նրանք ինձ ստիպում էին վատ բաներ անել բերանով, այնտեղ, որտեղ մենք ապրում էինք, մեծ մարդիկ կային, որ ինձ ստիպում էին բերանով վատ բաներ անել ու դրա դիմաց ինձ 200 դրամ փող էին տալիս: Մի մարդ կար, որ ավտո ուներ, գալիս էր, ինձ վերցնում էր, տանում էր մի տեղ ու ստիպում էր, որ այդպիսի բաներ անեմ», հիշում էր Կ.-ն: «Ես այդ մասին որևէ մեկին չէի պատմում,

վախենում էի, որովհետև այդ մարդը սպառնացել էր սպանել ինձ, եթե որևէ մեկին պատմեմ, իսկ հիմա պատմում եմ, որովհետև նա հիմա Ռուսաստան է գնացել»:

- «Ես պարի էի հաճախում, ինձ հետ մի աղջիկ էր գալիս՝ 13 տարեկան: Իմ պարի դասատուն նրան մի քանի անգամ տարել է շենքի նկուղը, հետագայում իմացանք, որ այդ աղջիկը պարում է ստրիպտիզ բարում (Դավիթ Բեկ փողոցում գտնվող երեկոյան ակումբում, անունը չի հիշում):
- Երեխան պատմեց, որ մանկատանը շատ դեպքեր են պատահում, որ նրան նվաստացնում է: Մանկատան տղաները ստիպել են շորերը հանել և «այնպես էին կծել կրծքերս, որ գրեթե մեկ ամիս կապտած էր, հետո մազակալեց»:
- Մի աղջկա տղաները գցեցին զուգարան ու ստիպեցին շորերը հանել, ասելով, որ պարզապես ուզում են նայել, հետո, «էն բանից արեցին»:

Թմրանյութերի տեղափոխում, վաճառք. Սյունիքի մարզը առանձնացվեց հատկապես այն առումով, որ այն սահմանային է, որն իր հերթին ծնում է լրացուցիչ խնդիրներ տարածաշրջանի համար. «Պարսկաստանի հետ սահմանի բացումից հետո թմրանյութի մեծ շրջանառություն գոյություն ունի մեր շրջանում՝ հատկապես «զինվորական քաղամաս»-ում (военный городок), որտեղ բավականին ռիսկային է դեռահասների համար՝ այդ թմրանյութերի տեղափոխման, վաճառքի մեջ ներգրավելու առումով, ինչքան էլ փորձում ենք պայքարել, անհնար է, չի ստացվում» (մասնագետ, Սյունիք):

Դպրոցի շրջակայքում շատ ներարկիչներ կան թափված: Աղքատ երեխաներին ներգրավում են դրա մեջ, ստիպում են երեխաներին գումար բերել, կամ էլ ծնողին վախեցնում են, որ երեխայի հետ վատ բան կանեն, եթե չբերի վճարի: Եթե սա թրաֆիկինգ չէ, միևնույն է նրանք նույնպես պոտենցյալ ռիսկի տակ են: (Արարատ, ֆոկուս խումբ)

Երեխաների վկայություններից

Հատուկ դպրոցում մի աղջիկ կար, նա պարուհի էր: Այժմ դպրոցից դուրս է եկել և ապրում է կողքի հանրակացարանում: Նա աշխատում է գիշերային ակումբներում, կանեփի և այլ թմրանյութեր է բերում դպրոց, ծախում է, կամ փոխանակում շալվարների և շորերի հետ. հաճախակի խմած է լինում: Դաստիարակները տեղյակ էին այս ամենի մասին, ավելին՝ նրանք ևս օգտվում էին:

«Ոչ շոշափելի, հոգևոր թրաֆիկինգ». Արարատում ֆոկուս խմբի մասնակիցները պնդում էին, որ գոյություն ունի ԷՄՈ խումբ, որի հավաքները տեղի են ունենում Սարյանի արձանի մոտ: Խմբի մեջ հիմնականում ներգրավված են 16-18 տարեկան երեխաներ: Խմբավորման «ղեկավարները» վարում են կեղծ գաղափարախոսություն, որը կարող է հանգեցնել նաև ինքնասպանության:

Մեկ այլ մասնակից պնդում էր. «Մեր մարզում շատ են տարածված մորմոնները, որոնք մարդկանց դարձնում են իրենց «գոմբիները», իրենց ուղեղը սկսվում է կառավարվել ինչ որ

մեկի կողմից: Անգամ եթե սա չենք անվանում թրաֆիկինգ, միևնույն է նրանք խիստ խոցելի են, կարող են ձեռք բերել «վիկտիմի սինդրոմ»:

Անօրինական որդեգրում, առևանգում և վաճառք. Յուրա խմբերի մասնագետները նշում էին առանձին դեպքեր, որոնք վերաբերում են անօրինական որդեգրության փորձերին և երեխաների առևանգման, ինչպես նաև երեխայի վաղ ու տարիքային խիստ անհամապատասխան ամուսնությունների դեպքերին:

- Մի հուլանդացի հովանավոր մեր մարզից մի ընտանիքի հովանավորություն էր անում վեց ամիս շարունակ. հագուստ, սնունդ և այլն: Վեց ամսից հետո առաջարկում է երեխաներից մեկին որդեգրել (քանի որ ինքը երեխա չունի), որպեսզի կտակի իր ամբողջ կարողությունը նրան: Դիմել են իրավաբանի, ով խորհուրդ է տվել, որ գա այստեղ ձևակերպի, նա խուսափեց ու այլևս չվերադարձավ: Այսպիսով հաջողվեց կանխել այդ երեխային թրաֆիկինգի ենթարկելը: *Արարատ*

- Երեխաներ են, այսպես կոչված, «որդեգրվում» արտասահման, որի հետքերը հետո չեն երևում: Մայրը ինքն է «որդեգրողի» հետ պայմանավորվում և վաճառում իր երեխային: Փաստեր կան, նույնիսկ ցուցադրվել է հեռուստատեսությամբ մի քանի անգամ: *Սյունիք*

- ...Իրենց ծանոթներից մեկի 15 տարեկան աղջկան 2 տարի առաջ առևանգել են ու պահանջել մեծ գումար՝ որպես փրկագին: Աղջկա ծնողները հարուստ են, հայրը մեծ կազմակերպության սեփականատեր է: Գումարը տալուց հետո աղջկան ետ են վերադարձրել, բարեբախտաբար նորմալ վիճակում: *Երեխայի հետ հարցազրույցից.*

- Կապանում փոքր երեխայի վաճառքի դեպք է եղել: *Ֆոկուս խմբի մասնակից*

Երեխայի վաղ և անհամապատասխան ամուսնություն

«...Մայրը ունի 4 աղջիկ, չորրորդ հղիության ընթացքում ամուսինը մեկնել է արտագնա աշխատանքի: Ամուսնու ընտանիքը (սկեսուրը, տալը...) տանից դուրս են շարտել այս կնոջը ասելով որ երեխան իր ամուսնու երեխան չէ: Երեխաները այդ ընթացքում մնացել էին այսպես կոչված «բարոյական» հորեղբոր և պապիկ-տատիկի մոտ: Ամուսինը վերադարձավ, և նրան համոզեցին, որ իր կինը իր բացակայության ընթացքում անբարո կյանք էր վարում: Արդյունքում ընտանիքը փլուզվեց: Այն երեք աղջիկներին, որոնք ապրում էին հոր ընտանիքի հետ ամուսնացրեցից բավականին վաղ հասակում (15 և 16 տարեկանում) անհամեմատ մեծ տարիքով տղամարդու հետ (30-ից բարձր): Եվ որովհետև երեխայի հասունությունը դեռ մինչև վերջ ձևավորված չէր, նա չէր կարողանում երեխա ունենալ այնքան շուտ որքան երեխայի ընտանիքն էր ակնկալում: Արդյունքում ունեցավ, սակայն նրա մոտ առաջացան սեռական խանգարումներ, որից հետո նա «փախավ» տնից, դարձավ «փողոցային» և թրաֆիկինգի ենթարկվեց, մեկնեց Դուբայ...»: *Երևան*

- «Քանի երեխան ունենք Հայաստանում, որ դեռ չձևավորված ամուսնացնում են, գյուղերում ունենք շատ դեպքեր. 16-17տ ամուսնանում են հետո իրենց ցիլիկի մոտ ենք տեսնում...»: Ես իբրև մասնագետ ծակ չունեմ աշխատելու: Օրենքը մեզ թիկունք չի լինում, մենք ինչպես կարող ենք աշխատել...»: *Երևան*

«Հարկահավաքություն». Այս երևույթի իրավական սահմանումը որպես դրսևորման տեսակ («շորթումը») թերևս ուղղակի կապ չունի թրաֆիքինգի հետ: Միևնույն ժամանակ գործոնները՝ «կամազրկություն», «խեղճություն» միջավայրի ճնշումը և այլն վկայում են խոցելիության մասին և, ըստ էության, շատ նման են թրաֆիքինգի հանգեցնող գործունեության տեսակներին: Երեխաների կարծիքով «հարկ վճարող» երեխաները « թույլ և կամազուրկ են»:

- Աղջիկ երեխան ստիպել է դասարանի մյուս բոլոր աշակերտներին գումարներ բերել: Շատ համարձակ, ստեղծագործական, ճկուն, շնորհալի աղջիկ էր, բայց իշխում էր ամբողջ դասարանի վրա: Անգամ զենք էր (դանակ) կիրառել: *Ֆոկուս խմբից, Գեղարքունիք*

Երեխաների վկայություններից

- Դպրոցում կա հարկահավաքություն: Դպրոցում մի տղա կա, նա հեղինակություն է, ստիպում է ուրիշ տղաներին, որ գողություն անեն ու իրեն գումար տան:
- Երեխան ասաց, որ երբեմն գյուղում լինում են դեպքեր, երբ երեխաները սխալ բաներ են անում, իսկ մյուսները պահանջում են գումար կամ քանկարժեք իրեր, որպեսզի չասեն դրա մասին (գաղտնիքը պահելու դիմաց):
- Չինվորները երեխաներին ստիպում են գումար բերել, իրենց հարևանի տղային «պլան» են տվել՝ ծխելու, որից տղան շատ վատացել է: Նրան ստիպել են տնից փող տանել:
- Երեխան պատմեց, որ ընկերոջը (ով նույնպես մանկատանն է խնամվում) մեծ տղաները, ժամանակ առ ժամանակ, ստիպել են «հարկ վճարել»: Վճարում էր գրենական պիտույքներ, գումար և իր հագուստը:

Թրաֆիկինգի սահմանման մեջ կարևոր դրույթը այն է, որ բացի հարկադրանքի պայմաններից, ենթադրում է նաև խոցելի վիճակից «օգտվելու» ճանապարհով երեխայի շահագործում, առանց կարևորելու գոհի համաձայնության հանգամանքը: Վերը նշված իրավիճակների մեծ մասում երեխաների համաձայնությունը նշան է նրանց խոցելիության, իսկ խոցելիության հանգամանքը, ըստ էության, չեզոքացնում է հարկադրանքի, բռնության, ազատության սահմանափակման թրաֆիկինգի «դասական» նախապայմանները: Ըստ էության, կախված մոտեցումներից, վերը նշված իրավիճակները կարող են ճանաչվել իբրև թրաֆիքինգ:

3.2 Երեխաների թրաֆիկինգի դեմ պայքարի ռեսուրսները

Օրենսդրական-ընթացակարգային. Օրենսդրական դաշտի վերլուծությունից և փորձագետների հետ հարցազրույցներից պարզ է դառնում, որ, համեմատած 2003 թվականի իրավիճակի հետ (երբ ձևավորվել է աշխատանքային խումբը), երկրում արձանագրվել է մեծ առաջընթաց: Չնայած դրան, սոցիալական պրակտիկայում դեռևս առկա են մի շարք բացեր, անհամապատասխանություններ և ձգձգվող գործընթացներ:

Մասնավորապես, առկա են որոշ ընթացակարգային դժվարություններ, որոնք կապված են երևույթի դեմ պայքարի նպատակով պետության ֆինանսական հատկացումների՝ պրակտիկ կյանքում տնօրինման մեխանիզմների անկատարության հետ. «...անցյալ տարի պետության կողմից արդեն իսկ նախարարությանը (ի նկատի ունի ԱՍՀՆ) հատկացումներ են տրամադրվել (16 մլն. դրամ⁴⁵), որը, սոցիալական պատվերի գործարկման մեխանիզմների պակասի պատճառով, մնաց չօգտագործված»:

Ինչ վերաբերում է զոհերի ուղղորդման մեխանիզմին*, ասպա փորձագետները բաց են տեսնում՝ կապված զոհերին աջակցություն տրամադրելու ձևերի, չափի և այդ խնդրի օրենսդրական կանոնակարգման հետ: Ի լրումն, ուղղորդման մեխանիզմները, երեխաների առաձնահատկություններով պայմանավորված, որևէ կետ չեն պարունակում:

Մասնավորապես, իբրև ուղղորդման կարգի թերացում, փորձագետները համարել են զոհերի կրած նյութական վնասի փոխհատուցման մեխանիզմների բացակայությունը, ավելին, կարծիք հնչեց, որ գործող ուղղորդման կարգում արտացոլված կետերը «ավելի շատ ուղղված են պատժելու թրաֆիկյորներին, քան աջակցելու զոհերին»⁴⁶:

Չոհի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և ուղղորդման համար Կարգով նախատեսված ժամկետը, նույնացման առաջին փուլում, չի համապատասխանում ԵԽ կոնվենցիային (նախատեսված ժամկետը երեք օր է, մինչդեռ ԵԽ-ի կոնվենցիան ենթադրում է 30 օր⁴⁷):

Անբավարար է համարվել նաև այս ոլորտում պետության կողմից իր օրենքների, ընթացակարգերի իրականացման պահանջն ու դրա հանդեպ վերահսկողությունը:

Փորձագետների մի մասը տպավորություն ուներ, որ մի տեսակ հստակ չէ, թե երեխա զոհերի պաշտպանության կազմակերպումը ո՞ւմ պարտականությունն է և ինչպե՞ս պետք է իրականացվի:

⁴⁵ Ի դեպ, 2010-ի համար հատկացվել է ևս 25 մլն դրամ

* Ի դեպ, ֆոկուս խմբին մասնակցած մասնագետները տեղեկացված չէին այս կարգի մասին:

⁴⁶ Փորձագետներից մեկը օրինակ բերեց զոհերին աջակցելուն ուղղված մի հետաքրքիր պրակտիկա, որը կիրառվում է հարևան Վրաստանում՝ հատուկ ֆոնդ է ստեղծվել այդ նպատակով:

⁴⁷ Ի դեպ, այժմ արդեն փոփոխության վերաբերյալ առաջարկը ներկայացված է

Ծառայությունների և մասնագետների անբավարար ծածկույթ

• ...եթե անգամ ուսուցիչը վերցնի երեխաներին պատրաստելու դերը, նա միայնակ չի կարող այդ ծավալուն գործը գուխ բերել...

• Ծառայության պակասի խնդիր ունենք:

«Կիրարկման մեխանիզմները/կարգերը միշտ չէ, որ առկա են, հստակ և հասկանալի՝ պրակտիկայում կիրառելու համար»: Երեխաների պաշտպանության համակարգում ընդհանրապես և մասնավորապես թրաֆիկինգի գոհերի պաշտպանության ոլորտում դերակատար-կառույցների և մասնագետների շրջանում շփոթություն է տիրում. «Զինվոր ենք առանց զենքի» (*Լոռի, ֆոկուս խումբ*)

- «Խնամակալության հանձնաժողովում ընդգրկված մարդիկ պետք է մասնագիտանան: Դա միակ օղակն է, որտեղ ենթադրվում է, որ խոցելի ընտանիքները (որի երեխան կարող է հայտնվել նման իրավիճակում) նրանց տեսադաշտում են: Երեխաների վատ վիճակի վաղ հայտնաբերման ու վաղ միջամտման ֆունկցիան դրված է մարդկանց բարի կամքի վրա, ոչ թե ամրագրված մանդատով...»: Երևան
- «Ոստիկանը պետք է գործին խառնի միայն այն դեպքում, երբ արդեն երեխայի հետ աշխատել են սոցիալական աշխատողները, հոգեբանները, և այլն: Այս դեպքում երեխան կկարողանա վկայի և չի վախենա իր վկայությունից... դա մարդու անձի հանդեպ է հանցագործություն ավելի քան քրեական: Եթե իրավապահներն են խառնվում, նպատակը գոհին պատժելն է, գոհին ի՞նչ օգուտ դրանից...»: Երևան
- «...եթե գոյություն ունենա երեխայի հետ աշխատանքի չափանիշների որակ և այդ որակը վերահսկելու մեխանիզմներ, կատարվի, որ թրաֆիկինգի համար ռիսկային համարվող մի հանգամանք, որը կապված է հաստատության պայմաններում մեծանալու հարցի հետ, ծնողական խնամքից դուրս, մենք ռիսկը բավականին կնվազեցնենք: Շատ հետազոտություններ ցույց են տալիս, որ հենց հաստատությունների երեխաներն են, որ հետո դառնում են հազար ու մի բանի գոհ...»: Երևան
- «...բացի նրանից որ մասնագետը պետք է ունենա մասնագիտական որակներ և ազատ գործելու հնարավորություն, հստակ էթե մենք ուզում ենք նրա աշխատանքը չափենք, յուրաքանչյուր աշխատանքի համար պետք է լինի հստակ չափորոշիչներ: Մենք պետք է ունենանք գործիքներ: Պետք է ունենանք նաև խրախուսման միջոցներ, ոչ միայն աշխատավարձ: Մեզ միջոցներ են պետք աշխատանքի արդյունավետությունը չափելու համար...»: Երևան

Հայաստանի օրենսդրությունը թրաֆիկինգի առումով թերություններ ունի, մասնավորապես, դրսևորումների սահմանման առումով «... օրինակ հարկադիր աշխատանքը արգելված է, սակայն չկա ոչ մի սահմանում, թե ինչ բան է «հարկադիր աշխատանք», հետևաբար դատավորը կարող է դատարանում հարկադիր աշխատանքին այլ որակավորում տալ ...»: Թեև այդ հարցը կարգավորվում է ԱՄԿ-ի կոնվենցիայով, փորձագետների մեծ մասի կարծիքով, թերի է նաև Հայաստանի դատավորների և դատախազների տեղեկացվածությունը միջազգային այն կոնվենցիաներից, որոնք Հայաստանը վավերացրել է, ինչը լուրջ խոչընդոտ է:

Օրենսդրության հետ կապված, ըստ փորձագետների, մեկ այլ խոչընդոտ է այն հանգամանքը, որ «քրեական օրենսգրքում հողվածները կրկնվում են, նույն արարքի համար տարբեր

պատիժներ են նախատեսվում»: Փորձագետներից մեկի կարծիքով, սահմանված պատժամիջոցները խիստ անհամապատասխան են անչափահասների դեպքում. «...քրեական օրենսգիրքի 141 հոդվածն⁴⁸ ըստ էության ասում է, որ մինչև 16 տարեկանի հանդեպ արարքը պատժվում է տուգանքով ...»:

Բացի այդ, օրենսդրությունը որևէ առանձնահատկություն չի նախատեսում տուժող երեխաների առումով. «Օրենսդիրը ենթադրում է հավասարություն, և էական չէ թրաֆիկինգից տուժողը 50 տարեկան մարդ է, թե 12 տարեկան երեխա, մինչդեռ անչափահաս տուժողի պարագայում նրա քայլերը անկանխատեսելի են: Պատահական չէ, որ, օրինակ, երեխաներին մուրացկանության մեջ ներգրավելու գրեթե բոլոր քրեական գործերով տուժողները ցուցմունքները փոխել են դատարանում», քանի որ վկաների և տուժողների պաշտպանությունն առանձնահատուկ ոչինչ չի նախատեսվում, երբ գործ ունենք երեխաների հետ:

Տուժածների օգնության կազմակերպումը. Ըստ փորձագետներից մեկի, «երկրում բացակայում է թրաֆիկինգի վերաբերյալ օրենքը նման օրենքի առկայության դեպքում «հնարավոր կլինի խուսափել ընթացակարգային, նյութաիրավական և, հատկապես, դատավարական օրենսդրության մեջ առկա բացերից և դատավարության փուլում պաշտպանել գոհին, ինչպես նաև տրամադրել արդյունավետ սոցիալական աջակցություն»:

Տուժածների աջակցության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտում են հետևյալ երկու հիմնական «բացերը»՝ կապված առաջինը. ապաստարանների և երկրորդը՝ վկաների պաշտպանության ինստիտուտի անկատարության հետ:

«Եթե ապաստանի և վկայի պաշտպանության 2 մեխանիզմները գործեն պատշաճ կերպով, կարող ենք ասել, որ դաշտը արդեն կանոնակարգված է: Իհարկե, ժամանակ առ ժամանակ բարելավման կարիք կունենանք, բայց գոնե բոլոր անհրաժեշտ «սյուները» տեղում կլինեն»: Փորձագետ, Երևան

Ապաստանման հարցի կազմակերպումը, ըստ փորձագետների, պետք է լինի «պետականորեն». ներկա պահին դա 2 հասարակական կազմակերպությունների ուժերով է իրականացվում, սակայն ավելի կանոնակարգված դառնալու համար անհրաժեշտ է, որ ապաստանման ծառայությունը լինի պետական, ստանա պետական հովանավորություն և դրանցում աշխատանքի որակը վերահսկվի: Ընդ որում, ցանկալի է, որ այնտեղ օգտագործվի ՀԿ-ների կուտակված փորձը և աշխատեն որակավորում ունեցող մասնագետները:

Երկրորդ բացը վերաբերում է վկաների պաշտպանության ինստիտուտի կայացած չլինելուն: Ընդ որում, ըստ փորձագետի, դա կապված է ոչ թե ֆինանսական, այլ

⁴⁸ Ըստ էության հոդվածը նախատեսում է առանձնահատկություններ՝ կապված սեռահաստիքային և դրա գիտակցման հետ:

մեխանիզմների մշակման գործընթացի դժվարությունների հետ: Իրականությունն այն է, որ երկրում նման իրավիճակում հայտնված երեխաների հետ աշխատող մասնագիտացված ծառայություններ չկան. ներկայիս հատուկ դպրոցները և մանկատները, առկա մարդկային ռեսուրսներով և երեխաների հետ աշխատանքի ընդունված մոտեցումներով, ապաստանման և վկայի պաշտպանության մասնագիտացված ծառայություններ չեն կարող մատուցվել:

Մասնագիտական մոտեցումների խնդիրը. Դատախիրավական դաշտում զոհերի, վկաների հետ աշխատանքում առկա խնդիրներին քաջատեղյակ մի փորձագետ համոզված էր, որ ամբողջ հանրապետությունում դժվար է գտնել մի ծառայություն, ինստիտուտ, որտեղ մասնագետները երեխային դիտարկեն ոչ թե պարզապես թրաֆիկինգի զոհ, այլ օգնեն երեխային հետ պահել, օրինակ, մուրացկանությունից: Երեխային հանցավորի ձեռքից փրկելուց և հանցավորին պատժելուց զատ, անհրաժեշտ է երեխաներին դուրս բերել այնպիսի իրավիճակներից, որոնց խոցելիությունից հանցավորները օգտվում են:

Պրակտիկայում, ոչ ադեկվատ մոտեցման հանգամանքը խանգարում է ինչպես քննության ընթացքի գրագետ և երեխայակենտրոն կազմակերպմանը, այնպես էլ հետագա վերականգնողական աշխատանքներին. «...մեր քննիչները բոլորին նույն աչքով են նայում: Թրաֆիկինգի զոհին նույնացնում են մարմնավաճառի հետ, ըստ այդմ էլ վերաբերմունք ցուցաբերում, որովհետև մեր օրենսդրությունը թույլ չի տալիս հոգեբաններին և սոցիալական աշխատողներին արդյունավետ ներառվելու քննչական գործընթացում: Սա նշանակում է, որ քննիչներին անհրաժեշտ է պատրաստել այնպես, որ նրանք ունենան նաև այդ գիտելիքները» (*փորձագետ, Երևան*): Այս տեսակետը լրացնում է մեկ այլ փորձագետ.«... զոհի հանդեպ, ընդհանրապես, մարդու հանդեպ, չկա մարդկային վերաբերմունք...»:

«Խնդիրը հենց նրանում է, որ մեր պետական ապարատը պատրաստ չէ ընդունել այն, որ շատ առանձնահատուկ և ճկուն ծառայություններ են պետք այդպիսի երեխաներին, սա կարող է իրականացնել միայն քաղաքացիական հասարակությունը՝ մասնագիտացված մոտեցում ցուցաբերելով նման բարդ իրավիճակում հայտնված երեխաներին: Ըստ փորձագետներից մեկի, երկրում դեռևս չի ճանաչվել թրաֆիկինգի ու, ընդհանրապես, շահագործված երեխաների առանձնահատուկ կարիքներին համապատասխանեցված վերականգնողական ծառայություն ունենալու անհրաժեշտությունը: Ֆոկուս խմբի մասնակից. «Ես ուստիկանությանը չեմ դիմի, որովհետև այդտեղ երեխան չի ուղղվում, անգամ եթե վերցնում են հաշվառման», կամ. «...համայնքում չկան այն մասնագետները, ում կարելի է դիմել նման բարդ իրավիճակներում: Իրականությունն այնպիսին է, որ չափից ավելի մեծ է ուստիկանի կողմից սպասարկվող անչափահասների թիվը, նրանք ի վիճակի չեն այդ դեպքերը միայնակ հայտնաբերելու: Եթե ունենանք համայնքային սոց. աշխատող, նա կօգնի ուստիկանին շուտ հայտնաբերելու

ռիսկային դեպքերը»: Կար նաև հակառակ կարծիքը. եթե անգամ ծառայություններ լինեն, գոհի, նրա ընտանիքի հոգեբանական վիճակը, ըստ մասնագետների, կստիպի նրան փախչել իրականությունից. «...Ունեցել ենք դեպք, երբ երեխան այդ ամենից հետո ստիպված է եղել տեղափոխվել բնակավայրից: Շատ դժվար է գոհերին համոզել, որ գնան մասնագետի մոտ, նրանք գերադասում են չխոսել դրա մասին, որ ուրիշները չիմանան»:

Հանցագործության բարդությունն ու օրենքների միանշանակ չլինելը տարըմբռնումների առիթ է դառնում. պրակտիկայում ընդունված է եղել, որ մուրացկանության մղելու ու նմանատիպ բազմաթիվ այլ դրսևորումներ դիտարկվեն այլ կերպ և սովոր պրակտիկայից նոր մոտեցումների անցումը երկար ընթացք և մեծ ջանքեր է պահանջում՝ «ամենադժվարը մոտեցման, ընկալման փոփոխությունն է»(փորձագետ, Երևան):

Այսպիսով, այս հարցում տարբեր մասնագետների, այդ թվում՝ դատավորների սուբյեկտիվ ընկալման խնդիրը, մասնագիտական կարողությունների ներկա մակարդակը լուրջ խոչընդոտներ են: Մասնագետները կարիք ունեն վերազինվելու երեխայակենտրոն գիտելիքներով:

Մեխանիզմների անկատարության խնդիրը. Ըստ որոշ փորձագետների, երբ ծնողները իրենք են վնասում, շահագործում երեխաներին, ապա «մենք, որպես համակարգ, գրեթե ոչինչ չենք կարողանում անել», թեև համաձայն ՀՀ Ընտանեկան օրենսգիրքի 52-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի՝ երեխան ունի իր ծնողների (օրինական ներկայացուցիչների) չարաշահումներից պաշտպանվելու իրավունք:

«Օրենքները թղթի վրա կան, համակարգը հրաշալի է թղթի վրա, բայց կիրարկման մեխանիզմները բացակայում են: Ի՞նչ պետք է անի խնամակալության մարմինը իր «խեղճ ու կրակ բյուջեով» ԽՀ-ի ներկայացուցիչ

ԵԻՊԲ կանոնադրության մեջ չկա տուն այցեր կատարելը՝ կանխելու բռնությունները և երեխային վնասող այլ գործողությունները: Փաստացի, մնացորդային ֆունկցիաներն են մեզ տվել: ԵԻՊԲ-ի ներկայացուցիչ

Մասնավորապես, երեխաների տեղափոխումը մի երկրից մյուսը իրականացվում է ծնողների կամ նրանցից մեկի ուղեկցությամբ կամ նրանց համաձայնության առկայության դեպքում՝ երրորդ անձանց կողմից, բայց ինչպես խնամակալության հանձնաժողովի ներկայացուցիչն է տարակուսում. «Մենք որոշում ենք կայացնում, որ երեխային կարող են տեղափոխել, իսկ թե ծնողը տանելուց հետո ինչպե՞ս վարվեց երեխայի հետ, հատկապես երբ մայրերը Թուքիա են տանում, անորոշ է»: Այսպիսով, երեխաների՝ երկրից երկիր տեղափոխվելու դեպքում կարիք կա լրամշակել երեխայի անվտանգությունը երաշխավորելու մեխանիզմը:

Խնդիր է նաև այն հանգամանքը, որ երեխայի թրաֆիքինգի/շահագործման դեպքում հարցաքննությունը տեղի է ունենում ծնողի համաձայնությամբ, անգամ այն դեպքում, երբ ծնողը ինքն է ներգրավված այդ գործընթացում. «...ամեն դեպքում ծնողն է որոշում, այսինքն ստացվում է, որ ծնողի որոշումից է կախված՝ մենք որպես սիստեմ կարողանում ենք երեխային պաշտպանել, թե ոչ...» (*փորձագետ, Երևան*):

«Դիմելու» մշակույթի պակասը. Ըստ ֆոկլուս խմբերին մասնակցած մասնագետների, լուրջ խոչընդոտ է նաև «կոռուպցիոն ռիսկերի բարձր լինելը: Ոչ ոք (նկատի ունի գոհերին) չի դիմում իրավապահ մարմիններին, որովհետև կա համոզմունք, որ ոչինչ չի փոխվի. հանցագործները կարող են կապված լինել ոստիկանության հետ, կամ ոստիկանությանը դիմելու համար նրանք կարող են պատժել, դրա համար էլ վախենում են դիմել», *Լոռի, ֆոկլուս խումբ*:

Իրավապահ մարմիններին չվստահելու հանգամանքը փորձագետներից ոմանք բացատրում էին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով, որոնք, իբրև ժառանգություն, փոխանցվել են դեռ խորհրդային ժամանակներից: «...մարդիկ հակված չեն վստահելու իրավապահ մարմիններին, հետևաբար չեն աջակցում գործընթացին...հասարակությունը ինքը եթե չի վստահում, ապա չի էլ համագործակցում... »:

Հոգեբանական խնդիրներ. Մեկ այլ ֆոկլուս խմբի մասնակիցների և որոշ փորձագետների կարծիքով, դեպքերի բացահայտմանը խանգարում է նաև այն հանգամանքը, որ գոհի պատկերացմամբ, «լավն» ու «վատը» թրաֆիկյորների մեջ նույնպես կա. «երբեմն անգամ պաշտպանում են նրանց, չեն գիտակցում տված վնասը կամ շահագործված լինելու փաստը և ստացվում է, որ գոհը բողոք չունի...» (*փորձագետ, Երևան*):

Արժեքային-հասարակական. Ըստ որոշ փորձագետների, ընդհանուր բարոյական մթնոլորտի առողջացման, արժեքային համակարգում ցանկալի դրական տեղաշարժերի խնդիր կա, որը երեխաների համար միջավայրը կդարձնի ավելի ապահով, կա նաև հակառակ կարծիքը, ընդ որում, շատ ավելի կտրուկ, համարելով, որ պայքարի արդյունավետ ձևը իրազեկումն է, կիրառվող պատիժների խստացումն ու դրանց հրապարակումը: **Իրազեկումը**, թեև կարևոր միջոց է համարվել, այնուամենայնիվ հնչեց մտահոգություն, որ. «Չնայած հեռուստատեսությունն ամենալավ միջոցն է խնդրի մասին իրազեկելու համար, այնուամենայնիվ, այդ թեման սերիալների մրցակցությանը չի դիմանա...»

• «Եթե ունենանք հավատք, կօգնի հասարակությանը զերծ մնալ նման իրավիճակներից». *փորձագետ*

• «... ուժերը պետք է կենտրոնացնել ոչ թե բարքերի լավացման վրա, այլ պատժամիջոցների և օրենքների խստացման, ինչպես նաև ճիշտ և գրագետ իրազեկման վրա, ... որովհետև թրաֆիկյորը

բարոյախոսությամբ չէ, որ ոգևորում է...»: *փորձագետ*

- «Մեր ազգը ավելի շատ սովորում է կոպիտ, կտրուկ վերաբերմունքից...» *փորձագետ*

Պետք է նկատի ունենալ, որ «թրաֆիկյորները շատ հմուտ են, և, բնականաբար, մոդիֆիկացնում են բոլոր առաջարկները», ուստի պայքարի ձևերն էլ մի տեսակ մշտական մրցավազքի մեջ պետք է լինեն այդ ձևերի հետ, «...կիսագրագետ մարդը չի կարող թրաֆիկյոր լինել, դրա համար հմտություններ են անհրաժեշտ..., դա ինտելեկտուալ աշխատանք է..., մինչդեռ կիսագրագետ մարդը կարող է դառնալ գոհ»:

Պայքարն այս ոլորտում նշանակում է այնպիսի միջոցների գործադրում, որոնք թույլ կտան ի սկզբանե անհավասար պայմաններում գտնվող կողմերի միջև որոշակի հավասարակշռություն ստեղծել. «խաբելու, մոլորեցնելու հմտություններ ունեցող մարդու հնարքներին դիմակայելու համար, անձը պետք է ի վիճակի լինի տիրապետելու նվազագույն պաշտպանության միջոցների»:

Դատելով հետազոտության տվյալներից՝ կարելի է եզրակացնել, որ այդ անհավասար մարտում իրազեկումն ու ուսուցանումը կարևոր գործընթացներ են, սակայն «ռիսկը միշտ կմնա բարձր, եթե անգամ իրազեկված լինելու դեպքում մարդը չունենա «ոչ» ասելու կարողություն, կամ այնպիսի անելանելի վիճակում է, որ անգամ նվաստացուցիչ պայմաններով առաջարկը կարող է ընդունել՝ իբրև «գրավիչ», և, վերջապես, բոլոր այն դեպքերում, երբ ցածր ինքնագնահատական ունի: «Երեխայի ինքնագնահատականն է պետք բարձրացնել, եթե նա անգամ իրազեկ է, բայց ինքնագնահատականը՝ ցածր, ապա պոտենցյալ գոհ կարող է դառնալ» (*փորձագետ*):

Թրաֆիկինգի ընկալման տարբերումները և «լողացող» պատկերացումները... «...կարող են տեղիք տալ ոչ հստակ տեղեկատվության տարածմանը»: Ըստ փորձագետների մեծամասնության, բացի երևույթի արմատական պատճառների (աղքատություն, միգրացիա, սովորույթներ և այլն) հետ պայքարից, «մասնագիտական լուրջ մեթոդներ են անհրաժեշտ երեխային թե՛ իրազեկելու, և թե՛ նման երևույթներից նրան պաշտպանելու համար: Սահմանափակվել իրազեկվածությամբ, կնշանակի ինքնախաբեություն...»:

Ծառայությունների պակասը և անհամապատասխանությունը

Դատելով որակական մեթոդների միջոցով ստացված տեղեկատվությունից, Հայաստանում, գոհերի և վկաների հետ աշխատանքում, առկա են լուրջ խոչընդոտներ. «հանրապետությունում դժվար է գտնել մի ծառայություն, ինստիտուտ, որտեղ մասնագետները «ի վիճակի լինեն երեխային դիտարկելու ոչ թե, պարզապես, որպես թրաֆիկինգի գոհի, այլ

խնդիրը համարեն՝ երեխային մուրացկանությունից ետ պահելը: Երեխան արդեն եղել է մուրացիկ, ինչից հանցավորն օգտվել է: Այսպիսով, զոհի հետ աշխատանքը ոչ միայն նրան փրկելն է հանցավորի ձեռքից, առավել ևս, ոչ այնքան հանցավորին պատժելն է, որքան երեխաներին դուրս բերելը այնպիսի իրավիճակներից (մուրացկանություն, անխնամություն, թափառաշրջիկություն, դժվար կառավարվող վարք, անկայուն կենսաձև և այլն), որի խոցելիությունից հանցավորները ճարպկորեն օգտվում են:

Դա նշանակում է առկա ծառայությունների մասնագիտացում: Առնվազն անհասկանալի է ընդհանուր նշանակության բազմաթիվ հասատությունների առկայությունը Հայաստանում, որոնցից ոչ մեկը նման կարողություն չունի, թեև ստեղծված են կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաների հետ աշխատելու առաքելությամբ:

Երեխա զոհի համար հատուկ մասնագիտացված ապաստարան ունենալը, որտեղ երեխա զոհը կհանդիպի միայն մասնագետների և իր պաշտպանի հետ և չի անհանգստանա իր անվտանգության համար, շատ կարևոր է: Այն կօգնի նաև գործի քննության ընթացքը երեխայակենտրոն կերպով վարելուն: Այլապես, «մեղադրյալը կամ նրա պաշտպանը ճնշում են գործադրում զոհի՝ ի դեմս երեխայի կամ նրա ծնողի վրա, կամ կաշառում են, այդպիսով՝ ստիպում նրանց հրաժարվել ցուցմունքից, կամ փոխել այն» (փորձագետ):

Օրենսդրական-ընթացակարգային. ՀՀ ազգային օրենսդրությունը հիմնականում համապատասխանում է միջազգային ակտերին, բայց կան որոշակի **բացթողումներ**, ինչպիսիք են, օրինակ,

- ստրկության հասկացության օրենսդրական սահմանման բացակայությունը,
- անօրինական որդեգրման համար քրեական պատասխանատվության բացակայությունը,
- քրեական դատավարության մասնակիցների համար (տուժող, վկա և այլն) պաշտպանության միջոցների կիրառման մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև քննության և դատավարության գործընթացում երեխային ուղեկցող մանկավարժի կամ խնամակալության մարմնի ներկայացուցչի կողմից իրենց դերի կատարման համար անհրաժեշտ կարողությունների պակասը

ՀՀ-ում առկա է թրաֆիքինգի ենթարկված անձանց օգնելու իրավական բազան, սակայն այդ օգնությունը տրամադրելու բոլոր անհրաժեշտ մեխանիզմները դեռևս պետք է մշակվեն, մասնավորապես.

- Ուղղորդման Կարգի 15-րդ կետում նշված է, որ զոհն ուղղորդվում է միայն իր համաձայնությամբ՝ հայտնաբերման պահից: Այստեղ չկա նշված համաձայնության ձևը՝ պետք է լինի գրավոր, թե՞ բանավոր, իսկ դա ունի գործնական մեծ

նշանակություն, մասնավորապես, այն դեպքերում, երբ գոհը փոխում է իր մտադրությունը համագործակցելու վերաբերյալ (այս հանգամանքը դժվարություններ կարող է առաջացնել):

- Համաձայն կարգի, եթե թրաֆիքինգի գոհը ենթարկվել է դաժան վերաբերմունքի կամ բռնության, ապա սոցիալական աջակցության փաթեթը կկիրառվի այդ անձի նկատմամբ, իսկ եթե թրաֆիքինգի գոհը բռնության չի ենթարկվել, այլ ենթարկվել է շահագործման՝ վիճակի խոցելիությունը օգտագործելով կամ խաբեությամբ, ապա այս պարագայում նա չի կարող օգտվել սոցիալական աջակցության փաթեթից, ինչն անթույլատրելի է:
- Ինչ վերաբերվում է թրաֆիքինգի գոհ երեխաներին, ապա Կարգը մատնանշում է ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխայի իրավունքների պաշտպանության բաժիններին, որոնց աշխատակիցները հանդիսանում են քաղաքացիական ծառայողներ, ուստի պետք է համապատասխան փոփոխություններ իրականացվեն նրանց գործառույթները սահմանող փաստաթղթերում:
- Կարգի 30-րդ կետի համաձայն վերջնական աջակցությունն իրականացվում է 2005թ.-ի հոկտեմբերի 24-ի ”Սոցիալական աջակցության մասին” ՀՀ օրենքով⁴⁹ : Այդ օրենքը երեխաների հարցերին անդրադառնում է ընդամենը մի քանի հոդվածներում, այն էլ մակերեսորեն: Մինչդեռ կարիք կա, որ երեխաների վերականգնողական օգնությունը իրականացվի հոգեբանի, մանկավարժի և դաստիարակի մասնակցությամբ, խնամքի կազմակերպման կարգը մանրամասն նշվի, երեխաների խորհրդատվական և իրավաբանական օգնությունը իրականացվի երեխաների համար հասկանալի ձևով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ներառվի փաստաթղթերի կազմումը, ձևակերպումը և այլն:
- Բաց է նաև այն հանգամանքը, որ ուղղորդման կարգի մեջ նշված չէ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, որպես երեխաների դեպքում կարևոր դերակատար:
- Ինչ վերաբերում է **որդեգրմանը**, ապա համաձայն Երեխայի որդեգրման կարգի 27-րդ կետի՝ “Եթե որդեգրման ենթակա միևնույն երեխայի կապակցությամբ ցանկություն են հայտնել մեկից ավելի որդեգրողի թեկնածուներ, ապա երեխայի հետ նրանցից առաջինի հանդիպումը կազմակերպվում է ըստ նրանց կենտրոնացված հաշվառման հերթականության: Մյուս որդեգրողի թեկնածուների հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե առաջին որդեգրողի թեկնածուն 15 օրվա ընթացքում ցանկություն չի հայտնում տվյալ երեխային որդեգրելու մասին”: Իսկ նույն կարգի 27.1-րդ կետի համաձայն՝ “Եթե ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրողի

⁴⁹ Ուժի մեջ է մտել 2006թ.-ի հունվարի 1-ից:

թեկնածուն և օտարերկրյա քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն որդեգրման ենթակա միևնույն երեխային որդեգրելու ցանկությամբ դիմել են նույն օրը, ապա երեխայի հետ հանդիպման առաջնահերթությունը տրվում է ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուին: Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուի հետ երեխայի հանդիպումը կազմակերպվում է այն դեպքում, եթե ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրողի թեկնածուն 15 օրվա ընթացքում տվյալ երեխային որդեգրելու ցանկություն չի հայտնել”: Այսինքն, այստեղ առաջին դեպքում նախապատվությունը տրվում է որդեգրողների շահերին, իսկ երկրորդ դեպքում՝ պետության: Չնայած դրան, Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի “բ” կետի համաձայն, օտարերկրյա որդեգրումը կատարվում է միայն այն դեպքում, “եթե ծագման Պետության իրավասու մարմինները ծագման Պետությունում երեխայի տեղավորման հնարավորությունների պատշաճ քննարկումից հետո որոշել են, որ օտարերկրյա որդեգրումը բխում է երեխայի լավագույն շահերից” և կախված չէ “ուշ կամ շուտ գրանցվելուց”:

Ի լրումն վերոգրյալի, արժե նշել, որ որդեգրող ծնողների թեկնածուների ընտրության չափորոշիչները չեն համապատասխանում միջազգային առաջավոր պրակտիկային, որդեգրվող ծնողները չեն ուսուցանվում, հետագա մոնիթորինգ չեն անցնում, հատուկ մասնագիտական աջակցություն չեն ստանում: Որդեգրության գաղտնիության պահպանման գործող սկզբունքը վերանայման կարիք ունի՝ ելնելով երեխայի լավագույն շահի գերակայությունից:

Այսպիսով, որակական մեթոդների միջոցով ստացված տեղեկատվությունը ցույց է տալիս, որ

- Մասնագետները քաջատեղյակ են շահագործման տարաբնույթ տեսակներին, սակայն, ինչպես իրենք են փաստում, դժվարանում են զանազանել կոնկրետ թրաֆիքինգի դեպքերը:

- Թե՛ մասնագետները, թե՛ երեխաները նշում են մի շարք ռիսկային գործոններ, որոնք կարող են հանգեցնել թրաֆիքինգի երևույթի տարածմանը. մասնավորապես, երեխաների հանդեպ շահագործման դեպքերի բացահայտման դժվարությունները, դրա համար պատասխանատու օղակի բացակայությունը, այդ հարցում գործող ծառայությունների մասնագետների ցածր պատասխանատվությունը: Լրացուցիչ գործոններ են համարվել՝

1. աղքատությունը, ճարահատյալ գործազրկությունը
2. կարգերի/կանոնակարգերի անհամապատասխանությունը
3. գվարճանքի, ժամանցի վայրերի հանդեպ վերահսկողության պակասը
4. որդեգրության կարգի բացերը

5. աղանդների հետ կապված խնդիրները
6. թույլերին «նեղելու» արմատացած մշակույթը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Հետազոտության մեջ կիրառված մոտեցումը նպատակ ուներ պարզելու, թե որքանով են երեխաները իրազեկ թրաֆիքինգի երևույթին, ինչպե՞ս են երեխաների տարբեր խմբերը ընկալում և ճանաչում իրենց շրջապատող ռիսկերն ու վտանգները և հակազդման ինչպիսի՞ մեխանիզմների են տիրապետում, որոնք կարող են ազդել տարբեր ռիսկային իրավիճակների, ներառյալ թրաֆիքինգի հանդեպ նրանց խոցելիության/կայունության վրա:

Փորձագետներից և երեխաներից ստացված տեղեկատվությունը պարզորոշ վկայում է, որ երեխաների աշխատանքային, սեռական շահագործման տարբեր դրսևորումներ ի հայտ են գալիս մեր իրականության մեջ: Դժվար է միանշանակ պնդել, որ հետազոտության մեջ վկայակոչված դեպքերը վկայում են երեխաների թրաֆիքինգի մասին, քանի որ ներկայացնում են երեխաների և մասնագետների սուբյեկտիվ տպավորություններն ու պատկերացումները:

Այնուամենայնիվ, հետազոտությունը արձանագրեց, որ երեխաները մեր իրականության մեջ կարող են ներքաշվել շահագործման այնպիսի տարաբնույթ ձևերի մեջ, երբ նրանց ստիպում են աշխատել՝ բռնագրավելով վաստակածը, երբ երեխան կարող է աշխատել անընդունելի պայմաններում՝ կտրվելով կրթությունից, հիմնարար այլ պահանջմունքներից՝ կեղծ խոստումների, բռնության ամենատարբեր մեթոդների կիրառմամբ: Ներկայացված իրավիճակները ակնհայտ պարունակում են հարկադրանքի տարրեր, թեև միշտ չէ, որ երեխաների հարկադրական աշխատանքի դրսևորումները ֆիզիկական ճնշման հետևանք են, այլ ավելի շատ՝ ծնողների ունեցած պարտքերի, նրանց անճարակության կամ ծնողի դերին ոչ ադեկվատ պահվածքի հետևանքով երեխաներին պարտադրված իրականության պայմաններում գոյատևելու մեխանիզմ:

Երեխաների աշխատանքի նկարագրված դեպքերում խոսքը գնում է, լավագույն դեպքում, ծնողի հետ բանավոր պայմանավորվածության, ոչ երբեք՝ գրավոր պայմանագրի մասին: Որոշ դեպքերում ակնհայտ է անցումը շահագործումից՝ հարկադրանքի: Մեծ մասամբ օրինակները վերաբերում են խոցելիությունից օգտվելու, այսպես կոչված, «սահմանային

դեպքերին»: Երեխաները ներքաշվում են նման իրավիճակների մեջ իրենց մոտ մարդկանց, ոչ հազվագյուտ դեպքերում, նաև՝ ծնողների կողմից կամ նրանց իմացությամբ:

Խնդիրը խաչվում է, այսպիսով, երեխայի իրավունքի, ընտանեկան արժեքների, ծնողների իրավունքների և հասարակական ընկալումների հետ: Նման դեպքերի բացահայտումը խիստ բարդացած է ոչ այնքան տեղեկությունների պակասի, որքան դրանց տիրապետելու պարագայում «կիրառման սահմանափակությամբ», «իմաստի պակասով»: Երբ խոսքը վերաբերում է ծնողների կամ խնամողների, այդ թվում՝ հաստատության աշխատակցի կողմից չարաշահումներին և երեխայի «սեփական ընտրությանը», վերը նշված արժեքների բախումից ծնվում է անելանելություն ինչպես երեխայի համար, այնպես էլ, հետագոտության տվյալներով, մասնագետների ու ամբողջ համակարգի համար: Երեխայի աշխատանքի հիմնական դրդապատճառը սեփական և ընտանիքի սովի հաղթահարումն է. երեխաների մեծ մասը չի ընկրկում աշխատանքի վատագույն պայմաններն անգամ ընտրելիս, այդպիսով վտանգելով իր իրավունքների իրացումը: Նման հախուռն, անկանոն գործընթացներից երեխաներին կարող է հետ պահել միայն ընտանիքների խնդիրների համակարգային լուծումը՝ ծնողների զբաղվածության, սոցիալական ապահովության նվազագույն երաշխիքների, երեխայի իրավունքների պաշտպանությանը կոչված ծառայությունների/կառույցների զգայնության ապահովման պայմաններում: Սակայն նշված գործընթացները օբյեկտիվորեն պահանջում են ընթացք և տևողություն, մինչդեռ երեխաները մշտապես գտնվում են վերը նշված խոցելիության գործոնների ազդեցության տակ: Ուստի երեխաների պաշտպանության կազմակերպման հարցերը պահանջում են լուծումներ «այստեղ և հիմա»՝ ռազմավարական հեռահար բնույթի գործելակերպին գուգահեռ:

Այս խնդիրը բավականաչափ բարդ է, քանի որ իրենք՝ երեխաները հազիվ թե իրենց կամքով դիմեն՝ ստանալու օգնություն, ինչպես փաստում են քանակական հետազոտության տվյալները: Ըստ էության, երեխաների պաշտպանության գործող համակարգում էական, գործնական մեխանիզմներ դեռևս չեն գտնվել՝ զսպելու համար՝ երեխաների աշխատանքային և այլ տիպի շահագործումների դաշտ հախուռն ներգրավելու գործընթացները: Այդ մեխանիզմները չեն կարող սահմանափակվել իրազեկմանն ուղղված պարզ աշխատանքներով: Գկունությունը զարգացնող նպատակաուղղված գործունեությունը, ընդհանուր առմամբ բոլոր երեխաների համար, և վերականգնողական ծառայությունների հիմնումը շահագործման և թրաֆիկինգի տեսանկյունից առավել խոցելի համարվող խմբերի համար՝ օրենսդրական, ընթացակարգային անհրաժեշտ բարելավումների համատեքստում, այն հիմնական ուղիներն են, որոնք թույլ կտան էականորեն նվազեցնել երեխաների խոցելիությունը: Այսպիսով, երեխաների պաշտպանությունը թրաֆիկինգից հուսալի կարող է լինել միայն այն դեպքում, եթե ջանքերը ուղղվում են երեխայի ճկունության գործոնների

ակտիվացմանը՝ նրա սոցիալական հմտությունների զարգացման միջոցով. խնդիր, որը մասնագիտական շնորհք, գիտելիք և հմտություն է պահանջում:

Ինչպես պարզվեց հետազոտությունից, ոչ թե առանձին վերցրած մեկ, այլ փոխկապակցված գործոնների մի ամբողջ շարք է ազդում երեխաների խոցելիության վրա: Մակրո մակարդակում ռիսկերի և կայունության գործոնների երեխաների ընկալումները, միջանձնային և անձնային մակարդակում նրանց համար հասանելի սոցիալական օգնությունը, վերջապես, ապահովության ու վտանգների նրանց հայտնի գործոնները, միացյալ կերպով ազդում են որոշումների ընդունման գործընթացների վրա: Ըստ էության, երեխաների կայունությունն ու ճկունությունը զարգացնելու հնարավորությունները վերաբերում են գործոնների նշված «խաչմերուկին»:

Մի շարք հարակից փաստաթղթերի վերլուծությունը ցույց տվեց, որ սոցիալ-մշակութային նորմերով պայմանավորված, աղջիկ երեխաները ավելի մեծ ռիսկի տակ են գտնվում՝ հայտնվելու չարաշահման, սեռական շահագործման տարբեր իրավիճակներում (պահանջարկի գործոնը, «դուրս մղող» գործոնների առկայությունը), սակայն այս հետազոտությունը ցույց տվեց, որ գոյություն ունի նաև ռիսկ տղաների համար՝ կապված ընտանիքներին օգնելու իրենց դերի ընկալման հետ:

Երեխաների պատասխանները ցույց տվեցին իրականության ընկալման նրանց սեփական տեսանկյան գոյությունը և ըստ էության, ցանկությունը՝ նրանց ուժեղացնելու և ճկուն դարձնելու անհնար կլինի իրագործել, առանց «դասեր քաղելու» այդ տեսանկյունների ուսումնասիրությունից:

Թրաֆիքինգի երևույթի վերաբերյալ հարակից նյութերը տարբերակում են երեխաների կոնկրետ խմբեր, որոնք ավելի շատ են ռիսկի տակ գտնվում, քան մնացածները՝ պայմանավորված տնտեսական և հասարակական կյանքի փոփոխված գործոններով: Այս հետազոտությունը փաստեց, որ ըստ էության, իրենց հույսերի և երազանքների իրագործման համար երեխաների ընտրությունը ավելի շատ կանգ է առնում ոչ թե տեղում (համայնքում, երկրում) հնարավորությունների որոնման (համեմատաբար ավելի վերահսկելի), այլ ռիսկերի կառավարման տեսանկյունից ավելի բարդ՝ դրսում ուսանելու և աշխատելու տարբերակի վրա (ռոմանտիկ մոտեցում): Այս հանգամանքը երեխաների տարիքի համար բնական լինելով հանդերձ, հուշում է նրանց հետ աշխատանքների կազմակերպման մեջ այս կարևոր գործոնը հաշվի առնելու անհրաժեշտության մասին:

Համարվում է, որ աղքատությունը երեխաներին կանգնեցնում է թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկի տակ, սակայն, աղքատության վերաբերյալ երեխաների ընկալումը և դրան հակազդելը առանձնահատուկ է, ինչպես ցույց տվեց հետազոտությունը: Դատելով

երեխաների վկայություններից, աղքատությանը հակազդելու հարցում ծնողների, խնամողների վարքը կարող է լինել ինչպես «բուֆեր», այնպես էլ «կատալիզատոր»:

Ընտանիքը, հասակակիցները, միջավայրը երեխաների սոցիալական կապիտալի կարևոր բաղադրիչներն են և կարող են համարվել նրանց ճկունության զարգացման, իրազեկման համար կայուն, հուսալի աղբյուրներ: Պատկերը, սակայն, կարող է տարբերվել հատկապես հաստատության երեխաների պարագայում. այդ հարաբերությունները կարող են լինել պոտենցյալ ռիսկային, եթե ընտանիքի հետ հարաբերությունները երեխային չեն օգնում՝ հարաբերությունների անկայուն, հատվածային բնույթով պայմանավորված: Միևնույն ժամանակ, երեխաների մեծ մասը ընտանիքի համար պատրաստ է աշխատել ցանկացած պայմաններում, փաստաթղթերի ձևակերպումը պատրաստ է վստահել ծնողներին՝ անգամ առանց կայուն կապ ունենալու նրանց հետ: Գրեթե նույնպիսի պատրաստակամությամբ նրանք կարող են «երրորդ մարդուն» վստահել անձնագիրն ու այլ փաստաթղթերը, ինչպես փաստում են քանակական հետազոտության տվյալները: Միանգամայն բնական համարելով, որ անկախ իրենց ծնողների հետ ունեցած փոխհարաբերությունների որակից, երեխաները որոշումների կայացման մեջ ծնողներին մեծ կարևորություն են տալիս, անհրաժեշտ նրբանկատություն է պետք ցուցաբերել երեխաների հետ աշխատանքների կազմակերպման գործընթացներում այս ռիսկային գործոնի հանդեպ, շեշտադրելով օգնող փոխհարաբերությունների, ոչ թե զուտ արյունակցական կապերի կարևորությունը:

Ինչ վերաբերվում է երեխայի անհատական բնութագրիչներին, հարակից նյութերը մատնանշում են սեռը, տարիքը և կրթությունը՝ որպես ռիսկի և ճկունության կարևոր գործոններ, ընդ որում, կրթությունը դիտվում է միմիայն որպես ճկունություն ապահովող գործոն: Հետազոտությունը ցույց տվեց, որ իրենց հույսերի և երազանքների իրականացման վերաբերյալ երեխաների՝ որոշումներում կրթությունը հավասարապես կարող է հանդես գալ ինչպես ռիսկի, այնպես էլ ճկունության գործոն, կախված իրավիճակից, թեև իրազեկվածության մակարդակի հետ կապը ուղիղ համեմատական է:

Հետազոտությունը փաստեց, որ երեխաների խոցելիության վրա անբարենպաստ կերպով են ազդում մակրոմակարդակի այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են զվարճանքի վայրերի, գիշերային ակումբների գործունեության հանդեպ լոյալությունը՝ անչափահասների ազատ ելք ու մուտքի տեսանկյունից: Ըստ էության մշակված չէ նման հաստատությունների գործունեությունը երեխաների համար նվազ ռիսկային դարձնելու մոնիթորինգի համապատասխան սխեմա և դեռևս կարևորված չէ այդպիսին ունենալու անհրաժեշտությունը:

Երկրների միջև տեղափոխվող, այդ թվում՝ որդեգրվող երեխաների տվյալները վերահսկելու մեխանիզմները նույնպես ունեն լուրջ բացթողումներ, որոնք ազդում են երեխաների

խոցելիության վրա: Հատկապես վիզայի ազատ ռեժիմի կիրառման պարագայում, ինչպես Ռուսաստանի դեպքում է, երեխաները ավելի շատ են վտանգված: Մասնավորապես, աշխատանքային միգրացիայի վերաբերյալ հարակից հետազոտությունները ցույց են տալիս, որ անչափահաս անդամների հետ տեղափոխվող աշխատանքային անօրինական միգրանտների ձախողման կամ կենսապահովման դժվարությունների մեջ հատնվելու պարագայում լրացուցիչ խոցելիություն է առաջանում անչափահասների համար⁵⁰:

Հետազոտությունը և այլ հարակից փաստաթղթեր փաստում են երեխաների՝ հաստատության պայմաններում խնամվելը որպես լրացուցիչ խոցելիության գործոն լինելը՝ թրաֆիկինգի ու շահագործման տեսանկյունից: Ըստ էության մի կարևոր ռեսուրս՝ այլընտրանքային ընտանեկան խնամքի տարբերակը Հայաստանում պրակտիկայում գրեթե չի կիրառվում, թեև օրենսդրությամբ ամրագրված է: Այդ ռեսուրսը կիրառվում է ոչ լիարժեք ձևով: Բացի այն, որ կյանքի դժվարին պայմաններում հայտնվելու պարագայում կենսաբանական ընտանիքներին տրամադրվող նյութական և այլ տիպի աջակցության փաթեթը էական չափեր և ծավալներ չունի, ի լրումն, այլընտրանքային, մասնավորապես խնամակալ և որդեգրող ընտանիքները նույնպես դուրս են աջակցությունից, իսկ խնամատար ընտանիքի տարբերակը կիրառվում է նվազագույն չափերով: Չնայած որ գրեթե բոլոր մակարդակներում համաձայնություն կա այն հարցում, որ հաստատությունները երեխաների համար լավագույն տեղը չեն, այնուամենայնիվ, այլընտրանքների հսկայական ռեսուրսը Հայաստանում չի կիրառվում: Այսպիսով, հաստատության պայմաններում երեխաների մեծանալու գործոնի խոցելիությունը շեշտակի կնվազի, եթե երկրում ակտիվացվեն այլընտրանքային տարբերակները և վերանայվեն հաստատության ներսում երեխաների հետ աշխատանքների կազմակերպման ձևերն ու բովանդակությունը:

Մակրո մակարդակի քաղաքականության մյուս բացը, որը նույնպես ազդում է երեխաների խոցելիության վրա, ապաստանների և սոցիալական տների սոցիալական տեխնոլոգիաների ներմուծման ձգձգումն է. բանը նրանումն է, որ գնալով մեծանում է անչափահաս երեխաներ ունեցող անապաստան ընտանիքների թիվը, ինչը պոտենցյալ մեծ ռիսկ է պարունակում:

Երեխաների/ընտանիքների առնչությամբ վարվող ոչ այնքան երեխայակենտրոն քաղաքականության համատեքստում, հանցագործությունների «ռեկետ» տարբերակի սովոր պրակտիկան, այդ թվում երեխաների շրջանում «հարկահավաքություն» տարբերակի լատենտ ու բավականին տարածված երևույթը մի տեսակ ձևավորել է կազմակերպված «քառս»: Առաջին հայացքից միայն մեծերին վերաբերող այնպիսի գործոններ, ինչպիսին

⁵⁰ ՀՕՖ-ի երեխաների կենտրոնի 2009 թ. տվյալներով, Ռուսաստան մեկնած աշխատանքային միգրանտների 14 երեխաներ Ռուսաստանի ընդունիչ բաշխիչ կայաններից տեղափոխվել են Հայաստան:

տոնավաճառների տեսքով սովորաբար տնտեսության որոշակի ձևերի մասնակի ֆորմալիզացիան է և օրենքից խուսափող ձեռներեց, ճարպիկ մարդկանց ու նոմենկլատուրայի միջև կապի պարագայում անպատժելիության և մի շարք այլ գործոններ («Հանցագործությունները հետխորհրդային երկրներում» հոդված Ս. Ա), անուղղակիորեն ազդում են երեխաների վրա՝ բորբոքելով նրանց երևակայությունը: Ի լրումն, աշխատաշուկայի սահմանափակումները, աշխատանքի տեղավորման համար փորձի առկայության պահանջը, զանգվածային լրատվության միջոցներով փառահեղ, շքեղ կյանքի (որը անհամեմատ գերազանցում է դեռահասների հնարավորություններին գովազդումը), հասարակական արժեքների ներկայիս փոփոխությունները անբարենպաստ են ազդում երեխաների խոցելիության վրա:

Մեզո մակարդակում բավականին սուր է արտահայտված մասնագիտական մոտեցումների խնդիրը: Երեխաների սեռական շահագործման պարագայում իրավապահների և այլ առնչվող մասնագետների կարողությունները խիստ անբավարար են նման երեխաների հետ համապատասխան գրագետ, պրոֆեսիոնալ աշխատանք կատարելու համար: Երկրում չկան մասնագիտացված ծառայություններ, երեխաների առաձնահատկությունները գործող ընթացակարգերում ներառնված չեն: Երեխա տուժածների մարդկային արժանապատվության հանդեպ հարգանքը գրեթե չի կարևորվում: Հետևաբար, երեխայի պաշտպանությունը շահագործման բոլոր ձևերից, ներառյալ՝ վաճառքը, պոռնկությունը և պորնոգրաֆիան, չի կարող դիտարկվել կամ քննարկվել առանձին, այլ երեխաների իրավունքների իրականացման ավելի լայն համատեքստում: Մասնավորապես, կոնկրետ գործող պրակտիկայում Թեժ գիծ ծառայության առկայությունը ինքնին դրական է, սակայն ցածր է դրան դիմելու պատրաստակամությունը, ինչը կարող է կապված լինել իրազեկվածության պակասի, բայց նաև առաջարկվող հետագա աջակցության չափերի, ծավալի և ծառայություն ստացողների ակնկալիքների միջև առկա անհամապատասխանության հետ: Ակնհայտ է, որ երկրում սեռական շահագործման տարբեր ձևերի մեջ տարաբնույթ միջոցներով ընդգրկված դեռահաս աղջիկների համար վերականգնողական կենտրոնի հիմնման հապաղումը անհարկի հետաձգում է այդ երեխաների հետ աշխատանքների կանոնակարգումը: Այդ հապաղումը վկայում է խնդիրը չճանաչելու, չընդունելու և պրակտիկայում գոհակենտրոն մոտեցումներ չամրագրելու մասին: Ակնհայտ է նաև, որ սեռական և աշխատանքային շահագործման տարբեր տարատեսակների մեջ ընդգրկված երեխաների խնդիրը դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ կապված սոցիալական պրակտիկայի, մշակույթի առանձնահատկությունների հետ: Լուրջ քննարկման խնդիր է երեխաների սեռական կյանքի համար նվազագույն տարիքի սահմանման իրավական և սոցիալական համատեքստերի համաձայնեցումը և օրենսդրական

ամրագրումներից զատ սոցիալական, կրթական, լուսաբանման միջոցների կիրառումը, որոնք թույլ կտան նվազագույնի հասցնել երեխաների սեռական շահագործումը: Ըստ երևութին, սեռական բնույթի ծառայությունների մեջ ներգրավումը խճողված արժեքների խաչմերուկում է գտնվում շատ ավելի, քան մուրացկանությունը առհասարակ: Ահա ինչու, ընկալումների և սահմանումների մեջ հերթը դեռևս չի հասել դրան, (ի տարբերություն մուրացկանության):

Ներկա փուլում, երբ առկա է հասկացությունների, սահմանումների տարբերում և նույնականացման բարդություններ, երբ ստույգ սահմանումներ և մոտեցումներ դեռևս չեն ամրագրվել, իրազեկման աշխատանքները միշտ չէ, որ կարողանում են հասնել իրենց նպատակներին:

Ոստիկանությունում հաշվառված, ինչպես նաև ռիսկային այլ խմբերի երեխաների հետ աշխատանքը խորքային չէ, այն աղքատիկ բովանդակություն ունի: Այս հանգամանքները և այդ ոլորտում մոտեցումների սովոր պրակտիկան դժվարացնում են երեխաների շահագործելու և շահագործվելու պոտենցյալ վտանգների կանխումը: Մինչդեռ, ըստ էության, վտանգված երեխաների բացահայտման մի կարևոր ռեսուրս «թաքնված է» այս օղակում: Թրաֆիկինգի զոհերի նույնացման ազգային չափորոշիչների բացը ի լրումն մասնագետների վերաբերմունքի ու ոչ ադեկվատ կարողությունների, դժվարեցնում է երեխաների թրաֆիկինգի դեմ պայքարը:

Երեխաների կյանքի դժվարին իրավիճակների, այդ թվում՝ թրաֆիկինգի ենթարկվելու դեպքերի նախականիման, վաղ հայտնաբերման և զոհերի հետագա ինտեգրման համար կարևոր բաց է համայնքային մակարդակում զգայուն, արձագանքելու պատրաստ միջավայրի ձևավորման խնդրի լուծված չլինելը: Համայնքային մակարդակի տարբեր մասնագետների աշխատանքը կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաների/ընտանիքների հետ հիմնված է բացառապես «բարի կամքի վրա»: Պարտականությունների ամրագրումը նրանց աշխատանքային մանդատներում և նրանց գիտելիքներով զինելն ու մոտիվացիային նպաստող միջոցների կիրառումը թույլ կտա լրջացնել, մասնագիտացնել այդ աշխատանքը: Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգը՝ այն տեսքով, որով այսօր գործում է համայնքային մակարդակում (հասարակական հիմունքներով աշխատող խնամակալության հանձնաժողովներ, մասնագետների կարողությունների անհամապատասխանություն, ծառայությունների բացակայություն, մասնագետների մոտիվացիայի պակաս և այլն), չի կարող «պատասխանել» ո՛չ թրաֆիկինգի, ո՛չ էլ շահագործման այլ տեսակների ռիսկերին: Հանրապետական նշանակության ծառայությունների մակարդակում առնվազն անհասկանալի է ընդհանուր նշանակության բազմաթիվ հասատությունների առկայությունը, որոնց մեծամասնությունը կարողություն չունի և չի աշխատում երեխաների հետ երեխայակենտրոն

մոտեցմամբ, թեև ստեղծված են՝ կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաների հետ աշխատելու առաքելությամբ:

Երեխաների թրաֆիկինգի երևույթի «Գործոնային քարտեզը» ներկայացված է երզրակացությանը կից:

Այսպիսով, հետազոտությունը բացահայտեց, որ «Թրաֆիկինգ» տերմինը միանգամից է մտել շրջանառության մեջ, և դեռևս շատ «հույս» է: Օրենսդրության մեջ արտացոլվող տերմինների դինամիկ փոփոխությունները վկայում են, որ թրաֆիկինգի, որպես երևույթի ընկալումն ու մեկնաբանումն ու սահմանումը դեռևս տրամաբանական ավարտին չհասած «կենդանի» գործընթաց է:

Երեխաների դեպքում նկատվում է լուրջ տարբերություններ «թրաֆիկինգ» տերմինի հետ ծանոթ լինելու, թրաֆիկինգ/շահագործում նկարագրող տարբեր դրսևորումների հետ ծանոթ լինելու և կոնկրետ իրավիճակների հետ ծանոթ լինելու ցուցանիշների միջև: Երևույթի ընկալումը տարաբնույթ է ինչպես բնակչության և երեխաների խմբերում, այնպես էլ մասնագետների շրջանում: Որքան մարդիկ իրազեկ են, այնքան կարևորում են այդ խնդիրը, պատկերացում վտանգները: Երեխաները չունեն բավարար գիտելիքներ և ճկունություն՝ դիմադրելու թրաֆիկինգի տեսանկյունից պոտենցյալ վտանգներին. իրենց դատողություններում երեխաները ավելի մեծ շրջահայացություն են ցուցաբերում (տեսականորեն), քան հնարավոր պրակտիկ գործողություններում: Նրանք մեծ մասամբ չեն ըմբռնում և չեն դիմադրում շահագործողական իրավիճակներին, ավելին պատրաստ են կամավոր հայտնվելու այդպիսի իրավիճակներում:

Երևույթի դեմ պայքարը արդյունավետ չէ, քանի որ կան նաև ընթացակարգային դժվարություններ, որոնք կապված են երևույթի դեմ պայքարի նպատակով պետության ֆինանսական հատկացումների պրակտիկ կյանքում տնօրինման մեխանիզմների անկատարության, սոցիալական պատվերի գործարկման մեխանիզմների պակասի ուղղորդման կարգում երեխաների առանձնահատկությունների ներառման բացերի հետ: Դժվարություն է պետություն-ծնող կողմերի միջև պարտականությունների և իրավունքների բաշխման հարցում երեխաների շահերից բխող հավասարակշռության հաստատման խնդիրը: Թրաֆիկինգի դեմ պայքարի կազմակերպման համար ներկայիս գործող ՄԳՀ-ի և Աշխատանքային խմբերի գոյությունն ինքնին դրական է, սակայն ինստիտուցիոնալիզացիայի խնդիրը դարձել է խիստ արդիական: Ժամանակն է, որ այն դառնա մշտական գործող կառույց՝ համապատասխան ռեսուրսներով, թեև, որպես հանձնաժողով, այն աննախադեպ է և գրանցել է լուրջ հաջողություններ:

Երեխաների թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարը հնարավոր կլինի բոլոր նշված բացերը լրացնելու, մարզային մակարդակում գրագետ կոորդինացման, գործընթացների նկատմամբ ազգային մակարդակում մոնիթորինգի ապահովման պայմաններում: Մասնավորապես, մարզային մակարդակում ԵԻՊԲ-ի կանոնադրությունը և աշխատանքի սկզբունքները կարիք կա հարմոնիզացիայի ենթարկել ԽՀ-ի գործառույթների հետ:

Նման մոտեցումը թույլ կտա երեխաների թրաֆիկինգի պարագայում իրավիճակային արձագանքների փոխարեն երկրում զարգացնել համակարգային կարողությունները:

Այսպիսով, երեխաների պաշտպանությունը թրաֆիկինգից հուսալի կարող է լինել այն դեպքում, եթե ջանքերը ուղղվում են երեխայի ճկունության գործոնների ակտիվացմանը՝ նրա սոցիալական հմտությունների զարգացման միջոցով. խնդիր, որը մասնագիտական շնորհք, գիտելիք և հմտություն է պահանջում:

Պաշտպանության միջոցները պետք է ուսուցանել երիտասարդներին, մինչդեռ երեխաներին՝ իրազեկել վտանգի և ընդհանրապես շահագործման մասին

Առաջարկություններ

Մակրո մակարդակ (սոցիալական քաղաքականություն, օրենսդրություն, ընթացակարգեր, մոտեցումներ)

1. Անհրաժեշտ է վավերացնել հետևյալ միջազգային ակտերը՝

- “Անճնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակումից անձանց պաշտպանության մասին” ԵԽ կոնվենցիան,
- ՄԱԿ-ի “Ստրկության մասին” կոնվենցիան,
- ՄԱԿ-ի “Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը հավասարազոր ավանդույթների վերացման մասին” լրացուցիչ կոնվենցիան:

2. Պրակտիկ առումով անհրաժեշտ է իրականացնել **պաշտպանության առավել արդյունավետ միջոցներ**, մասնավորապես, անչափահաս տուժողների պաշտպանությունը իրականացնելիս անհրաժեշտ է պաշտպանության տակ առնել ոչ միայն նրան, այլ նաև նրա օրինական ներկայացուցչին և նրա ընտանիքի այլ անդամներին⁵¹: Ելնելով միջազգային

⁵¹ Որոշ տուժողներին անգամ դատարանի դաշիճում հասցվել են վիրավորանքներ, սպառնալիքներ: Երբ թրաֆիքինգի գոհը քրեական վարույթ իրականացնող մարմին ներկայանում է պահախմբի ուղեկցությամբ, դա արդեն և հոգեբանական մեծ նշանակություն ունի գոհի համար, որը իրեն զգում է պաշտպանված և ավելի վստահ, և որոշակի զգոնություն է առաջացնում

առաջատար փորձից, հրաժարվել զոհին ընդհանրապես և հատկապես երեխաներին դատարան հրավիրելու պրակտիկայից:

3. Միջազգային փորձի (գոնե հարակից երկրներում) լուրջ ուսումնասիրության հիման վրա ուժեղացնել օրենսդրական դաշտը և մշակել անչափահաս տուժողների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ:

4. ՀՀ-ում քրեորեն պատժելի դարձնել անօրինական որդեգրումը, մասնավորապես՝ արտասահմանյան որդեգրումը (ինչը պայմանավորված է ՀՀ ՔՕ համապատասխան հոդվածի բացակայությամբ):

5. Միջազգային որդեգրության դեպքում, այն լիազորված մարմինները, որոնք ներգրավված են այդ գործողության մեջ, պետք է ստեղծեն տեղեկատվության փոխանակման ձև, որը գործընթացը և արդյունքներն ավելի վերահսկելի կդարձնի:

6. Անհրաժեշտ է նախատեսել թրաֆիքինգի զոհերի ուղղորդման առանձնահատկություններ՝ կապված անչափահասության հետ:

7. Անհրաժեշտ է ”Սոցիալական աջակցության մասին” ՀՀ օրենքում⁵² իրականացնել փոփոխություններ և լրացումներ՝ առավել ուշադրություն դարձնելով երեխաների իրավունքներին, ազատություններին և շահերին:

8. Երկրում ստեղծել պետական ֆինանսավորմամբ և պետական վերահսկողությամբ աշխատող ապաստարաններ:

9. ԵԻՊԲ-ի կանոնադրությունը և աշխատանքի սկզբունքները կարիք կա հարմոնիզացիայի ենթարկել ԽՀ-ի գործառույթների հետ:

10. Որպես թրաֆիկյորի պատիժ՝ կիրառել նաև որոշակի պաշտոնից/գործունեությունից զրկելու սանկցիաներ

11. Առանձնացնել երեխաների թրաֆիկինգի հոդված և տուժողների ծառայություններից օգտվելու երևույթը քրեականացնել

12. Ունենալ պետական ծրագիր, որն անհրաժեշտ է, որպեսզի պարտադրի հեռուստատեսություններին լուսաբանելու խնդիրը, այլ խոսքով, սոցիալական գովազդները դարձնել պետական հոգածության առարկա (ինչպես դա իրականացվել է Ռուսաստանում)

13. Դպրոցներում և մանկական խնամքի հաստատություններում երեխաների շահագործման երևույթները կանխելու համար ուժեղացնել հսկողությունը մակրոմակարդակի կողմից:

հանցագործի և նրա մերձավորների մոտ՝ հակաիրավական գործողություններ կատարելու կանխման հարցում: Այսքանով կարելի է նշել, որ զոհի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալը, այսինքն ՀՀ Քր. դատ. օր.-ի 98¹ հոդվածի 6-րդ կետով նախատեսված միջոցի կիրառումը այնքան էլ մեծ նյութական ծախսեր չի պահանջում, բայց բավականին արդյունավետ միջոց է հանդիսանում ու դրա համար բավական է միայն համապատասխան ծառայողների (ծառայության) առկայությունը:

⁵² Ինքնին այդ օրենքը լուրջ վերանայման կարիք ունի՝ կապված ծառայությունների տեսակների, դրանց մատուցմանը առաջադրվող պահանջների, ծառայություն մատուցողների, մասնագիտական ստանդարտների և այլ խնդիրների հետ:

14. Ելնելով երեխաների թրաֆիքինգի խնդրի բարդությունից, մոտեցումներից և գործողությունների համաձայնեցման անհրաժեշտությունից՝ ձևավորել երեխաների թրաֆիքինգի ենթա-աշխատանքային խումբ (թեմատիկ), որի գործունեությունը ուղղված կլինի բոլոր 3 մակարդակների խնդիրների կարգավորման համար համապատասխան ռազմավարական ուղիների մշակմանը:

Խնդիրը հասունացած է, քանի որ երեխաների թրաֆիքինգի խնդիրը երեխաների (մարդու) իրավունքների վրա հիմնված (HRBAP) պլանավորում է պահանջում, որը ենթադրում է նեղ մասնագիտական խնդիրների այնպիսի շրջանակ, որն ընդհանուր աշխատանքային խմբի ձևաչափի մեջ չի տեղավորվում: Ընդ որում, կարևոր է, որ թեմատիկ հանձնաժողովը հնարավորություն ունենա, մասնավորապես ստեղծելու, վերանայելու «Երեխաների իրավունքների» պաշտպանության ռազմավարական պլանը և գործողությունների ծրագիրը, որում տեղ գտած բազմաթիվ դրույթներն այլևս արդիական չեն և չեն նպաստում պայքարի արդյունավետ կազմակերպմանը, իսկ որոշ գործողություններ, որոնք հետ են մնացել ժամանակացույցից, լոբբինգի կարիք ունեն: Թրաֆիքինգի համատեքստում վերանայման, ամրագրման կարիք ունի նաև Երեխաների հանդեպ բռնությունների կանխարգելման և ուղղորդման հայեցակարգի նախագիծը, հաստատությունների, երեխաների խնամքով և պաշտպանությամբ զբաղվող կառույցների լիցենզավորման կարգը, երեխաների հետ աշխատող մասնագետներին առաջադրվող պահանջներն ու դրանց հանդեպ վերահսկողություն իրագործելու սկզբունքները: Ի դեպ, մակրո մակարդակի համար սույն բաժնում ներկայացված առաջարկությունների գերակշիռ մասը այդ հանձնաժողովի շրջանակներում է, իսկ որոշ գործողություններ կարող են հանձնվել Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովին՝ լոբբինգ կազմակերպելուց հետո, հաշվի առնելով այդ հանձնաժողովի գործառնման ներկա վիճակը:

- Մշակել զբաղվածության-մասնագիտական զանազան միջոցներ, որոնք թույլ կտան ստեղծել ավագ դպրոց չզնացող և հաստատության պայմաններում մեծացող դեռահասների համար սոցիալական վստահելի հեռանկարի երաշխիքներ:
- Ստեղծել կայուն, կրթական համակարգում ամրագրված բարձրակարգ ուսուցման մոդելներ երեխաների հետ աշխատող բոլոր մասնագետների պատրաստման ուսումնական ծրագրերում:
- Մշակել մոտեցումներ, որոնք թույլ կտան երեխա զոհերի հետ աշխատանքը կառուցել սոցիալ-հոգեբանական մոտեցումների ներառմամբ կամ քննիչներին զուգահեռ սոցիալական աշխատողների և հոգեբանների արդյունավետ ներգրավել քննության գործընթացում (ապացուցողական փաթեթներում սոցիալական աշխատողի և հոգեբանի երեխայի հետ հարցազրույցների գրառումների, եզրակացությունների ներառման գործընթացի մանդատավորում)
- Նախատեսել պետական ֆինանսավորում պայքարի բոլոր հիմնական գործողությունների համար:

- Անհրաժեշտ է պարզեցնել «Թեժ գծի» հեռախոսահամարը (երկար հեռախոսահամարի փոխարեն 3-4 նիշ)⁵³:
- Մտածել մեխանիզմներ, որոնք երեխաների հետ աշխատող մասնագետներին հասու կդարձնեն «Ուղղորդման կարգի», ինչպես նաև հարակից փաստաթղթերի մասին տեղեկատվությունը:
- Նկատի ունենալով, որ երեխայի սեռական և աշխատանքային շահագործումը առավել ռիսկային և առավել տարածված է համարվել ըստ սույն հետազոտության, իրագործել հետազոտություն «Հայաստանում երեխաների սեռական բռնության» և «Հայաստանում երեխաների հարկադիր աշխատանքի» վերաբերյալ:
- Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը ակտիվացնել՝ ներառելու թրաֆիքինգի դեմ պայքարի անհրաժեշտ գործողություններ, մասնավորապես կարգավորելու. անչափահասների մուտքը զվարճանքի վայրեր, ինտերնետ ակումբ, խաղատներ սահմանափակելու հարցերը, հեռուստատեսությամբ սոցիալական թեմաների, մասնավորապես երեխաների պաշտպանության թեմաների անվճար ներառումը, Թեժ գծի խնդիրը և այլն:

Մեզո մակարդակ

- Երեխայի պաշտպանության ոլորտում աշխատող մասնագետների կարողությունների զարգացման պահանջը ամրագրել ընթացակարգերով (պարտադիր նվազագույն վերապատրաստումներ տարեկան կտրվածքով), ներմուծել մասնագետների աշխատանքի որակի գնահատման չափորոշիչներ՝ հաշվի առնելով երեխաների ոլորտի զգայունությունը:
- Ուսումնասիրելով առաջատար փորձը՝ մշակել աշխատանքային ուղեցույցներ մասնագետների համար և պրակտիկ կիրառական այլ գործիքներ՝ ի լրումն վերապատրաստման մասնագիտական (պրոֆեսիոնալ) դասընթացների կազմակերպման:
- Պատրաստել համայնքային սոցիալական աշխատողներ, կամ վերազինել համայնքային ծառայողներին՝ որպես սոցիալական աշխատողներ, ամրագրել նրանց աշխատանքային մանդատը, որպես երեխայի և ընտանիքի հետ աշխատող անմիջական օղակ:
- Կանոնավորապես վերապատրաստել ուսուցիչներին, դաստիարակներին, խնամողներին այնպես, որ նրանք ի վիճակի լինեն զարգացնելու երեխաների սոցիալական ճկունությունն ու հմտությունները՝ տիրապետելով երեխայակենտրոն մոտեցումներին:
- Յուրաքանչյուր դպրոցում ունենալ առնվազն մեկ սոցիալական մանկավարժ (կամ վերապատրաստել դպրոցի կազմակերպիչներին) որպես երեխայի հետ սոցիալական աշխատող, որը, համագործակցելով անչափահասներով զբաղվող ոստիկանի, այլ

⁵³ 2 տարբեր հանդիպումների ժամանակ, լրագրողները չկարողացան մտախահել հեռախոսահամարը, հետևաբար այն դժվար մտապահելի է նաև պոտենցյալ շահառուների համար:

մասնագետների հետ, վաղ և մասնագիտացված միջամտություն ու աջակցություն կցուցաբերի կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխային/ընտանիքին:

- Յուրաքանչյուր մարզում (կամ առնվազն տարածաշրջանում) ստեղծել մեթոդական օգնության և ճգնաժամի միջամտության մեկական ծառայություն, որը կօգնի տեղի մասնագետներին՝ առավել դժվար դեպքերը կառավարելու: Այն մեթոդական օգնություն կցուցաբերի համայնքային, աշխատանքային և դպրոցի համապատասխան մասնագետներին:
- Խոցելի երիտասարդների/դեռահասների համար ստեղծել վերականգնողական կենտրոն, քանի որ եղածները չեն ընդունում և ի վիճակի չեն արդյունավետ կերպով աշխատելու մարմնավաճառությամբ զբաղվող, բռնությունների զոհ դարձած երեխաների հետ, որոնք առավել խոցելի են թրաֆիքինգի տեսանկյունից: Կարելի է գործող կառույցներից մեկական թվով վերափոխել աղջիկների և տղաների համար:
- Պետք է հատուկ քննիչներ պատրաստել, որոնք ավելի պրոֆեսիոնալ մոտեցում կցուցաբերեն այս խնդրին: Հատուկ հմտություններ է պետք ուսուցանել քննիչներին՝ երեխաների հետ շփվելու համար:
- Երեխաների ճկունությունը զարգացնելու զանազան «պիլոտային» տեխնոլոգիաներ ներդնել, ապա, հղկումներից հետո, ուսուցանել ինչպես ապագա՝ համալսարանում, այնպես էլ գործող՝ պրակտիկ մասնագետներին:

Միկրո մակարդակ (երեխա)

- Երեխաներին իրազեկել իրենց մատչելի ձևերով և մեթոդներով, դպրոցներում տեսաֆիլմեր ցույց տալ, թեման ներառել դասագրքերի մեջ, իրազեկումը իրականացնել հատուկ պատրաստված ուսուցիչների, հոգեբանի կամ սոցիալական աշխատողի միջոցով, գործընթացները դարձնել շարունակական և կառավարելի:
- Զննարկել որոշ իրական դեպքերը երեխաների հետ: Հատուկ դասաժամ հատկացնել դպրոցներում: Դ-ա պետք է իրականացնի կամ հոգեբանը կամ սոցիալական աշխատողը, որոնք նաև անհրաժեշտ խորհրդատվություն կիրականացնեն՝ կոնկրետ ռիսկերի պարագայում:

Հավելվածներ

I Գեաքերի նկարագրություններ և երեխաների վկայություններ.

Դեաք 1. Լ-ի ծնողները ամուսնացել և բնակվում էին Գեղարքունիքի մարզում: Լ-ն մանկուց հաշմանդամ է. ծննդաբերական տրամվայի հետևանքով ունի ոտքի թաթի հետ կապված խնդիր:

Երեխայի պատմելով՝ մայրը օրերով թողնում էր իրենց մենակ և բացակայում տնից: Այդ ընթացքում երեխաների խնամքը իրականացնում էր հայրական տատիկը: Մոր հաճախակի բացակայությունները տնից առիթ էր հանդիսանում ծնողները միջև անընդհատ ընթացող վեճերի:

Լ-ի պատմելով՝ նրա հայրը հաճախակի էր օգտագործում ալկոհոլ և ոչ սթափ վիճակում անընդհատ ծեծում էր կնոջը և երեխաներին: Լ-ն և նրա եղբայրը շատ ժամանակ ստիպված էին լինում վախից դուրս գալ տանից, և գիշերել որտեղ պատահի: Երբեմն էլ անճարությունից դրդված գնում էին հորեղբոր տուն և մնում էին այնտեղ այնքան ժամանակ, մինչև հայրը քներ, որպեսզի կարողանային տուն մտնել:

Ընտանիքում տեղի ունեցող շարունակական վեճերի պատճառով ծնողները առանձնացել են: Մայրը երկու երեխաներին թողել է ամուսնու խնամքին ու տեղափոխվել Մեղրու շրջան, որտեղ նա բնակվում է կիսակառույց հյուրանոցի շենքում: Ըստ իրենց հասած լուրերի, նա վարում է անբարո վարք: Այդ շրջանից սկսված երեխաները չեն ընդունում մոր այդ արարքը և մերժում են ցանկացած տեսակի կապը նրա հետ:

Լ-ի հայրը բաժանվելուց հետո մի քանի անգամ ամուսնացել է, սակայն բոլորն էլ անհաջող: Վերջին ամուսնությունից ունի 3 երեխա: Լ-ի խոսքերով հոր «վերջին» կինը շատ լավ անճնավորություն է, լավ է վերաբերվում իրեն և եղբորը և «տարբերություն» չի դնում իրենց և իր երեխաների միջև:

Թվում էր, թե Լ-ի ընտանիքում ամեն բան կարգավորվել էր: Մի օր հայտնվեց Լ-ի մայրը և համոզելով Լ-ին, որ շատ է գոջում իրենց լքելու համար, առաջարկեց Լ-ին, ամառային արձակուրդներին մի քանի օրով ապրել իր հետ: Լ-ի եղբայրը դեմ էր այդ որոշմանը և փորձում էր համոզել քրոջը, որ պետք չէ վստահել մորը, քանի որ նա լքել է իրենց, և ոչ մի անգամ չի հետաքրքրվել նրանց ճակատագրով: Սակայն Լ-ի մոտ մոր նկատմամբ կարոտն ավելի մեծ էր: Ի վերջո նա համաձայնվեց մի քանի օրով գնալ մոր մոտ: Որոշ ժամանակ այնտեղ ապրելուց հետո նա կրկին վերադարձով հայրական ընտանիք: Սակայն, ինչպես նշում էին ընտանիքի անդամները, նա կարծես լրիվ այլ մարդ լիներ: Հաճախակի էր վիճում ընտանիքի անդամների հետ, անընդհատ կրկնում էր, որ ոչ ոք իրեն չի սիրում և չի հասկանում: Հերթական ընտանեկան վեճից հետո Լ-ն որոշում է վերցնել իրերը և տեղափոխվել մոր մոտ. մտածելով, որ ընտանիքի անդամները կանհանգստանան, նա մի երկտող է թողնում, որում նշված էր, որ ինքը գնում է ապրելու մոր հետ:

Երեխայի պատմելով, որոշ ժամանակ հետո նկատեց, որ մոր մոտ անձանոթ տղամադիկ են գալիս: Հերթական անգամ, մայրը ստիպեց նրան սեռական կապի մեջ մտնել այդ տղամարդկանցից մեկի հետ: Չնայած, որ Լ-ն չէր ցանկանում, և փախուստի փորձեր էր կատարում, միևնույնն է ստիպված եղավ սեռական հարաբերություններ ունենալ այդ մեծահասակ տղամարդու հետ: Լ-ն պատմում էր, որ գնալուց այդ տղամարդը գումար տվեց իր մորը, ասելով որ վաղը երեկոյան նորից կգա, և հարցրեց Լ-ին, թե ինչ է ցանկանում, որ բերի իր համար: Այդպես ոչ միայն այդ, այլև ուրիշ այլ տղամարդիկ, քաղցրավենիք առաջարկելով

իրեն և վճարելով գումար մորը, ամիսներ շարունակ «այցելել» են Լ-ին, մինչև հյուրանոցի տերը ահազանգել էր ոստիկանությանը:

Գեայք 2. Է-ն միայնակ մոր երեխա էր: Նա համարյա չի հիշում հորը: Փոքր հասակից նրա խնամքը իրականացրել է մայրական տատիկը: Երբ տասը տարեկան էր, մահացավ տատիկը և նա ստիպված տեղափոխվեց մոր մոտ: Մայրը միշտ վատ է վերաբերվել նրան, ստիպում էր սեռական հարաբերությունների մեջ մտնել տարբեր տղամարդկանց հետ և աշխատած գումարը տալ իրեն: Այդ պատմությունը սկիզբ է առել, երբ նա 13 տարեկան էր:

Մոր 2-րդ ամուսինը չէր սիրում իրեն և շարունակ առիթներ էր փնտրում, որպեսզի ընտանիքում վիճաբանություններ առաջանան: Մայրը հիմնականում այդ ամենի մեջ մեղադրում էր Է-ին: Հերթական վեճերից մեկի ժամանակ նա ստիպված գիշերով հեռանում է տնից և գնում ընկերուհու մոտ, որը բնակվում էր վարձով: Ընկերուհին համաձայնվում է նրան օթևան տալ միայն այն պայմանով, եթե Է-ն կատարի ընկերուհու պահանջները:

Ըստ Է-ի՝ երեկոները ընկերուհու տուն էին գալիս տարբեր տղամարդիկ, որոնց նա համարում էր իր ծանոթները, նրանք իրենց հետ բերում էին սննդամթերք և ոգելից խմիչքներ, վճարում էին որոշակի գումար ու դրա դիմաց նրանք պահանջում էին, որ աղջիկները սեռական հարաբերություններ ունենան իրենց հետ: Սկզբում դա նրան նույնիսկ հաճելի էր: Հարևանների բողոքների և ճնշումների հետևանքով (գինարքույքը երբեմն տևում էր ամբողջ գիշեր) աղջիկները որոշում են տեղափոխվել Աշտարակ՝ ծանոթներից մեկի մոտ, որը խոստացել էր գտնել համեմատաբար էժան գնով վարձով բնակարան: Սակայն ծանոթը մերժում է նրանց բնակարան գտնել: Աշտարակում չգտնելով համապատասխան բնակարան, ստիպված գիշերում են փողոցում:

Փողոցում նրանց մոտենում է միջին տարիքի մի տղամարդ, որը առաջարկում է նրանց գիշերել իր տանը՝ մինչև իրենց համար կգտնեն համապատասխան կացարան: Աղջիկները ուրախությամբ ընդունում են առաջարկը, բայց հետագայում պարզվում է, որ այս մարդը, աղջիկների հետ կապված, ուներ այլ նպատակներ: Նա աղջիկներին ստիպողաբար պահում էր իր տանը և պահանջում էր սեռական հարաբերություններ ունենալ 6-7 տղամարդու հետ, հակառակ իրենց կամքի: Նրանց ասելով, մերժելու դեպքում, նրանց սպառնում էր, ծեծում, երբեմն էլ թողնում էր սոված: Նրանց հաջողվում է փախչել: Է-ն ունի բազմաթիվ սեռական հիվանդություններ և չգիտի, թե ինչպիսին է լինելու իր ապագան...

Երեխաների վկայություններից

... 4 տարի առաջ Վանաձորում զբաղվել է մուրացկանությամբ: Ընտանիքը սոված էր և ինքը սեփական կամքով զբաղվել է մուրացկանությամբ՝ ծնողներից գաղտնի: Նշում է, որ գումար էր հավաքում, բերում էր տուն, իսկ երբ տանը հարցնում էին, թե որտեղից է այդ գումարը, ասում էր, որ աշխատել է. տարբեր մարդկանց է օգնել խոտ հավաքել, որոնք էլ իրեն դրա համար գումար են տվել: Երբեմն փողոցում մեխ տղաները կամ ուրիշ մուրացիկներ ծաղրում կամ ծեծի էին ենթարկում իրեն...Երբ հայրը աշխատանքի է անցել, ինքը դադարել է զբաղվել մուրացկանությամբ:

...Առաջին անգամ գողություն արել ենք 3 ընկերներով, 12 տարեկան էինք. խաչ ենք գողացել մամայիս ընկերուհու ամուսնու ավտոմեքենայից: Հետո 3 տղա (18 տարեկան) իմացել են, որ մենք գողություն ենք արել, մեզ կանչել և ասել են, որ պիտի աշխատենք իրենց համար. «Եթե չաշխատեք, մենք ձեզ կսպանենք»: Սկզբում պղինձ էինք գողանում, հետո ավտոմեքենաներից ակումլյատոր, մագնիտոֆոն և այլ բաներ: Նրանք էին մեզ ցույց տալիս այդ մեքենաները: Մենք գողանում էինք ու տալիս նրանց: Հետո տներից (բարեկամների) ոսկի, հեռախոս, գումար էինք գողանում ու ամեն անգամ տալիս իրենց: 1 ամիս դասերից հետո գնում էինք իրենց մոտ,

մինչև ժամը 16:00 աշխատում էինք, հետո գնում տուն: Իսկ հետո դասերին չէինք գնում. առավոտից էինք աշխատում իրենց համար: Ամեն անգամ նրանք մեզ 100 կամ 200 դրամ գումար էին տալիս: Սպառնում էին, որ չասենք ծնողներին, այլապես կսպանեն մեզ: Այդպես մինչև վերջին գողությունը, երբ աշխատանքի ուսուցման ուսուցչուհու գրպանից 10.000 դրամ էի հանել, և նա հայտնել էր տնօրենին: Տնօրենը զանգահարել էր ոստիկանություն, և հետո ինձ բերել են այստեղ:

...Մայրն իրենց հարևաններին գումար է պարտք եղել, հարևանները շարունակ պահանջել են իրենց գումարը, սակայն մայրը չի կարողացել վճարել: Հետո այդ նույն հարևանները առաջարկել են երեխային աշխատել և փակել ծնողի պարտքը: Նա աշխատել է «Գումի շուկայում» որպես բեռնակիր երեկոյան ժամը 7-ից 10-ը: Յերեկային ժամերին երեխան աշխատում էր «Սթար» սուպերմարկետում: Այստեղ մեծ քանակով առևտուր արած մարդկանց գնածները օգնում էր տանել մինչև իրենց մեքենան, դրա համար մարդիկ փող էին տալիս, հիմնականում 500 դրամ, երբեմն էլ ավելի, մինչև 1000 դրամ: Օրական վաստակում էր 2000-3000 դրամ, որից 500 դրամը տալիս էր տեղի տիրոջը, մնացածը՝ վճարում հարևանների պարտքերը:

... Տղան մինչև այս հաստատություն գալը ծնողներից գաղտնի աշխատել է Ռոսիա կ/թ-ի մոտ որպես «տելեպուզիկ»: Երբ ծնողները տեղեկացել են դրա մասին, զայրացել են, սակայն հետո համաձայնվել են, որ երեխան աշխատի: Նա վաճառել է փուչիկներ, ստացված եկամտի կեսը տվել է գործատուին, ով «տեղ է տալիս» նրան աշխատելու:

...Տղան 14 տարեկան է, ազգությամբ՝ եզդի: Ընտանիքում ունի հայր, մայր, տատ, պապ, քույր: Մոր և հոր միջև մշտապես վեճեր են եղել: Հայրը կախվածություն է ունեցել ալկոհոլից, ունեցել է շատ պարտքեր, որի պատճառով վաճառել է հայրական տունը և ապրել վարձով որտեղ պատահի: Երեխան պատմում է, որ հաճախ հայրը հարբած վիճակում տուն էր գալիս և ծեծում իրեն, մորը, քրոջը: Վերջին անգամ հայրն այնպես է ծեծել մորը, որ վերջինս 2 շաբաթ անկողնային վիճակում է եղել: Այս ամենի մասին իմանալով՝ երեխայի մորեղբայրը, ով բնակվում էր Ռուսաստանում, եկել է և քրոջը տարել իր մոտ՝ բուժման նպատակով: Երեխան մնացել է հոր մոտ, որն էլ նրան շարունակ դրդել է մուրացկանության: Երեխան նշում է, որ եղել են դեպքեր, երբ աշխատել է ծնողների պարտքի դիմաց, օրինակ մաքրել է պարտատիրոջ կտուրը:

...Շարունակ փախնում էր տանից, քանի որ խորթ հոր վեճերի համար մայրը միշտ իրեն էր մեղադրում: Արդյունքում երեխան սկսում է չհաճախել դասերին, օրերով բացակայել տանից: Որպեսզի կարողանար գոյատևել, աշխատում է որոշ ժամանակ, ավտոներ է լվանում, սակայն նրան չեն վարձատրում, ավելին՝ ստիպում են զբաղվել մուրացկանությամբ և վերցնում են ամբողջ գումարը: Տղան նշեց, որ փողոցում ապրելու ընթացքում շատերն են ստիպողաբար աշխատացրել իրեն, նույնիսկ ծեծի միջոցով:


...Դաստիարակները երեխաներին տուն են ուղարկում, որպեսզի նրանք գումար և ծխախոտ բերեն: Երեխաները դրանք տալիս են դաստիարակներին, փոխարենը նրանք երեխաներին թույլ են տալիս ավելի հաճախ տուն գնալ: Այստեղ մի տեսուչ կա, ով երեխաներին «դուրիմկայով» ծեծում է, չի թողնում, որ տուն գնան: Եթե երեխաները գնում են տուն և վերադառնում, նրանց ֆիզիկական խոշտանգումների է ենթարկում:

... 10 տարեկան երեխային մոտեցել է մի ավտոմեքենա, ներսից նրան ասել են, թե հայրն է ուղարկել, որ իբրև տանեն իրեն: Երեխան դժվարությամբ նստել է մեքենան, հետո աղմուկ է բարձրացրել. վախից երեխային անվնաս բերել են ետ՝ դպրոցի մոտ:
 ... իրենց մոտ փորձ են արել առևանգել մի աղջկա: Օտար մարդիկ ներկայացել են որպես հոր ընկերներ և առաջարկել են տուն տանել: Առևանգմանը խանգարել են մոտակայքում գտնվող ավելի մեծ տարիքի (10-րդ դասարանի) տղաները, ովքեր տեսել են և հասկացել, որ աղջկան խաբում են:
 ...Անձանոթ մարդիկ տղաներին ցույց են տվել ցենզուրայից դուրս նկարներ...
 ...Դպրոցի աղջիկներից մեկին բռնաբարել են, ծնողները հանել են նրան դպրոցից, այժմ նա բալիկ ունի:


... Դպրոցի երեխաներից մեկն աշխատում է տնօրենի տանն իբրև հավաքարար, որպեսզի տնօրենը դպրոցից չհանի:

II. Գծապատկերներ և աղյուսակներ


Գծապատկեր Հ1. Բնակչության իրազեկվածության մակարդակն ըստ մարզերի




Գծապատկեր Հ2. Երեխաների իրազեկվածության մակարդակը ըստ մարզերի՝




Գծապատկեր Հ3. Մեծահասակների իրազեկվածության մակարդակը ըստ բնակավայրի տիպի




Գծապատկեր Հ 4 Վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ ծանոթ երեխաների բաշխումը ըստ սեռի




Գծապատկեր Հ 5 Հատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ ծանոթ երեխաների բաշխումը ըստ դասարանների



Գծանկար Հ 6 Վատ վերաբերմունքի տարբեր ձևերի հետ ծանոթ երեխաների բաշխումը ըստ ընտանիքի բարեկեցության մակարդակի



Գծապատկեր Հ 7. Երեխաների ընտանիքների բարեկեցության մակարդակը ըստ -հաստատության տիպի



Աղյուսակ Հ 1. Շահագործման տեսակները՝ ըստ բնակչության պատկերացումների

	Տեսակները	%
1	Աշխատանք «մի փոր հացի դիմաց»	13,5%
2	Սոփիադրական աշխատանք՝ առանց վարձատրության	12,2%
3	Երեխան աշխատում է, սակայն չի վարձատրվում	16,6%
4	Երեխային ներքաշել մուրացկանության մեջ և զումարը ձեռքից վերցնել	17,5%
5	Երեխան աշխատում է վտանգավոր պայմաններում	5,6%
6	Երեխային ստիպում են մարմնավաճառությամբ զբաղվել	17,3%

7	Հաստատության տնօրինության/ անձնակազմի կողմից հաստատությունում ապրող երեխաների շահագործում սեփական տնտեսությունում/ բիզնեսում	1,1%
8	Տարիքային խիստ անհամապատասխան ամուսնություն	1,7%
9	Անօրինական որդեգրություն	1,7%
10	Օրգանների տեղափոխում/ վաճառք	6,4%
11	Թմրանյութերի ստիպողական տեղափոխում	1,7%
12	Երեխաների տեղափոխում իր բնակավայրից աշխատացնելու կամ այլ նպատակների համար	1,6%
13	Այլ պատասխան ⁵⁴	1,7%
99	Գժվարանում են պատասխանել	1,4%
	Ընդամենը պատասխաններ	100,0%

Աղյուսակ Հ 2. Շահագործման դրսևորումների բնորոշումն ըստ երեխաների

Իրավիճակ	Վտանգավոր չէ	Բռնություն	Շահագործում	Թրաֆիկինգ	Դաստ. ն միջոց	Մարդու իրավունքի խախտում	Այլ	99
Աշխատանք առանց կամ չնչին վարձատրությամբ	6.1	21.9	52.5	1.7	.3	10.7	2.2	1.7
Աշխատանք վտանգավոր պայմաններում	15.3	29.0	36.6	1.0	.2	10.2	3.9	3.9
Աշխատանք կամքին հակառակ	1.5	55.3	26.1	1.5	0.2	11.2	2	2.2
Աշխատանք ծնողների ունեցած պարտքի դիմաց	11.7	24.6	46.1	1.4	1.5	8.6	2.7	3.4
Մուրացկանության մղել	0.7	47.8	31.5	7.6	0.5	7.3	3.1	1.5
«Հարկահավաքություն» (հեռախոսի/գումարի/թանկարժեք իրերի պահանջ)	0.2	36.6	44.2	2.2	1.2	8.0	4.4	3.2
Ներգրավել մերկ/կիսամերկ նկարահանվելու (նկարվելու) ֆիլմում/տեսահոլովակում/ամսագրերում	2.0	23.9	44.2	10.3	0.2	8.5	5.3	5.6
Ներգրավել զվարճանքի վայրերում/ապրող/մատուցող աշխատելու	7.1	20.5	52.0	4.7	0.2	5.4	2.1	7.8
Ներգրավել զբաղվելու մարմնավաճառությամբ	0.7	30.5	30.8	22.5	0.2	5.4	5.9	3.9
Գողության մղել	0.7	42.9	39.7	3.2	0.3	6.4	4.4	2.4
Օգտագործել/ տեղափոխել/ վաճառել քմրանյութեր	3.1	28.1	33.4	17.8	0.3	7.3	5.4	4.6
Տեղափոխվել այլ բնակավայր աշխատելու նպատակով	5.3	41.9	33.7	5.6	0.5	6.6	1	5.4

⁵⁴ Հնչել են՝ երեխաների առևանգում և սեռական շահագործում:

Երեխաների առևանգում	0.5	43.1	13.1	23.6	0.2	9.3	8	2.4
---------------------	-----	------	------	------	-----	-----	---	-----

Աղյուսակ 3. Լրացուցիչ ճշտումների ենթակա պայմանները ըստ երեխաների

Պայմաններ	%
1 Աշխատելու/սովորելու վայր, հասցե	14,1%
2 Աշխատելու/սովորելու պայմաններ	29,0%
3 Վարձատրության/վճարի պայմաններ	16,0%
4 Բնակության վայրի հասցե	9,3%
5 Բնակության պայմաններ	12,7%
6 Գործատուի/կրթօջախի վերաբերյալ	9,4%
7 Գրավոր պայմանագիր	7,3%
8 Այլ	0,9%
99 Դժվարանում եմ պատասխանել	1,3%
Ընդամենը	100,0%

Աղյուսակ 4. Մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով երեխաների ներգրավման միջոցները ըստ երեխաների

Միջոց	հանրակրթություն	մանկատուն	խնամքի կենտրոն	հատուկ դպրոց
Իր կամքով/ցանկությամբ	13,5%	15,9%	22,4%	13,0%
Պատահաբար	,7%	-	-	-
Խաբեությամբ	29,7%	38,6%	36,7%	19,6%
Ստիպողաբար/բռնի	45,9%	29,5%	34,7%	52,2%
Ինչ-որ ծառայության դիմաց (նշել)	,7%	-	-	2,2%
Այլ (նշել)	,7%	2,4%	2,1%	-
Դժվարանում եմ պատասխանել	8,8%	13,6%	4,1%	13,0%
ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%

Աղյուսակ 5. Դատողությունների աղյուսակ

Դատողություններ	Միջինը 1 – շատ կարևոր է, 4 – բոլորովին կարևոր չէ
Անձնագիրը կամ այլ փաստաթղթերը պահել անձամբ	1,33
Ունենալ աշխատանքային պայմանագիր	1,54

Աշխատանքի պայմանների մասին ունենալ գրավոր տեղեկություն	1,56
Աշխատատեղի հասցեն, կոնտակտ հեռախոսներ	1,72
Իմանալ այդ երկրում ՀՀ դեսպանատան, միջազգային հատուկ կազմակերպությունների հասցեները	1,81
Պատճենահանել փաստաթղթերը, դրանք վերցնել իր հետ	1,85
Արտերկրում գտնվելու հասցեն և հեռախոսահամարները թողնել հարազատների մոտ	1,85
Բոլոր փաստաթղթերի պատճենները թողնել հարազատների մոտ	2,07
Նախապես փնտրել այնտեղ բնակվող ծանոթների	2,14
Հետաքրքրվել այնտեղ գնացած և վերադարձած անձանցից՝ լրացուցիչ տեղեկություններ հավաքել	2,15
Խոսել շատ մարդկանց հետ	2,19
Տեղեկություններ հավաքել պաշտոնական առյուծակներից	2,21
Ստուգել բոլոր ստացած տեղեկությունները	2,61

Որոշ առաջարկություններ իրագրելի ման աշխատանքների կազմակերպման առնչությամբ

- Նախապես կարելի է պատրաստել «Հարցերի և պատասխանների» ոչ ծավալուն նյութ, ներկայացնել շահագրգիռ կողմերին, սպա ուսուցիչներին/ուսուցանողներին:
- Կազմակերպել արտագնա դատավարության նիստեր, մասնավորապես երեխաների խնամքի հաստատություններում, այն շատ ուսանելի կլինի թե երեխաների և թե կողեկտիվի համար, կամ ստեղծել դատավարության վերաբերյալ ֆիլմ՝ ուսումնական նպատակների համար և ցուցադրել հաստատություններում, դպրոցներում:
- Երեխաների առավել ռիսկային խմբերի (մանկատուն/գիշերօթիկ/խնամքի կենտրոն/դժվարին պայմաններում հայտված երեխաներ, ծնողներ) իրագրելի միջոցները բարձրացնելու համար Երեխաների պաշտպանության բաժնի մասնագետներին քաջալերել, ստեղծել տեղական ցանցեր գործող կառույցների և ՀԿ-ների միջև և կոորդինացնել նրանց գործունեությունը:
- Որոնել հնարավորություն երեխաների հետ մարզերում աշխատող մասնագետների www.antitrafficking.am կայքում տեղադրված նյութերը հասանելի դարձնելու միջոցներ և, որպես միջանկյալ լուծում, թողարկել տպագիր ամսագիր/թերթ:
- Մարզերում երեխաների հետ աշխատող մասնագետների համար կազմակերպել կոնկրետ դեպքերի վերլուծություններ, որոնք կտան պրակտիկ գիտելիքներ:
- Երեխաների թրաֆիքինգի թեմայով լրագրողների համար հատուկ ուսուցում կազմակերպել և ուղեցույց պատրաստել. ինչպե՞ս լուսաբանել երևույթը: Մասնավորապես, քաջալերել մամուլը ներկայացնող մասնագետներին՝ մշակելու

այնպիսի ռազմավարություն, որը կամրապնդի մամուլի դերը՝ տրամադրելով բարձրակարգ, հուսալի և բարոյական չափանիշներին համապատասխանող տեղեկատվություն՝ շահագործման բոլոր կողմերի վերաբերյալ, որը կարող է դրական ներգործություն ունենալ վարքագծերի փոփոխման վրա:

Տուլայում՝ ՌԳ, գործարար մարդկանցից կազմված «Ծնողական խորհուրդը» մեկ առ մեկ այցելում է դժվարին պայմաններում հայտնված ընտանիքներին, որտեղ ծնողները վատ են վերաբերում երեխաներին, զբաղված են հարբեցողությամբ, և այլն, փորձում է օգնել կամ գոնե փրկել երեխաներին: Դրական փորձ, որը կարող է լուսաբանվել...»

Հետազոտության տրոյունքներից ելնելով, մի քանի նրբություններ անհրաժեշտ է հաշվի առնել իրազեկում կազմակերպելիս.

Որոշ ծնողներ արգելում են երեխաներին նման թեմաներով նյութեր կարդալ, կամ մասնակցել հանդիպումներին:

Երեխաների մոտ կարող է առաջանալ տազնապայնություն, վախ՝ գիտելիքներով զինվելու փոխարեն:

Ֆոկուս խմբերի մասնակիցները ըստ ոլորտների/կառույցների


ՈԼՈՐՏ/ԿԱՌՈՒՅՑ	#
ԵԻՊԲ	11
Ոստիկանություն	5
Հասարակական կազմակերպություն	24
Կրթություն	5
Մարզպետարան	2
ՏԻՄ	4
Մանկատուն	1
Հատուկ դպրոց/գիշերօթիկ	6
Զբաղվածություն	1
Խնամակալության հանձնաժողով	13
ԵՊՀ	1
Համայնքային կենտրոն/ծառայություն	2
Գնահատման կենտրոն	2
ԶԼՄ	1
ԸՆԴՀԱՆՈՒՐ	78


Փորձագիտական հարցմանը մասնակիցներ


1. **Չյունիկ Աղաջանյան**- Արտաքին գործերի նախարարություն
2. **Նելլի Դուրյան**, ՀՀ Ոստիկանություն
3. **Տիգրան Պետրոսյան**, - ՀՀ Ոստիկանություն
4. **Արսեն Մուրադյան**, Ոստիկանություն, Սյունիքի մարզ
5. **Ռուդիկ Վարդյան**, Ոստիկանություն, Լոռվա մարզ
6. **Օվսաննա Բարայան**- Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպություն
7. **Արթուր Դամբարյան**- ՀՀ դատախազություն
8. **Նազելի Ասրիյան**- Թրաֆիքինգի դեմ պայքարի Ռեսուրս Կենտրոն
9. **Դավիդ Թումասյան**- Թրաֆիքինգի դեմ պայքարի Ռեսուրս Կենտրոն
10. **Նվեր Սարգսյան**- Աշխատանքի Սիջազգային Կազմակերպություն
11. **Նունե Ասատրյան**- Սիգրացիայի Սիջազգային Կազմակերպություն
12. **Շավարշ Զոչարյան**- Կոտայքի Երեխաների Իրավունքների Պաշտպանության Բաժին
13. **Գագիկ Պողոսյան**- Արարատի Երեխաների Իրավունքների Պաշտպանության Բաժին
14. **Նորիկ Հովհաննիսյան**- Գեղարքունիքի Երեխաների Իրավունքների Պաշտպանության Բաժին
15. **Լեոնուհի Գևորգյան**- Վանաձորի խնամակալության հանձնաժողով
16. **Ենոք Շատիրյան**- “Հույս և Օգնություն” ՀԿ
17. **Հայարսիկ Էդիլյան**-“Հույս և Օգնություն” ՀԿ, Վանաձոր
18. **Հասմիկ Էդիլյան**- “Դեմոկրատիան այսօր” ՀԿ
19. **Առաքելյան**- Մեղրու շրջանի Ազարակի դպրոցի տնօրեն
20. **Արշավիր Դալարյան**- ՀԵԻԱ, հկ, Սյունիք
21. **Լավրիկ Արևշատյան**- Գավառի Թ՛1 հատուկ դպրոց
22. **Լուսինե Նաջարյան**- “Արևշատ” հիմնադրամ, Գեղարքունիք

Աղյուսակ Հ 6. Երեխաների/ընտանիքի վերաբերմունքը շահագործման տարբեր իրավիճակների մեջ հայտնված երեխաների հանդեպ (երեխաների տեսանկյունից)

Ինչպիսի՞ն կլինի քո /ընտանիքի/ վերաբերմունքը եթե հայտնի դառնա, որ քո ընկերը/բարեկամը հայտնվել է հետևյալ իրավիճակում	Անտարբեր		Ընթրմունով		Կարեկցամբով		Աջակցող		Արհամարհանական		Խուսափողական		Վերադարձական		Կրկնակի նային վերաբերմունքը կծաղրեն		Երբեք/սակարկող	
	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ	Երբեք	Չիջապատ
Աշխատանք առանց վարձատրության կամ չնշին վարձատրությամբ	3,2	40,3	34,4	14,1	23,0	11,1	32,5	11,7	2,9	12,6	3,4	3,7		0,9		0,2 0,5	0,7	4,9
Աշխատանք վտանգավոր պայմաններում (խոնավ, մութ և այլն)	2,4	37,1	30,4	13,9	27,9	14,8	31,5	12,8	1,0	10,7	4,8	4,1	0,5	1,0		0,5 0,2	1,5	4,9
Աշխատանք կամքին հակառակ	2,2	36,1	28,2	14,5	29,8	15,8	32,5	12,8	1,7	10,9	4,1	3,6	0,3	1,2		0,3 0,2	1,2	4,8
Աշխատանք ծնողների ունեցած պարտքի դիմաց	2,6	33,5	33,7	20,6	22,8	12,6	34,4	12,8	1,2	11,9	3,4	3,2		0,3		0,7 0,2	2,0	4,3
Ստիպողական մտրուցականություն	3,1	26,9	20,4	8,5	28,2	12,1	27,2	7,0	4,6	23,6	14,3	15,5	1,0	2,0		0,2 0,2	1,2	4,1
«Հարկահավաքություն» (հեռախոսի/գումարի/քանակաբաժնի իրի պահանջ)	4,3	26,4	17,5	6,3	28,1	12,6	28,2	7,1	6,6	20,6	10,7	9,9	0,3	8,7	0,2	0,3	4,1	8,2
Մերկ/կիսամերկ նկարահանվելը (նկարվել) ֆիլմում/տեսահոլովակում/ամսագրերում	4,9	19,4	11,7	2,2	15,1	2,6	15,0	1,2	16,7	35,5	29,4	27,7	0,3	3,9	1,2	1,9 0,7	5,6	4,9
Չվարձանքի վայրերում/պարող/մատուցող աշխատել	7,0	20,1	19,9	8,2	15,5	3,4	16,7	3,9	11,7	28,1	23,8	26,4	0,5	2,7	1,2	0,7	4,9	5,4
Զբաղվել մարմնավաճառությամբ	2,9	8,8	8,2	1,5	10,5	1,2	11,6	1,4	22,6	37,9	39,1	38,9	0,9	4,4		0,5 0,3	4,3	4,9
Գողության մղել	2,9	11,7	10,5	2,7	15,1	2,0	18,2	3,4	10,7	29,4	37,8	42,0	0,5	2,7	0,3	1,0 0,3	3,9	4,6
Օգտագործել/տեղափոխել/ վաճառել քնիանյութեր	3,1	8,5	9,0	1,9	10,4	1,5	16,2	3,9	9,9	22,8	48,0	51,4	0,5	3,4		0,3 0,2	3,1	6,1
Տեղափոխվել այլ բնակավայր աշխատելու նպատակով	7,0	26,5	27,0	11,4	19,6	9,2	20,7	7,7	3,7	15,0	16,2	22,4	0,2	0,5		0,3 0,3	5,6	6,6
Երեխաների առևանգում	2,0	8,0	8,7	6,1	40,0	34,0	29,8	18,2	1,5	10,7	14,6	16,5		0,2		0,5 0,3	3,4	5,4







Ի՞նչ են անում վատ մարդիկ երեխամաների համոզելով



37

Ի՞նչ են անում լավ մարդիկ երեխամաների համոզելով




Ի՞նչ են անում վատ մարդիկ երեխաների հանդեպ



Ի՞նչ են անում լավ մարդիկ երեխաների հանդեպ






Ի՞նչ են անում վատ մարդիկ երեխաների համդեպ




Ի՞նչ են անում լավ մարդիկ երեխաների համդեպ

Ի՞նչ են ամուսնվառ մարդիկ երեխաների համրեպ



Ի՞նչ են ամուսնվառ մարդիկ երեխաների համրեպ





Ի՞նչ են անում լավ մարդիկ երեխաների հանդեպ